ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒՆԵՑԻ



ՉԱՐԸ ՏԱՆՋԱՆՔԻ ԵՆԹԱԿԱ Է

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ -1996

ՀՈԳԵՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

Բ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոն

ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒՆԵՑԻ

Ամենայն չար տանջելի

Գրիչ՝ Ներսես աբեղայ
Ստացող՝ Թովմայ Մեծոփեցի

Մեծոփայ վանք, Մատնավանից վանք
1440 թ

ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒՆԵՑԻ

ԱՄԲՈՂՋ ՉԱՐԸ ՏԱՆՋԱՆՔԻ ԵՆԹԱԿԱ Է

Բ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
1999

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն Ա Խ Ա Բ Ա Բ Ա Ն

Եւ ծանիջիք զճշմարտութիւնն, եւ ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ (Յովհ. Ը.32):

Այս ծավալով համեմատաբար փոքր գրքում արծածված են մարդկությանը սերնդից սերունդ հուզող և իրենց հետաքրքրությունը երբեք չկորցնող մի շարք հարցեր, որոնք են՝ բարու հավիտենականությունն ու չարի ծագումը, նրանց հարաբերությունը մարդկային բնության ու մարդկային բնության ու կամքի հետ, ինչպես նաև չարի պատժելիությունը և այլն: Այսօր հոգևոր զարթոնքի պայմաններում նման բարդ խնդիրների լուսաբանումն ու իմաստավորումը, հոգևոր ճանաչողության դիրքերից, առավել քան երբևէ արդիական է: Բանն այն է, որ շատերն են՝ թե՛ նորադարձներից և թե՛ աշխարհը իմաստասիրաբար ճանաչել ցանկացողներից հաճախ միևնույն հարցը տալիս. «եթե Աստված բարի է, ապա չարն ինչպե՞ս ծագեց: Ինչո՞ւ Աստված չարին չի ոչնչացնում: Ինչո՞ւ մեր կյանքում այսքան թշվառություն կա»:

Անշուշտ Աստվածաշունչն այս հարցերին հստակ ու սպառիչ պատասխան է տալիս: Եվ որպեսզի այդ պատասխանը յուրաքանչյուրիս սրտին ու մտքին հասնի, Եկեղեցու հայրերն ու վարդապետներն այն շարադրել են և ներկայացրել բոլոր նրանց

համար, ովքեր հավատում են Ավետարանի խոսքերին: Այսօր էլ այդ երկասիրությունները ոչ միայն չեն կորցրել իրենց ճանաչողական ու վարդապետական արժեքը, այլև, չնորհիվ իրենց ամբողջականության ու ճշմարտության, դեպի իրենց են ձգում ու դեռ պիտի ձգեն ընթերցողների միտքը:

Այդպիսի մի երկ է «Ամենայն չար տանջելի»-ն, որը երկար ճանապարհ է անցել, մինչև որ հասել է մեզ: Այն սկզբում Դավիթ Անհաղթի «Սահմանումների գրքի» մի փոքրիկ մասն է կազմել՝ գրված առաջին հայացքից ոչ այնքան հասկանալի իմաստասիրական բանաձևերով:

Նշենք, որ վերջին շրջանի որոշ գիտնականներ կարծիք են հայտնել, թե այս երկը ոչ թե Դավիթ Անհաղթի, այլ Գրիգոր Նյուսացու գրչին է պատկանում: Եվ սա Անհաղթի հետ կապված միակ վիճելի կետը չէ: Որոշ գիտնականներ կասկածի տակ են առել մինչև իսկ նրա հայ և քրիստոնյա լինելը:

Այնուհետև միջին դարերում կարիք է եղել մեկնաբանել այս երկրից որոշ արտահայտություններ, որ իր ժամանակին կատարել է Ներսես Շնորհալին: Որոշ ժամանակ անց, սակայն, զգացվել է ավելի հանգամանալից մեկնաբանությունների կարիքը, որը և ստանձնել է Առաքել Սյունեցին:

Չնայած Առաքել Սյունեցու «Ամենայն չար տանջելի»-ն ամբողջական և կուռ կառույց ունի, սակայն ակնհայտ է այն փաստը, որ նրա մեկնությունների հիմքում ընկած է Ներսես Շնորհալու համանուն գործը: Սյունեցին մեծավ մասամբ պահպանել է Շնորհալու մտքերը և անգամ նույնությամբ մեջբերումներ արել, իսկ որոշ հարցերի էլ ինքնուրույն լուծումներ տվել, խորացնելով ու ամբողջացնելով գործը:

Սակայն Սյունեցին սույն երկասիրության մեջ ընդգրկվարծ չեն Շնորհալու որոշ խորհրդածություններ, որոնք, անկասկած, շատ հետաքրքիր են: Այդ պատճառով որոշեցինք դրանք ևս

ներկայացնել ընթերցողին՝ զետեղելով այն Սյունեցու համապատասխան մեկնություններին զուգահեռ, խոսքի վերջում հեղինակի անունը նշելով:

«Ամենայն չար տանջելի» -ն ԺԷ և ԺԸ դարերում բավականին հայտնի է եղել: Այդ մասին են վկայում մեզ հասած այդ շրջանում ընդօրինակված մոտ 60 ձեռագրեր, որոնցից 50-ը Սյունեցու, իսկ 10-ը Շնորհալու հեղինակությամբ են:

Քանի որ մեր նպատակը զուտ քարոզչական է, և ի սկզբանէ բանասիրական հետազոտություն կատարելու խնդիր չենք ունեցել, ուստի բաց ենք թողել քննական բնագիր կազմելու հարցը, սակայն գրքի վերջում տալիս ենք Առաքել Սյունեցու «Ամենայն չար տանջելի» -ի համեմատական բնագիրը № *1849, 1110, 1689, և 1762 ձեռագրերի: Մնացած ձեռագրերն ուղղակի հպանցիկ են դիտվել:*

Մեր օրերում այս գործին ձեռնամուխ եղավ Առաքել աբեղա Քարամյանը՝ կառուցելով վերջինիս վրա իր վարդապետական թեզը:

Նախերգանք

Դավիթ Անհաղթի Սահմանումների գրքի մասին

Դավիթ Մեծը և Եզնիկ կողբացին գնացին Աթենք և լսեցին ու տեսան վարդապետների վարքը և զայրացած մեղադրեցին նրանց: Իսկ սրանք, զայրացած, հայերին կարճոգի և չարաճճի ասացին, նաև հակառող ու փորձող և խորհուրդ անելով արգելեցին այլևս որևէ հայի Աթենքում ուսանել, քան միայն իմանալ առավել քան այլ ազգեր: Եվ այս պատճառով հայերին անարգ էին նկատում:

Եվ հույների մեջ շատ էր հակառակությունը՝ հանձինս պիրհոնացիների ու աքեսացիների, որոնք ընդդիմություն էին կոչվում, այսինքն՝ հակառակվողներ: Սրանք սովորություն ունեին Սուրբ գրքից շատ խոսքեր հեգնելու: ինչպես օրինակ, Տերունական խոսքը. **«Երանի սգավորներին ...»**: Ասում էին. «Եթե աղքատներն ու սգավորները երանելի են, ապա ուրեմն փարթամները և ուրախները եղկելի՞ են»:

Նույնպես Եսայի մարգարեի խոսքերն էին նրանց զարմացնում, ինչպես, օրինակ՝ **«Բոլոր մարդիկ սուտ են ...»**: Ասում էին՝ «Չէ՞ որ ինքն էլ մարդ է»:

Նմանապես և իմաստությանն ասում էին անգո և անէական, պատահական ու անսահման:

Դավիթն աս գիրքը գրեց ցույց՝ տալու համար, թե ինչպիսի՞ կարողություն ունեն հայերը՝ ասելով՝. «Դուք ինչո՞ւ ես սա անտեսում և հայերիս ամբաստանում»:

Ոմանք ասում էին, թե տեղում գրեց և հետը բերեց, ոմանք էլ, թե գրեց և մեզ ուղարկեց, ինչպես Ստեփանոսը՝ իր տոնական թղթերը:

Սրանով հանդերձ իմաստունի առաջիկա խոսքը՝ քաղված «Սահմանումների գրքից»:

Դավիթ Իմաստասերի խոսքի մեկնությունը՝ ասված Ներսես Հայոց Կաթողիկոսի կողմից, Ստեփանոս Իմաստասերի խնդրանքով

Դավատով և սիրով հոգևորը փնտրողներին պետք է հոժարությամբ տալ՝ ըստ Տիրոջ հրամանի. **«Տուր նրան, ով քեզնից խնդրում է»** (Մատթ. Ե 42)՝ չնայելով անձի աղքատությանը, այլ նայելով խնդրողի կամքի ջերմությանը, որովհետև արդար է հրաման Տվողը՝ Նա, Ով յուրաքանչյուրից պահանջում է իր կարողության չափով՝ մեծահարուստներից շատ, իսկ աղքատներից՝ քիչ: Ըստ որում և մենք, ըստ մեզ Տվողի Խոսքի, տալիս ենք խնդրո առարկա մեկնությունը, որը չնայած քիչ է քանակով, սակայն բավական է որակով: Զորության իմաստն ամբողջովին բացահայտելու նպատակով չձեռնարկեցին սրանում պարունակվածի մեկնությունը, այլ միայն այնքանով, որքանով մեր տկարությունը մեզ թույլ կտա, որն արդյունք է անձիս անցած ճանապարհներում պատահածներին և աշխարհի ծփալից հոգսերի տակ խամրած մտքերին:

Իսկ կատարյալ տեսությունը թողնում ենք այլոց՝ իմաստությամբ և կատարելությամբ ավելի հզորներին, մանավանդ որ այն պատշաճի տեղին և ժամանակին: Իսկ մեր կողմից դնում ենք պարզ և համառոտ խոսքերով մի մեկնություն՝ փոքրերով մեծամեծերը կշռելով:

Նախ պարզենք, թե ի՛նչ պատճառով իմաստասերի կողմից բարու և չարի մասին այսպիսի խոսքեր ասվեցին: Երկրորդ՝ թե ի՛նչ է բարին, և ի՛նչ է չարը, և որտեղի՛ց է նրանց սկիզբը:

Եվ սրանք են պատճառ եղել իմաստասերի համար գրելու սույն [երկը], որն այս խոսքերով ամբողջացել է:

Հին ժամանակներում Պիրհոն անունով ոմն իմաստակ, նաև նրանք, ովքեր հետագայում նրան հետևեցին, ասացին, թե աստվածային իմաստություն գոյություն չունի, որպես պարզև մարդկանց՝

վերևից իջաց:

Եվ ոմանք էլ՝ «Չարն անեղ[1] է» ասացին և գրեցին նաև որպես բնություն ունեցող կամ բնությունից [գոյացած]: Ոմանք էլ՝ չարը, ինչպես և բարին, մարդկանց սրտերում Աստծուց ազդված ասացին:

Ահա այս պատճառները հարկադրեցին ճշմարտախոհ իմաստասերին, որը հայկազյան ծագում ունի և հայոց աշխարհից է, և ուսուցանել է հելլենական իմաստասիրությունը, այսպես գրել ընդդեմ այս խնդրի, որպեսզի մարդիկ չմոլորվեն այս դժնդակ խաբեությամբ և չկարծեն, թե չարը անեղ է, կամ Աստծուց է եղել: Արդ, այս իմանալով ասենք՝ ի՞նչ է բարին և ի՞նչ է չարը, և որտեղի՞ց են [ծագում], և ո՞րն է սրանցից առաջինը: Եվ երբ իմանանք այս ամենը, դյուրությամբ կքննենք մեր առջև դրված խնդիրը:

[1] *Անեղ -եղ արմատից է, որը նշանակում է ժամանակի մեջ եղած՝ եղական կամ գոյացած, գոյություն ստացած, արարած: Ան նախածանցը ժխտում է գոյություն ստանալու հանգամանքը և դիտարկում է որպես ինքնագո, ինքնեղ, ինչը հատուկ է միայն Աստծուն:*

ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒՆԵՑԻ

ԱՄԲՈՂՋ ՉԱՐԸ ՏԱՆՋԱՆՔԻ ԵՆԹԱԿԱ Է

Ղարին [սրբազնություն] Տեր Առաքել Սյունյաց եպիսկոպոսի այն խոսքի տեսությունը, որ ասում է. «Ամբողջ չարը տանջանքի ենթակա է»:

Հարց. Ո՞րն է այս խոսքի իմաստը՝ «Ամբողջ չարը տանջանքի ենթակա է»: Պատասխանելու համար անհրաժեշտ է երեսուներեք հարց քննել:

Նախ՝ ի՞նչը հարկադրեց փիլիսոփային գրել այս:

Երկրորդ՝ ի՞նչ է բարին, կամ ի՞նչ է չարը:

Երրորդ՝ որտեղի՞ց են սկիզբ առնում բարին և չարը:

Չորրորդ՝ ինչո՞ւ Աստված թույլ տվեց, որ չարը լինի:

Հինգերորդ՝ ի՞նչ է նշանակում հետևյալ արտահայտությունը՝ «Ամբողջ չարը տանջանքի ենթակա է»:

Վեցերորդ՝ ի՞նչ է նշանակում հետևյալ արտահայտությունը՝ «Ոչ մի տանջված անապական չէ»:

Յոթերորդ՝ ի՞նչ է նշանակում հետևյալ արտահայտությունը՝ «Անեղն ապականելի չէ»:

Ութերորդ՝ ինչո՞ւ է ասում՝ «Չարն ապականելի է»:

Իններորդ՝ ինչո՞ւ է ասում՝ «Չարն անեղ չէ»:

Տասներորդ՝ ինչո՞ւ է ասում՝ «Ոչ ոք բնությամբ չար չէ»:

Տասնմեկերորդ՝ ինչո՞ւ է ասում՝ «Չարագործությունն է ոչ ոքի գոյության չձեռնարկելը»:

Տասներկուերորդ՝ ինչո՞ւ է ասում՝ «Միմյանց դիմակայող բոլոր չարերը միմյանց ապականիչ են»:

Տասներեքերորդ՝ ինչո՞ւ է ասում՝ «Անեղ ոչինչ փոփոխելի չէ»:

Տասնչորսերորդ՝ ինչո՞ւ է ասում՝ «Բարին անեղ չէ»:

Տասնհինգերորդ՝ ինչո՞ւ է ասում՝ «Անեղը որևէ մեկի ապականությունը ցանկացող չէ, ոչ էլ ապականող է»:

Տասնվեցերորդ՝ ինչո՞ւ է ասում՝ «Չարն ապականություն ցանկացող է»:

Տասնյոթերորդ՝ ինչո՞ւ է ասում՝ «Չարն անեղ չէ»:

Տասնութերորդ՝ ինչո՞ւ է ասում՝ «Իսկ Աստվածաշունչը տանջանքների է մատնում չարերին»:

Տասնիններորդ՝ ինչո՞ւ է ասում՝ «Տանջանքների ամեն մատնված այլայլելի է»:

Քսաներորդ՝ ինչո՞ւ է ասում՝ «Անեղ ոչ ոք չի այլայլվում»:

Քսանմեկերորդ՝ ինչո՞ւ է ասում՝ «Չարից ոչինչ անեղ չէ»:

Քսաներկուերորդ՝ ինչո՞ւ է ասում՝ «Ովքեր բոլորովին ընդդիմանում են, ընդհանուր ոչինչ չունեն»:

Քսաներեքերորդ՝ «Ինչպես ամեն հարկավորության մեջ, ինչ որ մեկի մեջ գոյացել է, մյուսի մեջ չի գոյանում»:

Քսանչորսերորդ՝ «Անեղ լինելով՝ բարությունը գոյացյալ է»:

Քսանհինգերորդ՝ ի՞նչ է նշանակում հետևյալ արտահայտությունը. «Եթե չար են, ապա սրանից ոչինչ չի գոյանա՝ բացի չարությունից»:

Քսանվեցերորդ՝ որ ասում է. «Ամեն ոք, ով իրավացիորեն փափագում է, հարմար ձևով ունենում է իր փափագածը, եթե հաճույքով է բաղձում»:

Քսանյոթերորդ՝ որ ասում է. «Եթե ապականում է, ապա ինքն էլ է ապականվում»:

Քսանութերորդ՝ որ ասում է. «Ապականվածն էլ անեղ չէ»:

Քսանիններորդ՝ որ ասում է. «Եթե չարությունն անեղ լիներ, ապա ըստ բնության առավել չարը կգոյանար»:

Երեսուներորդ՝ որ ասում է. «Բնությամբ ոչ ոք չի մեղանչում»:

Երեսունմեկերորդ՝ որ ասում է. «Չարը մեղանչում է»:

Երեսուներկուերորդ՝ որ ասում է. «Ով չի մեղանչում, բամբասանքի ենթակա չէ»:

Երեսուներեքերորդ՝ որ ասում է. «Սատանան բամբասանքի ենթակա է»:

1

Նախ ասենք, թե ի՛նչը մղեց իմաստունին այս ամենի, այ սինքն՝ երեք պատճառների մասին գրելու:

Նախ՝ գրեց ընդդեմ Պիրհոնացիների[2], որոնք ասացին, թե իմաստությունը, որ վերևից իջած աստվածային պարգև է, գոյություն չունի:

Երկրորդ՝ ընդդեմ նրանց, ովքեր ասացին, թե չարն անեղություն է և բնությամբ ունեցված [մանիկ], այսինքն՝ ընդդեմ Մանիքոսի[3], որն ասաց, թե աշխարհը երկու սկիզբ ունի. մեկը՝

[2] Պիրհոն (նաև Պիհոն) -Սկեպտիկական փիլիսոփայության ներկայացուցիչ է: Ապրել է Ք. ա. 360-270 թթ.: Մանանկցել է դեպի Ասիա Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներին: Գրավոր աշխատանքներ չի թողել: Նրա ուսմունքը չարադրել է Թիմոն Փիլասացին (Ք. ա. 320-230 թթ.): Պիրհոնը բացատում է ամեն մի դիտողություն՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ զգայարանների միջոցով իրերը մեզ չեն ներկայանում այնպես, ինչպես իրականում գոյություն ունեն: Քանի որ ըմբռնումը հարաբերական է, ուստի գոյություն չունեն ո՛չ վատը, ո՛չ լավը, ո՛չ արդարացին, ո՛չ անարդարացին: Ոչ մի բանի մասին չպետք է վստահորեն արտահայտվել, այլ պետք է հրաժարվել դատողություն անելուց, որովհետև ո՛չ զգայությունը, ո՛չ բանականությունը ճշմարտությունը մեզ չեն հայտնում (Ա. Առաքելյան, Հունական գրականության պատմություն, Երևան, 1968 էջ 530-531):

[3] Մանիքեենիզմը մի կրոնական շարժում է՝ հերետիկոսություն, որն ընդգրկում է զանազան գաղափարներ՝ վերցված քրիստոնեությունից, զրադաշտից ու բուդդիզմից: Այն ծագել է երրորդ դարում, Պարսկաստանում: Անվանումը ծագել է շարժման հիմնադրի՝ Մանիի անունից, որը ծնվել է Ք. հ. 216 -ին, Հյուսիսային Բաբելոնում: Մանիքեենիզմը դուալիստական կրոնական շարժում է, քարոզում է բազմաստվածություն, երկու անստեղծ բնություն՝ բարու և չարի: Հորդորում է պաշտել արեգակը՝ ասելով, որ այն Քրիստոսի մարմինն է, իսկ լուսինը՝ արյունը: Քրիստոսին մարմնով ծնված չի ընդունում, այլ թվացյալ է ասում և արհամարհում օրենքներն ու մարդարեությունները: Մկրտությունն ընդունում է միայն յուղով, իսկ հաղորդությունը՝ միայն հացով: Մահացածի փոխարեն նրա մերձավորին է մկրտում՝ այն մտայնությամբ, որ դա հանգուցյալին կփոխանցվի: Ամուսնությունը պիղծ է համարում: Արգելում է կենդանական ծագում ունեցող կերակուրներ

բարի ու անեղ, որ է՝ Աստված, և մյուսը՝ չար ու անեղ, որպես թե մեկ այլ չար աստված:

Նաև ասում է, որ Բարի Աստված է արարել, այն ինչ որ բարի կա, այսինքն՝ երկինքը, լույսը, կյանքը և աշխարհի բոլոր բարությունները: Իսկ չար աստվածն արարել է բոլոր չարիքները՝ մահը, հիվանդությունը, չարչարանքը, ինչպես նաև դժոխքն ու ապականությունը: Նաև հին օրենքն է չար աստվածը տվել, ինչպես, օրինակ՝ **«Աչքի դիմաց՝ աչք, ատամի դիմաց՝ ատամ,... և արյան դիմաց՝ արյուն»** (Ելք ԻԱ 24): Իսկ Քրիստոս Բարի Աստծու որդին է, որն այս բնությունը բարի արեց: Եվ ասում էր նաև, թե չարը բնությամբ է չար, ում մեջ էլ որ չարը բնավորված լինի:

Երրորդ՝ նրանց դեմ գրեց, ովքեր ասացին, թե Աստված մեկ է, բայց և՛ չարը, և՛ բարին նրանից եղան: Այսպիսով, ոմանք չարին անեղություն վերագրեցին, իսկ ոմանք էլ՝ չարն անեղ Աստծուց է, ասացին:

Եվ այս պատճառով հարկադրվեց այս ամենը գրել, որպեսզի մարդիկ չմոլորվեն սատանայի այս դժնդակ խաբեություններով, թե չարն անեղ Աստծուց է:

ուտելը և գինի խմելը: Չի ընդունում հարությունը: Իրեն «մխիթարիչ» է անվանում և «եկեղեցու գլուխ»: Տոնացույցում իր տոնն է հաստատել, որը նրա հետևորդները նշում էին մարտ ամսվա մեջ: Ճգնավորական կյանքի ջատագով է: Ճանապարհորդել է Արևելքի երկրներում: 278 թ. պարսից թագավորի հրամանով նրան մորթազերծ են արել և մորթը հարդով լցնելով կախել քաղաքի դռան պարսպից: Եվ սրա պատճառն այն է եղել, որ չի կարողացել աղոթքով բուժել թագավորի հիվանդ որդուն, այլ, ընդհակառակը, ձեռքը հիվանդի վրա դնելուն պես՝ վերջինս վախճանվել է:

- -

- -

Երկրորդ հարց. *Աստծու բարության և անեղության մասին:*

Բոլոր այս էությունների միայն աստվածային բնությունն է անեղ, անսկիզբ և բոլոր այս եղյալների[4] պատճառը: Եվ չի կարող երկու սկիզբ լինել: Ինչպես կարկինը մի կետից սկսելով է շրջան գծում, այնպես էլ ամեն թվի սկիզբը միակից է: Այսպես էլ ամեն ինչ առաջացել է մի էակից և ոչ թե՝ երկու: Հետևաբար՝ մեկն է բոլոր սկզբնավորների անսկիզբը: Անեղ և անսկիզբ միայն Նա է, այսինքն՝ Աստված, որ բարի[5] է և բնությամբ է բարի, այսինքն՝ կատարյալ ու անփոփոխ բարի է, և ամենքի Բարերարը՝ ըստ հետևյալ խոսքի. ***«Բարի չէ ոչ ոք, այլ միայն՝ Աստված»*** *(Մարկ. Ժ 18): Իսկ թե չարն ի՞նչ է, այսինքն՝ ինչո՞ւ է ասում՝ մեկը բանական կենդանիներից, որ նախ բարի ստեղծվեց, և իր ցեղակիցների հետ լույս և Արուսյակ անվանվեց (հմմտ. Եայ. ԺԴ 12):*

Աստված աղբյուր է բարության, քանի որ աղբյուրի նման հեղեղեց բարին՝ արարելով բարի արարածներ, բանականներին տիրական բնություն տալով, իսկ անբաններին՝ ծառայական, սակայն բոլորին էլ բարի ստեղծեց, որոնց մեջ չարի նշույլ չկա (Ներսես Շնորհալի):

[4] *Եղական - Այն բոլոր երևացող և աներևույթ բնություններն են, որոնք չկային և Աստծու հրամանով եղան, ստեղծվեցին (Ն. Շնորհալի, Թուղթ ընդհանրական):*

[5] *Առաջին բարուն՝ Աստծուն չկա ոչինչ հակառակ, քանի որ Նրա էությունն անեղ է, միակն է և չունի ներհակ իրեն: Ներհակությունը եղականներին է հատուկ (Եվագր Պոնտացի, Ընդդեմ արտաքին բանասեղծների):*

Երրորդ հարց. *Ո՞րն է նրա չարության պատճառը:*

Պատասխան. *Նրա չարության պատճառները երեքն են:*

Նախ՝ կիրարկեց անձնիշխանությունը[6]:

Երկրորդ՝ ապստամբեց Աստծու դեմ:

Երրորդ՝ համակվեց հպարտության[7] ախտով և Աստծուն հակառակ կոչվեց, երկնքից ընկավ և չարությունը սիրեց: Եվ Աստծուց հեռանալով՝ վեց կերպով ընդդիմացավ Նրան:

Այսինքն՝ Աստծու բարությանը հակառակ՝ չարացավ:

Լույսին հակառակ՝ խավարեց:

Իմաստությանը հակառակ՝ հիմարացավ:

Ճշմարտությանը հակառակ՝ սուտ եղավ:

Կյանքին հակառակ՝ մահ եղավ:

Արարչությանը հակառակ՝ ապականիչ եղավ և բազում այլ այսպիսի հակառակությունների վերածվեց:

Եղավ չարիքներ հնարող և երկրածին բանականներիս չարության հայրը դարձավ:

Այսքանը բարու և չարի վերաբերյալ, և այն մասին, թե ո՞վ է անեղն ու անսկիզբը և բնությամբ բարին, այսինքն՝ Աստված, և թե ի՞նչ է չարը, այսինքն՝ սատանան, որ հետո չարացավ:

Անձնիշխանությունը կիրարկելով ապստամբեց Աստծու դեմ:

[6] *Անձնիշխանությունը բանականության հետ մտավ, քանի որ հնարավոր չէ լինել բանական՝ առանց անձնիշխանության: Սա լինում է երկու տեսակի՝ տեսական և գործնական: Տեսական՝ երբ ամեն ինչ քննում է: Իսկ գործնական, խոհեցողական՝ երբ նախ խորհում է գործի մասին, գտնում ճիշտը և ապա կատարում: Նաև նախ խորհում է, ապա խոսում: Եվ ով խորհում է, նա է գործի տերը, այսինքն՝ անձնիշխանը: Հաճախ մեղադրում են Աստծուն, թե ինչո՞ւ մարդուն այնպես չստեղծեց, որ միայն բարին գործեր՝ չիմանալով, որ մարդը բանական է, և ով բանական է՝ ընդունակ է բարու և չարի, և ինչ կամենում է, այն է անում: Կամ պետք էր անձնիշխան չլինել և հարկադրված միայն մեկը գործել:*

[7] *Հպարտություն - Երբ անձը միայն իրենից է հաճություն ստանում:*

Հպարտության ախտով համակվեց և սատանա կոչվեց, որ նշանակում է՝ հակառակորդ, քանի որ Արարչին հակառակվեց և փայլակի նման երկնքից ընկավ, բարուց հեռանալով՝ սիրեց չարությունը և եղավ չար ու չար անվանվեց, այն, որ մինչ այդ բարի էր: Եվ առաջինը եղավ գտնող չարի, և չարի հայրը դարձավ: Իսկ գտած չարությունը երկրածին բանականներիս սրտերում սերմանեց, որն Արարիչը թույլատրեց, ըստ Իր անքննին դատաստանի: Ախորժեց, որ չարության ապատամբություն լինի և պատերազմեց մարդկանց դեմ:

Այս աշխարհի յոթ դարերի համար ժամանակ և օր է հաստատված, որպեսզի տանջվի չարն իր չարության ու մարդկային ցեղը չարացնելու համար, որի տանջանքի կերպը միայն ամբողջ բնության Արարիչը գիտե: Ինչպես Տերն ասաց, թե անշեջ հրով [պիտի տանջվի սատանան], որը պատրաստված է նրա համար, իսկ ուրիշներն էլ ասացին՝ սառնամանիքով, որպես այլ աննյութական և նորագույն տանջանք:

Եվ ինչպես որ ամենքի սկիզբը, պատճառը և ճշմարիտ բարու ուսուցիչն Աստված է, այդպես էլ սատանան է ամբողջ չարի սկիզբը, պատճառը և ուսուցիչը: Եվ ճշմարիտ բարին ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ միայն Բարի Աստծու կամքը կատարելը: Իսկ Աստծու կամքն այն է, ինչ սովորեցնում են Նրա պատվիրանները: Նույնպես և չարությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ չար սատանայի կամքը կատարելը. և սատանայի կամքը հավատքով ու վարքով դուրս է Աստծու կամքից: Եվ ինչպես Աստված բնությամբ կատարյալ ու ծայրագույն բարի է, նույնպես և սատանան իր կամքով կատարյալ ու ծայրագույն չար է:

Իսկ մարդիկ, ովքեր բարու կողմնակից են, Աստծու նման կատարյալ բարի չեն (քանզի Նա անխառն է չարից), այլ մասամբ են բարի, մասնավոր առավելություն և պակասություն ունեն իրենց մերձավորների նկատմամբ: Նույնպես՝ ովքեր հարում են չարին, մասամբ են ընդունակ չարության, առավել կամ նվազ, քան իրենց ընկերը, և սատանայի նման ամբողջապես անխառն չեն բարուց: Եվ այս նկատի ունի իմաստունը, երբ խոսում է բարու և չարի մասին (Ներսես Շնորհալի):

4

Զորրորդ հարց. Ինչո՞ւ Աստված թույլ տվեց, որ սատանան լինի: Այս կապակցությամբ չորս հարցեր կան:

Նախ՝ եթե Աստված գիտեր, որ սատանան չար է լինելու, ինչո՞ւ նրան ստեղծեց:

Երկրորդ՝ ինչո՞ւ չկանխեց սատանայի անձնիշխան կամքը, քանի որ նրա չարության պատճառը դա եղավ:

Երրորդ՝ ինչո՞ւ նրան անգո չդարձրեց, այլ թույլ տվեց նրան այս ամենն անել:

Զորրորդ՝ ինչո՞ւ հետո չխափանեց նրա անձնիշխան կամքը, որպեսզի չկարողանար չար լինել:

Նախ այն մասին, թե ինչո՞ւ ստեղծեց նրան, որը չարիքների սկիզբ էր լինելու: Աստված ոչ միայն բարի է, այլև գիտուն: Ու թեպետ գիտեր, որ նա չար է լինելու, այդուհանդերձ Աստծու իմացությունը չարգելեց բարությանը նրան ստեղծել, որովհետև Աստված բոլոր արարածներին իր բարությամբ արարեց, որպեսզի վայելեն իր բարիքները:

Եվ դարձյալ, քանզի երկուսն էլ Աստծու բարիքներն են՝ և՛ բարությունը, և՛ գիտությունը, ապա դրանք չհակառակվեցին միմյանց, որովհետև բարիքները ներհակ[8] չեն միմյանց, այլ օգնական: Այդ իսկ պատճառով Աստծու գիտությունը չհակառակվեց

---

[8] Ներհակ -Հակադիր: Հակադրությունը չորս տեսակ է լինում.

ա) առնչությամբ, բ) ներհակությամբ, գ) որպես ունակություն և պակասություն, դ) հաստատություն և ժխտում:

ա) Առնչության օրինակ են՝ հայրն ու որդին, տերն ու ծառան: Այստեղ մեկի բացակայությունը ժխտում է մյուսի գոյությունը, քանի որ եթե չլինի հայրը, չի լինի և որդին, ու եթե չլինի որդին, կբացակայի և հայրությունը:

բ) Ներհակները միմյանց վերացնում են: Ներհակության օրինակ են բարին ու չարը: Այս դեպքում մեկի բացակայությամբ չի ժխտվում մյուսի գոյությունը:

գ) Ունակության և պակասության օրինակ են գիտությունը և տգիտությունը:

դ) Հաստատության և ժխտման օրինակ են՝ լինելը և չլինելը, նստելը և չնստելը:

Աստծու բարությանը՝ արգելելու համար նրա ստեղծումը: Ահա թե ինչու Աստծու բարի գիտությունը թույլ տվեց Աստծու բարի կամքին բարություն անել:

Եվ դարձյալ՝ Աստծու գիտությանը հայտնի էր, որ Աստծու բարությունը ամենքին ըստ բնության[9] բարի է ստեղծել: Իսկ եթե որևիցե մեկը իր բնությունից դուրս, իր կամքով հոժարում է չարին, ապա անբամբասելի է բարի բնություն Ստեղծողը: Քանի որ բնությունը կամքի նկատմամբ առաջնային է, հետևաբար անհրաժեշտ է, որ կամքը հնազանդվի բնությանը, և հարկ չկա, որպեսզի բնությունը հնազանդվի կամքին: Իսկ եթե մեկն իր անձի դեմ գործում է այս մեծ հակառակությունը, այսինքն՝ բնությունը ծառայեցնում է կամքին, ապա նման դեպքում անմեղադրելի է Աստված, որ նրան բարի բնություն է տվել, որի համար Աստծու գիտությունը արգելք չի եղել Աստծու բարությանը, այլ թույլ է տվել ստեղծել նրան և նրա նմաններին՝ մարդկանց մեջ եղող չարերին:

Երկրորդ՝ իսկ ինչո՞ւ չխափանեց նրա անձնիշխան կամքը, որը և նրա կորստյան պատճառը դարձավ, քանի որ եթե ազատ կամք չունենար, չէր կորչի:

Նախ՝ Աստված իր ամբողջ բարությունն իր ստեղծածներից չխնայեց, այլ տվեց նրանց բարություն և ազատություն, այսինքն՝ ստեղծեց բարի բնություն և տվեց անձնիշխան ազատ կամք: Աստված հակառակ չէ բարուն, որ իր ստեղծածներին զրկեր այս երկու բարիքներից, ուստի բարի բնություն և անձնիշխան կամք տվեց նրան:

[9] Աստվածային բնություն՝ վենդանի, անսկիզբ, անմարմին, անտես, անսահմանելի, բանական, մտավոր, անայլայլելի, անփոփոխելի, անմեղ, անմահ:

Հրեշտակների բնություն՝ վենդանի, սկզբնավոր, անմարմին, սահմանելի, բանական, մտավոր, այլայլելի, փոփոխելի, դժվարամեղ, անմահ:

Մարդկային բնություն՝ վենդանի, սկզբնավոր, տեսանելի, սահմանելի, բանական, մտավոր, այլայլելի, փոփոխելի, դյուրամեղ, մահկանացու:

Անասունների բնություն՝ վենդանի, սկզբնավոր, մարմնական, սահմանելի, անբան, անմիտ, այլայլելի, փոփոխելի, անմեղ, մահկանացու:

Դարձյալ՝ բնությունը բարի ստեղծեց, որովհետև բնությունն է նրան բարի լինել սովորեցնում: Իսկ անձնիշխան կամք տվեց, որպեսզի իր անձինիշխան կամքով հնազանդվի Բարի Ստեղծողին և իր Պարգևատուին և առավել վարձատրվի: Որովհետև ով կամովին չի ծառայում, չի էլ վարձատրվում: Դրա համար նրան բարի բնություն և անձնիշխան կամք տվեց:

Երրորդ՝ այնուհետև ինչո՞ւ չխափանեց նրա անձնիշխան կամքը, որպեսզի չկարողանար չար լինել:

Որովհետև Աստված Իր արարածներին տված բարիքները ետ խլել չի կամենում: Իսկ եթե առաջին իսկ առիթով ետ էր խլելու, ապա ինչո՞ւ էր տալիս: Մի՞թե չգիտեր, որ այդպես էր լինելու: Սրանից առաջ ասված պատճառներով է, որ այս ամենը տվեց, և այս մյուս պատճառներով է, որ նրանից անձնիշխան կամքը չխլեց, որովհետև եթե այս բոլոր բարիքներն ու ազատությունները չար եղան նրա համար, ապա եթե բարի և ազատ չլիներ, ինչպիսի՜ չարիքներ չէ՞ր կրի նա: Դրա մասին Տերն ասում է. ***«Եթե քո մեջ եղած լույսը խավար է, ապա խավարը՝ որչափ ևս ավելի» (Մատթ. Զ 23):***

Չորրորդ՝ սատանայի գործած այս բոլոր չարիքներից հետո ինչո՞ւ նրան անդո չդարձրեց:

Որովհետև Աստված էացուցիչ է և ոչ թե ապականիչ, և անգոյությունից բերում է գոյության և ոչ թե՝ գոյությունից անգոյության դարձնում: Որովհետև Արարող է և ոչ թե քանդող: Դրա համար է, որ այն, ինչ Իր բնության, բարի բնության և բարի կամքի գործն է, այն է Աստված անում և ոչ թե հակառակը:

Հինգերորդ՝ ինչո՞ւ Աստված թույլ տվեց նրան փորձել մարդկանց, այսինքն՝ ինչո՞ւ է սատանան պատճառ լինում ընտրյալների ընտիր լինելուն:

Որովհետև եթե չմարտնչեր նախավկայի հետ, ապա Երկինքը բացված և Որդուն Հոր աջ կողմում նստած չէր տեսնի: Եվ եթե մեր Լուսավորչի հետ չմարտնչեր, ապա նա աշխարհի լուսավորիչ չէր լինի, կամ Աստվածության էջմիածին իջնելը չէր տեսնի:

*Եվ եթե Ադամի հետ չմարտնչեր, ապա Աստված մարդկային մարմնով մեր բնությունից չէր ծնվի՝ Աստվածային փառքի վերածված: Դրա մասին մարգարեն ասում է. **«Մի՛ սպանիր նրանց, որպեսզի չմոռանան քո ժողովրդին, այլ ցրի՛ր և ընկճի՛ր նրանց քո զորությամբ»** (Սաղմ. ԾԸ 12): Այս խոսքերը մեկ այլ խորությամբ Աստվածային խորին դատաստանն են հայտնում, որ հատուցեց մի օր, երբ տանջելու է նրան և նրա հետևորդներին՝ անանցական տանջանքներով: Դրա համար աղաչում էին նրան. **«Ժամանակից առաջ մի՛ տանջիր մեզ»** (Տե՛ս Մատթ. Ը 29): Եվ տանջվելու է նա իր բոլոր կամակատարներով հանդերձ: Դրա համար է ասում. «Ամբողջ չարը տանջանքի ենթակա է»:*

5

Հինգերորդ հարց. Ի՞նչ է նշանակում՝ «Ամբողջ չարը տանջանքի ենթակա է»:

*Պատասխան. Աստված է միայն բնությամբ բարի, ըստ այն խոսքի, թե՝ **«Բարի ոչ ոք չկա, այլ միայն Աստված»** (Մարկ. Ժ 18): Իսկ բանական սեռին պատկանող Նրա արարածները բարին այլ կերպ ունեն: Միայն Աստված է կատարյալ և ամբողջական բարի, իսկ ստեղծվածներս՝ մասնական բարի:*

*Երկրորդ՝ որովհետև Աստված բարին բնությամբ ունի, իսկ ստեղծվածներս՝ ոչ թե բնությամբ, այլ ստացմամբ ունենք բարին: Որովհետև բնությամբ բարին նա է, ով անեղապես ունի բարին և ոչ թե որևիցե մեկից ստացած, իսկ մենք՝ ոչ թե բնությամբ մեզնից, այլ Աստծուց ստացմամբ: Սիրաքն ասում է. **«Դու, որ ամեն ինչ ստացել ես, ինչո՞ւ ես պարծենում իբրև չստացող»** (Ա Կոր. Դ 7): Իսկ այն ամենը, ինչ ստացված է, բնությունից չէ, այլ Տվողից է ստացված:*

Երրորդ՝ որովհետև Աստված բարին անփոփոխ ունի, իսկ մենք՝ կամավորաբար. եթե կամենանք, կպահենք, իսկ եթե ոչ՝ մեկ ուրիշի կփոխվենք: Այդ պատճառով բարին սահմանեց և այն մեր

կամքին թողեց, որպեսզի բարին կամենալով՝ վարձատրվենք: Դրա համար նա, ով կամավորությամբ բարուն միախառնվի, կպակվի և կհաղորդվի էական բարու հետ, իսկ նա, ով իր կամքով չարին հետևի, նրա հետ Աստծուց տանջանքներ կստանա: Դրա համար էլ ասում է. «Ամբողջ չարը տանջանքի ենթակա է»:

Այն մարդիկ, ովքեր չարությունը կսիրեն և հավատով ու գործով չար կլինեն, կամ երկուսն էլ միաժամանակ, այստեղ հոգով կտանջվեն. նրանց իրենց խղճմտանքը կտանջի, երբ մեղքին ծառայեն, իսկ այնտեղ՝ գեհենի կրակներում՝ հոգով և մարմնով սատանայի հետ: Նույնպես և այստեղ սատանայի տանջանքներն են՝ փառքից ընկնելը և բարու փոխարեն չար լինելը, իսկ այնտեղ, ըստ Գրքի՝ անձի տանջանքը հավիտենական ազդմամբ կընդունի (Ներսես Շնորհալի):

6

Վեցերորդ հարց. Ի՞նչ է նշանակում՝ «Ոչ մի տանջված անապական չէ»:

Պատասխան. Որովհետև տանջանքն այլայլում է բնությունը և ապականում:

Նա, ով բնությամբ անապական է, այսինքն՝ նա, ով անապական է մնում չարից, ո՛չ տանջվում է, ո՛չ այլայլվում և ո՛չ էլ ապականվում: Դարձյալ՝ ոչ ոք չի տանջվում և անապական մնում: Այսինքն՝ չի կարող, տանջվելով հանդերձ, անապական մնալ:

Գոյացականի ապականության պատճառը տանջանքն է: Եվ ինչպես էությունը չի տանջվում, քանի որ անապական է բնությամբ, նույնպես և նրանք, ովքեր տանջվում են, ապականացու են (Ներսես Շնորհալի):

7

Յոթերորդ հարց. *Ի՞նչ է նշանակում՝ «Անեղ ոչ ոք չապականվեց»:*

Պատասխան. *Այսինքն՝ անկարելի է, որ անեղական բնությունը փոփոխություն կրի, այլայլվի և կամ ապականվի: Որովհետև անկարելի է, որ բնությամբ բարին՝ Աստված, առավել բարության համար փոփոխություն ընդունի դեպի հակառակ կողմը, որ չարությունն է, և չարն իր մեջ ընդունի: Հետևաբար, նա չի կարող տանջվել: Եվ որովհետև չի տանջվում, չի էլ ապականվում: Իսկ եթե չի ապականվում, ապա ուրեմն եղական չէ: Դարձյալ՝ ոչ ոք աստանայի համար չի ասում՝ ապականելի անեղ, որովհետև նա, ով կրում է ապականության փոփոխումը, ուշնով հայտնում է, որ փոփոխական բնություն է: Որովհետև ով որ անէությունից եղավ, այնպես էլ կարող է մեկ ուրիշի փոխվել: Ապա ուրեմն՝ ով այլայլվում է ու ապականվում, անեղ չէ: Որովհետև եթե անեղ լիներ, չէր այլայլվի ու ապականվի: Հետևաբար աստանան, որ այլայլվում է ու ապականվում, անեղ չէ:*

8

Ութերորդ հարց. *Ինչո՞ւ է ասում՝ «Չարն ապականացու է»:*

Պատասխան. *Պետք է այսպես ասել. «Չարն ապականացու է», և չի կարելի ասել՝ «Չարն ապականվեց»: Որովհետև չարը բնությամբ չէ, նաև գոյացական չէ, քանի որ Արարչից չի ստեղծվել, այլ ապականացու է: Այսինքն՝ չարը ստեղծված բարու ապականության պատճառն է և խառնվում է նրա հետ, ինչպես առողջությանը հիվանդությունն է խառնվում:*

Մահը և հիվանդությունը մահկանացուների առանձնակի էությունը չեն, և սրանք չէին ներգործի իրենց զորությամբ, եթե էությունն ախտավոր չլիներ, իսկ բնությունը՝ մահկանացու: Այսպես էլ չարությունը եթե չգտներ բանական հոգի և անձնիշխան կամք, էություն չէր ունենա: Եվ ինչպես որ անասվեր լույսի մեջ խավար չկա, նույնպես և չարությունն ամենևին չի հպվի էությանը, որը բնությամբ է այդպիսին և միշտ բարի է, որն Աստված է (Ներսես Շնորհալի):

9

Իններորդ հարց. *Ինչո՞ւ է ասում՝ «Չարն անեղ չէ»:*

Պատասխան. *Նախ անեղ չէ, որովհետև բնությամբ չէ:*

Երկրորդ՝ անեղ չէ, որովհետև չունի նմանությունն Աստվածային բարու, որն անեղ է:

Երրորդ՝ անեղ չէ, որովհետև նախ բարի էր, հետո հեղաշրջվեց ու չար դարձավ:

Չորրորդ՝ որովհետև նախ անէությունից եղական եղավ և բարի լինելուց չար դարձավ: Նաև այլայլելի է չարչարանքներում: Եվ դարձյալ չարչարանքների պատճառով ապականություն է կրում: Հետևաբար ինչպե՞ս կարող է անեղ լինել մեկը, որի անձի մեջ այս բոլոր եղելությունները կատարվեցին: Դրա համար էլ ասվում է. «Չարն անեղ չէ»:

Դարձյալ՝ չարն անեղ չէ, որովհետև առանց գործելու չար չի գոյանում: Այլ նախ՝ մտքով հղանում է, երկրորդ՝ կամքով հաճում է, երրորդ՝ սրտով հոժարում է, չորրորդ՝ մարմնով գործում է, և հինգերորդ՝ գործողին այլայլում է: Եվ այս ամենը չարի հետ է տեղի ունեցել: Ինչպե՞ս կարող է անեղ լինել, մինչ բազմապատիկ եղական է: Եվ ոչ թե մեկ, այլ զանազան տեղերում եղելություն է ստացել: Իսկ նա, ով այսքան կերպերով եղական է եղել, չի կարող անեղ լինել, այլ անէություն է և առանց գոյության է մնում, այն, որ չկա, ու չի էլ երևում տեղը նրա:

10

Տասներորդ հարց. *Ինչո՞ւ է ասում՝ «Ոչ ոք բնությամբ չար չէ»:*

Պատասխան. *Որովհետև ամեն ինչ բնությամբ Աստծու կողմից է արարվել, և ըստ վկայության՝ Աստծուց ստեղծվածները բարի են.* ***«Աստված տեսավ, որ այն ամենը, ինչ ստեղծել էր, շատ բարի է» (Ծննդ. Ա 31):*** *Ապա ուրեմն ոչ ոք բնությամբ չար չէ:*

Դարձյալ բնությունն առաջնային է կամքի հանդեպ, իսկ

կամքը երկրորդն է: Եվ կամքն է հնազանդվում բնությանը և ոչ թե բնությունը՝ կամքին: Եվ այն ամենը, ինչ կամքին է հնազանդվում, բնությունից չէ, այլ եկամուտ[10] է: Արդ, բնությունը բարի է ստեղծվել, և կամքը երկրորդն է բնությունից հետո, իսկ չարը, որը եկամուտ է՝ բնության նկատմամբ երրորդն է և հաջորդում է կամքին: Եվ տե՛ս, որ միջնորդով հեռու է չարը բնությունից, որովհետև կամքը երկուսի մեջտեղում է: Ապա ուրեմն ոչ ոք ըստ բնության չար չէ: Նրա համար է չարագործը պատժվում, որ իր կամքով թողել է իր հարակից բարի ստեղծված բնությանը ու հետևել օտար, եկամուտ չարին:

Հարց. Կամքն է բնության հետևողը և ոչ թե բնությունը՝ կամքին: Հայտնի է, որ քաղցը, ծարավն ու քունը բնական կրքերն են, և կամքը չի կարող խափանել, այլ հետևում է նրանց: Արդ եթե բնությունը հարկադրում է կամքին և իրեն հնազանդեցնում, ապա ինչպե՞ս կարող է կամքը հետևել եկամուտ չարին, որը բնությունն չէ, այլ պատահում[11]:

Պատասխան. Կամքը ընկած է երկու բնությունների միջև: Մի բնությունն այն է, որ Աստված է ստեղծել, այսինքն՝ բարի բնությունը, իսկ երկրորդն այն բնությունն է, որ կամքն է ծնել իր հավանած գործերի միջոցով: Այս մասին իմաստասերն ասում է. «Երկարատև կրթությամբ մակաստացական[12] բնություն է գոյանում, իսկ կամքն այն բնությունն է սիրում, որից դաստիարակվել է երկար ժամանակ և որին սովորել է»: Եվ ինչպես ամեն մի ծնող սիրում է իրենից ծնվածին, այնպես էլ կամքը, թողնելով իրեն ծնող բարի բնությունը, սիրում է իրենից ծնված մակաստացական բնությունը և, օտարանալով առաջին բնությունից, սիրով կապվում երկրորդ բնության հետ:

Դարձյալ չարի մյուս բնությունը ևս՝ չար սովորությունները, բռնությամբ ներգործում է կամքի վրա: Եվ այս վերջին երկու բնությունները գերում են կամքն առաջին բնությունից, ինչպես որ գերողներն են գերում զավակին իր ծնողներից, և այս երկուսից պարտվելով, այլևս չի կարողանում հետևել առաջինին: Այդ մասին է ասում Պողոսը. **«Իմ մարմնի անդամների մեջ տեսնում եմ այլ օրենք, որ պայքարում է իմ մտքի օրենքին հակառակ և ինձ գերի դարձրել մեղքի օրենքին»** (Տե՛ս Հռոմ. Է 23):

Իսկ կամքը, թեպետև ջանում է հետևել բարի բնությանը, սակայն չի կարողանում, որովհետև կրթված է չարի կողմից, որի մասին Պողոսն ասում է. **«Ոչ թե անում եմ բարին, որ կամենում եմ, այլ ինչից որ փախչում եմ՝ չարից, այն եմ անում»** (Հռոմ. Է 19):

Իսկ նա, ով ապավինում է Սուրբ Հոգու շնորհներին և հոժարությամբ ջանում հակառակ մնալ չարին, հաղթում է իրեն գերողներին: Այդ մասին Պողոսն ասում է. **«Ես ինքս իմ մտքով ծառայում եմ Աստծու օրենքին, իսկ մարմնով՝ մեղքի օրենքին: ...Կյանք տվող Հոգու օրենքն ինձ փրկեց մեղքի և մահվան օրենքից»** (Հռոմ. Է 25, Ը 2): Հայտնի է, որ շատ պոռնիկներ, մաքսավորներ ու ավազակներ ետ դարձան մեղքերից, որովհետև բոլոր նրանք, ովքեր ջանում են հակառակ մնալ չարին, չարը փախչում է նրանցից: Այդ մասին է ասում Հակոբոսը. **«Զարախոսին հակառակ կացե՛ք, և նա կփախչի ձեզանից»** (Տե՛ս Հակ. Դ 7): Կամքից ծնված մակաստացական բնությունը՝ այդ չար զավակը, ջանք ու հնարներ է բանեցնում՝ նրան կործանելու համար: Դրա համար մարգարեն ասում է. **«Երանի՛ նրան, ով կբռնի քո մանուկներին ու կխփի քարին»** (Սաղմ. ՃԼԶ 9): Այսպիսով [կամքը] մեծ ջանքերի գնով ջանում է ազատվել իրեն գերողներից:

[10] Եկամուտ -Ներմուծված, օտար, այլասեռ:

[11] Պատահում -Որ գալիս է և գնում՝ առանց ենթակային ապականելու: Պատահումն էական չէ որևէ առարկայի համար, օրինակ՝ այնպես, ինչպես ջերմությունը կրակի համար, այլ այնպես է, ինչպես պիտակը մարմնի վրա, որը ձեռք է բերվել:

[12] Մակաստացական -Ձեռքբերովի, հավելվածով ստացված բնություն, որն Աստծու կողմից չի տրված: Մակ -«վրա, վրան» (հունարեն επι -նախդրից), առաջացել է հետսկեդարյան շրջանում, հունաբան հեղինակների՝ հունարենից կատարված թարգմանությունների միջոցով և ներմուծվել հայերենի մեջ, որպես իմաստասիրական եզր:

Հարց. Եթե ոչ ոք բնությամբ չար չէ, ասում է, ապա ինչպե՞ս է, որ հոգու մասերը, որոնք մեր մեջ բնությամբ են, այսինքն՝ խոսքը, ցասումը, ցանկանալը և սրանց բոլոր կողմերը չար են, և մեր միջի ամեն չարը նրանց միջոցով է լինում: Ապա ինչո՞ւ է ասում. «Ոչ ոք բնությամբ չար չէ», եթե սրանք բարի բնությամբ են մեր մեջ:

Պատասխան. Նախ որովհետև հոգին եռամասնյա է և ոչ թե իննմասնյա: Որովհետև հոգու այն վեց կողմերը՝ վերևի և ներքևի, աջի ու ձախի, ետևի և առջևի, եկամուտ են և բնությունից դուրս այս ու այն կողմից չրջապատել են նրան: Եվ տե՛ս, որ դրանք մեր բնությունից չեն, որովհետև խոհեմության վերին ծայրը խորամանկությունն է, որն անզգամություն է և դա սատանայինն է, իսկ ներքինը տգիտությունն է, որ անբաններինն է: Սույնպես և ցասման վերին ծայրում հանդգնությունն է, ինչը հատուկ է գազաններին, իսկ ներքին ծայրում երկչոտությունն է, որը հատուկ է չնչին անասուններին:

Իսկ ցանկականի վերին ծայրը ժլատությունն է, որն ագահությունն է, և սա հատուկ է մկանը, որը չատ է կուտակում: Իսկ ներքին ծայրը չռայլությունն է, որն անառակ վարքն է, ինչը տարածված ենք տեսնում շների և պիղծ կենդանիների մեջ: Եվ հայտնի է, որ սրանք բնական չեն մարդու համար, այլ եկամուտ և օտար:

Դարձյալ՝ որովհետև կամքը ծառայում է բնությանը և ոչ թե բնությունը՝ կամքին: Օրինակ՝ հայտնի է, որ բարկության բոցը հանդչում է երկյուղից, իսկ ցանկության բոցը՝ ամոթից: Եվ տե՛ս, որ բարկությունը և ցանկությունն անբաններին են հատուկ և ոչ թե մեր բնությանը, որովհետև եթե բնությունից լիներ մեր միջի ցանկության մեղքը, ապա սրբերը չէին կարող հաղթել բնությանը և մաքուր լինել, կամ հաղթել բարկությանը և հեզ լինել: Այլ այն ավելորդը, ինչը որ ճգնավորները և սրբերը թողեցին, մեր բնությունից չէր, այլ կամքի հետևանք, և՝ եկամուտ: Եթե ցանկությունը բնությամբ լիներ, ապա կուսությամբ ապրելն անհնարին կլիներ: Այսպիսով բոլոր մյուս կրքերը եկամուտ են, հետևաբար և՝ ավելորդ:

Դարձյալ՝ որովհետև կամեցան ու հաղթեցին կրքերին: Տե՛ս, որ կամքի հնազանդության դեմ չապստամբեցին, այլ ծառայում են անձնիշխան կամքին: Հայտնի է, որ կամքը ծառայում է բնությանը, իսկ նրանք ծառայում են կամքին: Հետևաբար բնությամբ չեն մեր մեջ չար ախտերը, ինչը և ցույց տրվեց:

Դարձյալ՝ եթե չարը մարդու մեջ բնությամբ լիներ, ապա Աստված չէր տանջի մեղավորին: Այլ որովհետև բնությունն անմեղ է, նա աստվածադիր բնությանը հակառակ է գործում, դրա համար էլ՝ Աստծուց պատժվում է: Այսքանն այս մասին:

11

Տասնմեկերորդ հարց. Ինչո՞ւ է ասում՝ «Չարագործություն է ոչ ոքի գոյության չձեռնարկելը»:

Պատասխան. Չարը ո՛չ բնություն է և ո՛չ էլ գոյացություն[13], այլ գործունեություն, այսինքն՝ ներմուծում բնության մեջ, ինչպես անոթի մեջ մտցված մի իր, որն անոթի բնությունից չէ: Այսպես և չարությունը. թեպետ մտնում է որևիցե մեկի մեջ բնակվելու, սակայն նրա բնությունից չէ: Եվ սա հայտնի է նրանից, որ վերջինս երբ կամենում է, արտաքսում է: Դրա համար էլ ասում է. «Ոչ մի գործունեություն գոյացություն չէ»:

Մեր լինելության սկզբում չարը մեզ հետ չի գոյացել, այլ հետո է սպրդել չար խաբեությամբ և մեր անձնիշխան կամքով մտել մեր բնության մեջ, որի համար էլ նա առանձին գոյացություն չէ, այլ մտնելով գոյացյալ բնության մեջ, գոյացնում է իր ներգործությունը և անմիտներին կարծել տալիս, թե ինքն առանձին գոյություն ունի (Ներսես Շնորհալի):

[13] Գոյացություն է բնություն ունեցողը (Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց):

12

Տասներկուերորդ հարց. *Ինչո՞ւ է ասում՝ «Բոլոր ընդդիմակացները միմյանց ապականիչ են»:*

Պատասխան. *Այսինքն, ինչպես հիվանդությունը և առողջությունը, մահը և կյանքը, չարը և բարին, ապականությունը և անապականությունը, լույսը և խավարը, ջերմությունը և ցուրտը, խոնավությունը և չորությունը և այլն: Արդ՝ մեկը գալիս՝ հարկադրում է մյուսին դուրս ելնել, լուծվել ապականությանը: Եթե բարին է մտնում, չարին է դուրս անում, իսկ եթե չարն է մտնում, բարուն է դուրս անում: Դրա մասին Տերն ասում է.* ***«Ձեք կարող երկու տիրոջ ծառայել»*** *(Տե՛ս Մատթ. Զ 24) և այլն:*

Ջերմությունը և ցուրտը, խոնավությունը և չորությունը միմյանց հակառակ լինելով՝ մեկ մեկու ապականում են, որի համար և ավելացնում է. «Հակառակ են, ուրեմն անապական չեն» (Ներսես Շնորհալի):

13

Տասներեքերորդ հարց. *Ինչո՞ւ է ասում՝ «Անեղ ոչինչ փոփոխելի չէ»:*

Պատասխան. *Աստծուց բացի, էությունների մեջ չկա մեկ այլ բնություն, որ անեղ լինի: Եվ քանի որ անեղ է, հետևաբար և անփոփոխելի է, որովհետև այնպես չէ, ինչպես արարածների ստեղծված բնությունը, որ, անէությունից փոփոխվելով, եկավ լինելության: Այլ Նա՛ անեղ բնություն է, դրա համար էլ Նրա բնությանը հատուկ չէ փոփոխական լինելը, այլ ինչպիսին որ էր՝ նույնպիսին և կա, որի համար Պողոսն ասում է.* ***«Հիսուս Քրիստոս նույնն է երեկ, այսօր և հավիտյան»*** *(Եբր. ԺԳ 8): Որովհետև նույն անեղական բնությունը մարդ եղավ ու մնաց Աստված բնությամբ, քանի որ* ***«Բանը մարմին եղավ»*** *(Հովհ. Ա 14):*

14

Տասնչորսերորդ հարց. *Ինչո՞ւ է ասում՝ «Բարին անեղ չէ»:*

Պատասխան. *Նախ չարի համար ասաց, որ չարն անեղ չէ, նաև անապական չէ, առավել ևս՝ առանձին բնություն չէ, ոչ էլ Աստծու արարած, այլ մեր ազատ կամքն է էացնել այն մեր մեջ, կամ անդոյության փոխել: Այժմ էլ բարու համար է ասում, որ անեղ չէ:*

[Հարց]. *Իսկ ինչո՞ւ բարին անեղ չէ: Ահա Աստված, որ բարի է, նաև անեղ է, իսկ եթե անեղ է, նաև անփոփոխելի բարի է:*

Պատասխան. *Այս խոսքն աստվածային բարու համար չի ասում, որը բնությամբ է և անփոփոխելի, այլ այն բարու համար է ասում, որ եղական բնության վրա է ներգործում, որը գործունեություն է ու փոփոխական, և որի համար ասաց՝ պարտվում է չարից: Ինչպես մենք ենք եղական ու փոփոխական, նույնպես և մեր բարին է եղական ու փոփոխական:*

Այսպես է նաև չարը, ինչպես վերևում ցույց տրվեց: Եթե մարդը բնությամբ բարու կամ չարի մեջ լիներ, ապա այլևս չէր կարողանա փոխվել: Այս պատճառով էլ եղական բարու մասին ասաց. «Բարին անեղ չէ»:

Դարձյալ՝ թե բարին անեղ չէ, այլ եղական, այսինքն՝ նախ խմանում ենք բարին, որը ծնվում է մեր մտքում, ապա կամքով հոժարում և տենչալով ցանկանում ենք, իսկ այնուհետև՝ խոսքով ասում ու գործով կատարում: Եվ այս բոլոր եղելությունները լինում են մեր մեջ բարու համար: Դրա մասին ասում է. «Բարին անեղ չէ»:

Նույնպես՝ և անդրադարձը. ինչ որ չի լինում այսքան կերպերով և չի եզրափակվում գործի ավարտումով, բարի չէ:

Փոփոխական բարու համար ասվում է, որ չարից պարտվում է, սակայն [դա չի նշանակում], թե չարը զորավոր է, իսկ բարին՝ տկար, այլ երբ բարին ունեցող անձն իր նախահոժար կամքի ընտրությամբ չարին տեղ է տալիս, այն ժամանակ բարին չարով է փոխարինվում, որը և կոչվում է՝ չարից պարտվել (Ներսես Շնորհալի):

15

Տասնհինգերորդ հարց. *Ինչո՞ւ է ասում՝ «Անեղը որևէ մեկի ապականությունը ցանկացող չէ և ոչ ոքի ապականող չէ»:*

Պատասխան. *Որովհետև ինչ որ անեղ է, նույնն էլ բարի է: Եվ եթե բարի է բնությամբ, հետևապես և անապական է, իսկ անապական բարին ոչ ոքի չի ապականում և որևէ մեկի ապականությունը չի ցանկանում, այլ կամենում է, որ բոլորը Իր նման բարի լինեն և ապրեն: Դրա համար Պողոսն ասում է.* ***«Նա կամենում է, որ բոլոր մարդիկ փրկվեն և ճշմարտության իմացությանը հասնեն»*** *(Ա Տիմ. Բ 4):*

16

Տասնվեցերորդ հարց. *Ի՞նչ է նշանակում այս խոսքը՝ «Չարն ապականություն ցանկացող է»:*

Պատասխան. *Այսինքն՝ ինչպես բարին սիրողը և բարի եղողը կամենում է, որ ոչ միայն ինքը, այլև բոլորն իր նման բարի լինեն, ինչպես Պողոսն է ասում՝* ***«Նմանվեցե՛ք ինձ, ինչպես որ ես՝ Քրիստոսին»*** *(Ա Կոր. ԺԱ 1), սույնպես էլ չարը՝ նախ սատանան և ապա մարդկանց մեջ եղող չարասերները, սկզբում իրենց են ապականել չարությամբ և ցանկանում են, որքանով դա հնարավոր է, չարությունը տարածել նաև այլոց վրա:*

17

Տասնյոթերորդ հարց. *Ինչո՞ւ է ասում՝ «Չարն անեղ չէ»:*

Պատասխան. *Որովհետև չարը եղելությամբ ու գործով է լինում, և որտեղ որ չարը չեն կամենում և չեն գործում՝ այնտեղ չի լինում: Հետևաբար չարը, որ կամենալով և գործելով է լինում, անեղ չէ, այլ գործից գոյացած եղելություն:*

Դարձյալ՝ ինչո՞ւ է ասում՝ «Չարն անեղ չէ»: Որովհետև բնությամբ չէ որևէ մեկի մեջ, այլ եկամուտ է, և դա երևում է նրանից, որ չարը չի կարող որևէ մեկին բռնանալ՝ հակառակ անձի կամքին բարի չլինելու: Նույնպես և բարին որևէ մեկին չի հարկադրում չար չլինել, այլ հոգու նախահոժար կամքը, երկուսի միջև լինելով, դեպի ո՛րը որ շարժվում է, դեպի բարին թե չարը, այն էլ ունենում է: Եվ սրա համար է ասում, որ չարն անեղ չէ այսինքն՝ բնություն չէ, ինքնըստինքյան չէ և ինչ որ մեկի մեջ բնությամբ չէ, այլ եկամուտ է:

18

Տասնութերորդ հարց. *Ինչո՞ւ է ասում՝ «Իսկ Աստվածաշունչը տանջանքների է մատնում ոչ միայն ուրիշ չարերի, այլև հենց իրեն՝ բանսարկուին»:*

Պատասխան. *Ինչո՞ւ է Աստված տանջանքների մատնում իր արարածներին: Սրա համար բազում պատճառներ կան:*

Նախ՝ որովհետև ասաց, որ ոչ ոք ըստ բնության չար չէ, քանի որ բոլորը բնությամբ բարի են ստեղծվել՝ բարի Արարչից: Եվ բնությունը չար չէ, որ հարկադրի մեղանչել: Ահա այս պատճառով է հանցավորը պատժվում:

Նախ՝ որովհետև բնությունը բարի է:

Երկրորդ՝ որովհետև կամքն է բնության ծնունդը և ոչ թե բնությունը՝ կամքի:

Երրորդ՝ որովհետև կամքն է բնությանը հնազանդվում ու ծառայում և ոչ թե բնությունը՝ կամքին:

Չորրորդ՝ որովհետև կամքը բնության աննդակիցն է և նրան օտար չէ:

Հինգերորդ՝ որովհետև կամքը նույն անձի բնությունից է և ոչ թե անձից դուրս:

Վեցերորդ՝ որովհետև չարը բնությանն օտար է ու եկամուտ:

Յոթերորդ՝ որովհետև կամքն իրեն ծնող ու աննդակից բնությունը թողնում է և օտար չարի հետ սիրով կապվում:

Ութերորդ՝ որովհետև կամքը թողնում է բարին, որ Աստծու կողմից է ստեղծված, ու հետևում է չարին, որ Աստծու կողմից չի ստեղծվել:

Իններորդ՝ որովհետև կամքը թողնում է բարին, որը լույսի նման էությունն է, և ցանկանում է չարը, որը պատահում է, ինչպես խավարը:

Տասներորդ՝ որովհետև թողնում է բարին, որի նախատիպն Աստված է, և չարին է ցանկանում, որի նախատիպը սատանան է:

Տասմեկերորդ՝ որովհետև բարու նախատիպն անեղ է և անփոփոխ, իսկ չարի նախատիպը սատանան է, որը բարուց դեպի չարը փոխվեց, և որին սիրում է:

Տասներկուերորդ՝ որովհետև մեր բնությունն օտար չէ էական բարուն, քանզի անճառ Բարու պատկերով և նմանությամբ է ստեղծվել: Մեր կամքն այն թողնում է և օտարին ու չարին է ցանկանում:

Տասներեքերորդ՝ որովհետև էական Բարին կամակից է մեզ՝ հաղորդակցելու բարու հետ, այլ ոչ թե հակառակը: Նա կամենում է, որ մարդիկ ապրեն և ճշմարտության խմացությանը հասնեն: Եվ ով նրան թողնում է ու իրեն հակառակ թշնամուն է հետևում, իրավացիորեն պատժվում է:

Տասչորսերորդ՝ որովհետև բարին օգնական է մեր բնությանը, իսկ չարը՝ հակառակ, և ով հետևում է նրան, պատժվում է:

Տասհինգերորդ՝ որովհետև բարին զանազան պարգևներ է խոստանում մեզ այստեղ և հանդերձյալում: Իսկ նրանք, ովքեր ատում են բարին, հիրավի պատժվում են ու զրկվում բարիքներից:

Տասվեցերորդ՝ որովհետև Աստվածաշունչը չարերին պատիժ է խոստանում այստեղ ու հանդերձյալում: Եվ ով չի լսում ու չի հեռանում չարից, արդարև պատժվում է և՛ այստեղ, և՛ այնտեղ:

Տասյոթերորդ՝ որովհետև բարիք գործողները, ովքեր Աստծուց պարգևներ են ստացել, մեզ օրինակ են, ինչպես Ենովքը, Եղիան, Նոյը, Աբրահամը, Մովսեսը և մյուս բոլոր սրբերը, ովքեր զանազան հրաշքներ են գործել: Իսկ ով այս ամենը չի ցանկանում, պատժվելու է:

Տասութերորդ՝ որովհետև չարագործները ևս, որ պատուհասվեցին, մեզ համար օրինակ են, ինչպես սատանան, Ադամը, Կայենը, նրանք, որ ջրհեղեղով կորան, և սոդոմացիները, որ հրով այրվեցին: Իսկ ով այս ամենը տեսնելով՝ չարից ետ չի դառնում, նրանց պատիժներին է արժանի:

Տասիններորդ՝ որովհետև հայտնապես տեսնում են, որ չարի պատճառով են պատուհասներ գալիս՝ տարաժամ մահ, սով, երկրաշարժ, սրածությունն, գերությունն, մորեխ, թրթուր, գայլ, գազան և այլն, ու չեն ատում չարը, որի համար էլ հիրավի պատժվում են:

Քսաներորդ՝ որովհետև Ինքը՝ անեղական Բարին՝ Աստված, այս աշխարհ եկավ ու մեզ նմանվեց, որպեսզի մենք էլ Իրեն նմանվենք: Արյունով ու մահով ազատեց մեզ առաջին չարից ու պատժից, դժոխքից ու մահից: Իսկ ով այս ամենն իմանալով շարունակում է չարին հետևել, հիրավի պատժվում է: Նա պարտական է մնում նաև մեզ համար խաչված Աստծու անմահ մահվանն ու Նրա՝ մեզ համար հեղված անպարտ արյանը: Եվ քանի որ կամովին ու հոժարությամբ չարը սիրեցին, որ այսքան օտար է մեր բնությանը, և բարին ատեցին, որն այսքան մոտ ու բնութակից է մեզ, ապա արդարացի կերպով ասում է. «Ամբողջ Աստվածաշունչը պատժի է մատնում չարագործներին»:

Հարց. Ի՞նչ է չարը:

Պատասխան. Նախ՝ չարն անեղ չէ, այլ գործելիս է լինում, ինչպես մեկի հետքը, որ ընթանալիս է գոյանում:

Երկրորդ՝ եղականներից դուրս առանձին էություն չէ:

Երրորդ՝ Աստծուց եղածների նման էություն չէ, որովհետև ո՛չ իր է, ո՛չ էլ գոյություն, այլ պատահում, որ գործելով է առաջանում: Չարը նաև բարու պակասությունն է, ինչպես խավարը՝ լույսի: Նաև ապականիչ ու չարչարող է և իրեն կրողին այլայլող:

Հարց. Ի՞նչ է նշանակում՝ «Ամբողջ Աստվածաշունչը տան-

ջանքների է մատնում չարերին»: Որտե՞ղ է Գիրքն ասում, թե չարերը տանջվելու են:

Պատասխան. Հայտնի է բազմաթիվ խոսքերից: Նախ՝ Տերն է ասում. **«Զարերին չարաչար կոչնչացնի» (Մատթ. ԻԱ 41):**

Երկրորդ՝ ասում է. **«Ամեն ծառ, որ բարի պտուղ չի տա, կտրվում և կրակն է գցվում» (Մատթ. Գ 10):**

Երրորդ՝ Մկրտիչն ասում է. **«Ինչպե՞ս պիտի փախչեք գեհենի դատապարտությունից» (Մատթ. ԻԳ 33):**

Չորրորդ՝ Եսային ասում է. **«Ո՞վ պատմեց ձեզ, թե կրակը բորբոքված է» (Տե՛ս Եսայի ԼԳ 14): Եվ դարձյալ ասում է. «Նրանց որդերը չեն մեռնում, և կրակը չի հանգչում» (Տե՛ս Եսայի ԿՉ 24):**

Հինգերորդ՝ Դավիթն ասում է. **«Ինչպես մոմն է հալվում կրակի դիմաց, այնպես էլ մեղավորները պիտի կորչեն Աստծու երեսից» (Սաղմ. ԿԷ 3):**

Վեցերորդ՝ Տերն ասում է. **«Ով զուր տեղը բարկանում է իր եղբոր վրա, ենթակա կլինի գեհենի հրին» (Տե՛ս Մատթ. Ե 22):**

Յոթերորդ՝ ասում է. **«Կապեցե՛ք դրա ոտքերն ու ձեռքերը և դո՛ւրս հանեցեք դրան, արտաքին խավարը. այնտեղ կլինի լաց և ատամների կրճտում» (Մատթ. ԻԲ 13):**

Ութերորդ՝ Պողոսն ասում է. **«Քանզի եթե մեկը կամավոր կերպով է մեղանչում ճշմարտությունն իմանալուց և ընդունելուց հետո, ուրեմն մեղքի քավության համար այլևս ուրիշ զոհ պետք չէ, այլ մնում է դատաստանի ահեղ սպասումը և կրակի կատաղությունը, որ լափելու է Նրա հակառակորդներին» (Տե՛ս Եբր. Ժ 26):**

Իններորդ՝ Եսային ասում է. **«Համայն երկիրը պիտի դառնի Տիրոջ կրակով և ամեն մի մարմին՝ Նրա սրով» (Եսայի ԿՉ 16):**

Տասներորդ՝ ինքը Տերն ասում է. **«Գնացե՛ք ինձանից հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի և իր հրեշտակների համար» (Տե՛ս Մատթ. ԻԵ 41):**

Տասնմեկերորդ՝ սատանան ինքն էլ գիտեր, որ տանջվելու է, որի համար ասում էր. **«Մեզ տարաժամ մի՛ տանջիր» (Տե՛ս Մատթ.**

Ը 29): Սրանցից բացի Սուրբ Գրքում տանջանքների վերաբերյալ բազում ուրիշ օրինակներ ևս կան:

Հարց. Սատանան որտեղի՞ց գիտի, որ հավիտյան տանջվելու է:

Պատասխան. Նախ՝ իր չարությունն Աստծու արդար իրավունքների հետ համեմատելով է իմանում, որ [Աստված իրեն] չի ներելու:

Երկրորդ՝ երբ հակառակվեց Աստծուն, իմացավ իր վնասը և իր արժանի պատիժը ծանրությեթև է անում մտքում:

Երրորդ՝ երբ բարուց փոխվեց չարի, իմացավ, որ չարն իր հետ է և չարչարելու է իրեն:

Չորրորդ՝ ինչպես բարի Աստված փառքի հանգստի մեջ է, այնպես էլ նա հակառակից իմացավ, թե որքան որ Բարին հանգստի մեջ է, նույնքան և չարը, որ հակառակ է բարուն, չարչարվելու է հավիտյան:

Հինգերորդ՝ փորձով տեսավ. ինչպես որ հիվանդի դրությունը երբ վատթարանում է, իմանում է, որ մահվան է մոտենում: Այդպես էլ ինքն իմացավ, որ նախ բարուց մերկացավ ու երկնքից ընկավ, և ողջ չարությունը պատեց նրան, բովանդակ դառնությունն էլ տրտմության հետ տիրեց նրան: Իմացավ, որ սա իր մեծ կորստյան՝ անանց տանջանքների սկիզբն է:

Վեցերորդ՝ նաև սրատես մտքով է հականում իրեն սպասվելիքը:

Յոթերորդ՝ երբ Ադամին խաբեց ու մեր ամբողջ բնությունը չարության մատնեց և Աստծուն դեպի խաչը բերեց, գիտակցեց, որ այդ ամենի համար պատասխան է տալու Աստծու արդար դատաստանի առաջ:

Ութերորդ՝ ամեն օր, Աստծու հրեշտակների չնորհաբաշխության ժամին, դևերն իրենք էլ են ձգտում դեպի վեր՝ աստղալից երկինք, որպեսզի հրեշտակների հետ իրենք ևս ստանան չնորհի լույսը: Եվ ինչպես որ անկումից առաջ էին սովոր ստանալ այդ չնորհներից, այժմ նույնպես ձգտում են դեպի վեր, սակայն լույսի փոխարեն արժանին՝ Աստծու բարկությունն են ստանում: Որովհետև չնորհի լույսը հրեշտակներն են ստանում, իսկ բոցի տապը

և այրումը՝ դևերը, որի համար մարգարեն ասում է. **«Նրանց վրա թափի՛ր քո զայրույթը»** (Սաղմ. ԿՀ 25): Նաև՝ **«Դու նրանց վրա կրակի կայծեր թափի՛ր ու կործանի՛ր նրանց, որ տառապանքներից չկարողանան փրկվել»** (Սաղմ. ՃԼԹ 11): Ինչպես որ թիթեռն է, անհագ կերպով դեպի բոցն ընթանալով, այրվում ու ընկնում, բայց դարձյալ ցանկությամբ դեպի լույսն է թռչում, այնպես էլ սրանք են. ու այս է սրանց մշտական գործը: Բնությունն է նրանց դրան տանում, որպեսզի ամեն օր պատժվեն:

Դարձյալ՝ Աստծու արդար իրավունքն է չարժում նրանց դեպի այն կողմը, որպեսզի ամեն օր պատժվեն և Աստծու բարկության կայծակներից տուժեն: Եվ ինչպես հրեշտակների վրա ազդումն ուրախացնում է վերջիններիս, նաև գիտություն է տալիս հանդերձյալի վերաբերյալ, այսպես և Աստծու բարկությունն արժանի ազդեցություն է գործում, [ինչպես նաև հայտնում այն մասին], որ հանդերձյալում նրանք հավիտենական տանջանքներ են կրելու:

Տաներորդ՝ նրանք Քրիստոսից պարզորոշ լսեցին հետևյալը, որ ասաց. **«Անիծյալնե՛ր, գնացե՛ք ինձնից դեպի հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի և իր հրեշտակների համար»** (Մատթ. ԻԵ 41): Եվ նրանք այս ամենից գիտեն, որ տանջվելու են, դրա համար էլ ասում էին. **«Մեզ տարաժամ մի՛ տանջիր»** (Տե՛ս Մատթ. Ը 29):

19

Տասներորդ հարց. Ինչո՞ւ է ասում՝ «Ասում են՝ բոլոր տանջանքի մատնվածներն այլայլելի են»: Սրանից հետևում է. «Ամեն մի տանջանքի մատնված այլայլելի է»:

Պատասխան. Գիրքը սա է ասում. «Ամեն ոք, ով տանջանքների է մատնվում, այլայլվում է իր բնությունից»: Եվ սրանից հայտնի է, որ չարն անեղ չէ, այլ եղական և փոփոխական, որովհետև տանջվում է և տանջանքների պատճառով՝ այլայլվում:

20

Քսաներորդ հարց. Ինչո՞ւ է ասում՝ «Այլայլելի ոչ ոք անեղ չէ»:

Պատասխան. Ով տանջվելով այլայլվում է իր բնությունից, ինչպե՞ս անեղ կլինի: Հայտնի է, որ չարը՝ սատանան, անեղ չէ, որովհետև նա բազում փոփոխություններ է կրել:

Նախ՝ անէությունից է էության եկել:

Երկրորդ՝ Աստծուց բարի է ստեղծվել և հետո է չարի փոխվել:

Երրորդ՝ այժմ չարչարանքների մեջ է իր չար խորհուրդների պատճառով, որի համար Եսային ասում է. **«Ամբարիշտների համար խաղաղություն չկա, ասում է Տերը»** (Եսայի ԾԷ 20ա): Հայտնի է, որ ամբարիշտները դևեր են: Դարձյալ՝ **«Անօրենները պիտի ծփան ծովի նման և հանգիստ չգտնեն»** (Եսայի ԾԷ 20բ): Նրանք են առաջին անօրենները:

Չորրորդ՝ չարչարանքները տանջելու են նրանց:

Հինգերորդ՝ տանջանքներն անչեջ բոցերի մեջ են այլայլելու նրանց: Ինչպե՞ս կարող են անեղ լինել նրանք, ում հետ այս բոլոր փոփոխությունները տեղի են ունենում,:

Իսկ որ ասում է՝ «Անեղ ոչ ոք չի այլայլվում», նշանակում է՝ Աստված քանի որ անեղ է, չի այլայլվում:

Նախ՝ որովհետև ոչ մեկից չի եղել, այլ անեղ էություն է:

Երկրորդ՝ անեղ է և չի կարող այլայլվել, այլ իր բնությամբ անփոփոխելի է մնում:

21

Քսանմեկերորդ հարց. Ինչո՞ւ է ասում՝ «Չարերից ոչինչ անեղ չէ»:

Պատասխան. Այս հայտնի է ամեն տեղից, որովհետև եթե որևէ բնություն այլայլվում է, ապա այն անեղություն չունի: Իսկ այժմ բազմապիսի որակներով է հարցը դրվում, թե՝ չարերից ոչինչ անեղ չէ: Այսինքն՝ նախ որ չարն ի՛նքն անեղ չէ:

Երկրորդ՝ բնություն չէ:

Երրորդ՝ բնությունից չէ:

Չորրորդ՝ ինքնին առանձին էություն չէ:

Հինգերորդ՝ չարի բոլոր մասերը գործելով են լինում, որի համար ասում է. «Չարերից ոչինչ անեղ չէ»:

Դարձյալ՝ «Չարերից ոչինչ անեղ չէ», այսինքն՝ չարը չատ եղելություններ պիտի կրի, որոնք գործով են գոյանում, այսինքն՝ ապականություն, մահ, դատապարտություն, ահեղ ատյանի ամոթ, հավիտենական տանջանքներ, հրի բոցերի մեջ այլայլվել, զանազան գղջումներ, աչքերի լաց և ատամների կրճտում: Եվ այս բոլոր փոփոխությունները, որոնք գործով են գոյանում, պիտի կրի չարը: Դրա համար էլ ասում է. «Չարերից ոչինչ անեղ չէ»:

Արդ, ով թեկուզ մեկ անգամ չարին իր մեջ տեղ տա, ապա հետագայում չարն այս բոլոր եղելությունները նրա հետ կկատարի: Որովհետև եթե մեկը չարն է ծնում, ապա չարը նրա համար հետո թռուներ կծնի սերնդից սերունդ:

22

Քսաներկուերորդ հարց. Ինչո՞ւ է ասում՝ «Ովքեր բոլորովին ընդդիմակաց են, ընդհանուր ոչինչ չունեն»:

Պատասխան. Այսինքն՝ կան, որ մասամբ են միմյանց հակառակվում և մասամբ ընդհանրանում, ինչպես, օրինակ՝ տարերքն ու եղանակները: Եվ կան, որ ամեն ինչով միմյանց հակառակ են, ինչպես լույսն ու խավարը, մահն ու կյանքը, չարն ու բարին: Դարձյալ՝ ստեղծվածների բնությունը բարի է ստեղծված բարի Արարչից, իսկ կամքը չար է և հակառակ նրան, այսինքն՝ նույն անձի մեջ բարի բնությունը և չար կամքը միմյանց հակառակ են:

23

Քսաներեքերորդ հարց. Ի՞նչ է նշանակում՝ «Ով ամենայն հարկավորությամբ մի գոյությունն ունենում է, մեկ ուրիշ գոյություն չի ունենա»:

Պատասխան. Այսինքն՝ ոչ մասնավոր, այլ ամենայն հարկավորությամբ, որովհետև եթե գոյացյալ լույս է, ապա չի կարող փոխվել և խավար դառնալ: Սույնպես և խավարը՝ լույս, մահը՝ կյանք, կամ կյանքը՝ մահ, և ոչ էլ չարը՝ բարի, կամ բարին՝ չար: Ինչպես նաև եղականը չի կարող անեղ լինել, անեղը՝ եղական: Իսկ անեղն Աստված թեպետ մարդ եղավ, սակայն նույն էությունն էր մարմինը, և նույն բնությունն էր մարդացածը, որն անեղ Աստվածությունն էր, որովհետև մարդ եղավ և Աստված մնաց, ինչպես և ասում է. ***«Շոշափեցե՛ք ու տեսե՛ք, որ ես նույնն եմ»*** *(Տե՛ս Ղուկ. ԻԴ 39):*

24

Քսանչորսերորդ հարց. Ի՞նչ է նշանակում՝ «Անեղ լինելով հանդերձ՝ նաև գոյացյալ բարություն է»: Եվ ինչպե՞ս է, որ բարու համար նախ ասաց, թե անեղ չէ, իսկ այժմ ասում է, թե բարությունն անեղից է գոյացել:

Պատասխան. Ոչ թե միակ և նույն բարու համար է ասում, թե գոյացյալ է ու անեղ: [Այս ասելով ինքն իրեն չի հակասում], այլ բարու համար երկու կերպարանք է ներկայացնում: Այսինքն՝ մեկն անեղական բարին է, որն Աստծու անեղ բնությունն է, մշտագո և անփոփոխելի, իսկ մյուսը՝ եղական բարին, որը եղականների մեջ է գոյանում, որը գործունեությամբ է և փոփոխական, որի համար և ասում է, թե՝ չարից պարտվում է:

Դարձյալ՝ ասում է. «Անեղ լինելով հանդերձ՝ գոյացյալ բարություն է»: Այսինքն՝ «անեղանելին լինելությունն» է ասում, որովհետև անեղն Աստված մարդացավ:

Հարց. Ո՞րն է զանազանությունը եղական բարու և եղական չարի, որ մեր մեջ է լինում:

Պատասխան. Եղական բարին և եղական չարը միմյանցից զանազանվում են:

Նախ՝ որովհետև բարին Աստված է ստեղծել, ըստ այն խոսքի, թե՝ **«Ամեն մի բարի շնորհ և ամեն կատարյալ պարգև վերևից է՝ իջած Լույսի Հորից, որի մեջ չկա փոփոխում կամ էլ փոփոխման ստվեր»** (Հակ. Ա 17):

Երկրորդ՝ բարին էությունն է:

Երրորդ՝ բարին մեր բնության մեջ է:

Չորրորդ՝ բարին օգնական է մեր բնության:

Հինգերորդ՝ բարին մեզ բազում փառքերի է արժանացնում:

Վեցերորդ՝ եղական բարին միջնորդ է լինում մեր ու անեղական բարու միջև և հաղորդում մեզ անեղական բարու բանական բնությունը:

Յոթերորդ՝ եղական բարին անեղ բարուն հոմանուն է[14]:

Ութերորդ՝ եղական բարին որպես նյութ է հանդես գալիս, իսկ անեղական բարին՝ այն զարդարող և տեսակավորող, ինչպես սեռն[15] ու տեսակը:

[14] Հոմանուն - Երբ տարբեր իրեր նույն անունն են կրում, տվյալ դեպքում՝ նույն «բարի» բառով երկու տարբեր հասկացություններ են նկարագրվում:

[15] Ընդհանուր և էական հատկանիշներով միավորվող առարկաների՝ երևույթների, հասկացողությունների և այլն խումբ՝ կարգ: Սեռն այն է, ինչ ասվում է քանակով մեծ և տեսակով տարբերվող իրերի համար՝ ցույց տալով նրանց էությունը: Սեռ է կոչվում այն, որ շատերի վրա է տարածվում և արտահայտում յուրաքանչյուրի սերման սկիզբը:

Ըստ արիստոտելականների՝ «Գոյությունը բաժանվում է մարմնավորի և անմարմնի, մարմինը՝ շնչավորի և անշնչի, շնչավորը՝ բանականի և անբանի, բանականը՝ մահկանացուի և անմահի, մահկանացուն՝ մարդու և անասուններ»: Արդ, բարձրագույն սեռ է կոչվում գոյությունը, որովհետև նա իրենից վեր գտնվող սեռ չունի: Իսկ առավել չափով տեսակ է կոչվում մարդը, որն իրենից ներքև գտնվող տեսակ չունի, որովհետև նա բաժանման մեջ հանդես է գալիս որպես ամենավերջինը: Իսկ կենդանին և շնչավորը կոչվում են փոխադարձ համաստորադաս սեռեր և փոխադարձ ու համաստորադաս տեսակներ, որովհետև մեջտեղում գտնվելով՝ նրանք կարող են և՛ սեռ լինել, և՛ տեսակ: Տեսակը հանդես է գալիս որպես սեռի ստորադասյալ: Տեսակ ասվում է բազմաթիվ և իրարից թվով տարբերվող իրերին՝ ցույց տալով այդ իրերի էությունը (Դավիթ Անհաղթ, Վերլուծություն Պորփյուրի):

Իններորդ՝ սա ենթակա է լինում, իսկ նա՝ ստորոգվում[16]:

Տասներորդ՝ սա ծանոթ է և հյուրընկալ, իսկ նա՝ սրա մոտ եկած, ըստ այս խոսքի. **«Եթե մեկը սիրում է ինձ, իմ խոսքը կպահի, և իմ Հայրը նրան կսիրի. և մենք նրա մոտ կգանք ու նրա մոտ կօթևանենք»** (Հովհ. ԺԴ 23): Իսկ չարը սրա հակառակն է:

Նախ՝ Աստծուց չի գոյացել:

Երկրորդ՝ էություն չունի:

Երրորդ՝ բնությունից չի լինում, այլ կամքից, որը բնությունից հետո երկրորդն է:

Չորրորդ՝ բնությանը ներհակ է ու ապականող:

Հինգերորդ՝ չարը բազմաթիվ պատուհաններ է բերում իրեն կրողին:

Վեցերորդ՝ չարը, միջնորդելով, սատանայի հետ է կապակցում իրեն կրողին և նրան դասակցում:

Յոթերորդ՝ չարը սատանային հոմանուն է:

Ութերորդ՝ չարը սատանայի համար նյութ է լինում, իսկ վերջինս՝ նրա տեսակավորողն ու էացուցիչը:

Իններորդ՝ չարը ենթակա է լինում, իսկ սատանան՝ գործողի նկատմամբ ստորոգված:

Տասներորդ՝ չարն անոթ և հյուրընկալող է լինում, իսկ սատանան՝ նրա բնակիչը, ըստ այս խոսքի՝ **«Երբ պիղծ ոգին դուրս է ելնում մարդուց, շրջում է անջրդի տեղերում, հանգիստ է փնտրում. և երբ չի գտնում, ասում է. «Վերադառնամ իմ տունը, որտեղից ելա»: Եվ գալիս է ու գտնում այն՝ մաքրված և կարգի բերված: Այն ժամանակ գնում և վերցնում է իրենից ավելի չար յոթ այլ դևեր և մտնում, բնակվում այնտեղ. և այն մարդու վերջին վիճակը լինում է ավելի վատ, քան նախկինը»** (Ղուկ. ԺԱ 24-26):

[16] Ստորոգում - Երբ առարկային հատկանիշ են վերագրում: Ըստ Արիստոտելի, ստորոգությունները (կատեգորիա) տասն են՝ գոյացությունը, որակը, քանակը, առնչությունը, գտնվելու վայրը, ժամանակը, դիրքը, ընդունակությունը, գործողությունը և կրելը:

Հարց. Ի՞նչ է նշանակում հետևյալ խոսքը. «Չարն ու բարին միշտ պատերազմում են մեզ հետ, ինչպես ջերմությունն ու սառնությունը»:

Պատասխան. Բարին էացել է մեր բնության հետ, իսկ չարը կամքին է հետևում: Եվ ինչպես այլ է բնությունը և այլ՝ կամքը, այնպես էլ այլ են չարն ու բարին, և ենթակայությամբ[17], որպես հեծյալ զինվորներ, կռվում են միմյանց դեմ:

Երկրորդ՝ բնությունը միատեսակ բարի է, իսկ կամքը զանազան չարերի է հետևում և հավանում դրանց:

Երրորդ՝ երբեմն բնությունն է բարությամբ հաղթում անձին, իսկ երբեմն էլ կամքը՝ անձին:

Չորրորդ՝ չարը բնության վրա չի կարող ներգործել, որովհետև բնությունը նույն գոյությունից չի այլայլվում, սակայն չարը կամքին երեք կերպ է հաղթում:

-Նախ՝ ինչպես որ չարը բնություն չէ, նույնպես և կամքը բնություն չէ, այլ բնությանը հետևող:

-Երկրորդ՝ ինչպես որ չարն է բարությունից այլայլվում, նույնպես և կամքն է ենթակա այլայլության:

-Երրորդ՝ կամքը հավանող է, որի համար չարը հնարներով հավանել է տալիս նրան իր գործերին, և այդպիսով չարը, միաբանելով կամքի հետ, կռվում է բարի բնության դեմ:

Հինգերորդ՝ չարը զգայարանների միջոցով շրջապատում է անձը և կռվում բարու դեմ, որովհետև զգալի բարիքները՝ [նյութական բարիքներն] այստեղ են և այս ժամանակի մեջ, իսկ բարու դիմաց սպասելիքները՝ [հատուցումը] այստեղ չեն և այս ժամանակի մեջ չեն, այլ հանդերձյալում և երկնքում են լինելու: Զգայարաններով այն է տեսնում, որ այժմ կա և այստեղ է, իսկ հանդերձյալինը չի երևում, որի պատճառով առավել հավատում է սրան, որ երևում է:

Վեցերորդ՝ չարը հաղթում է մարդուն՝ անհրաժեշտ կրքերի հետ ավելորդություններ խառնելով: Սրա մասին էլ մարգարեն ասում է. **«Ինձ իմ մերձեցողներից փրկի՛ր, քանզի կարիքով են հարձակվել ինձ վրա»** (Հմմտ. Սաղմ. ԾԴ 19): Այսինքն՝ մեր բնական կարիքներն օգտագործելով են մեր դեմ մարտնչում մերձավոր դևերը:

Յոթերորդ՝ երբեմն Աստծու քաղցրության և ներողամտության մասին մտածել տալով, մեղքերը փոքրացրած են ներկայացնում գործողի աչքին՝ ասելով, թե այդ փոքր հանցանքներն ինչպե՞ս կարող են հիշվել Աստծու քաղցրության կողքին:

Ութերորդ՝ երբեմն Աստծու բարկությունն են հիշեցնում և փոքր հանցանքը մարդու աչքին ծանրացնում և ներշնչում, թե ինչպե՛ս պիտի ազատվի Աստծու բարկությունից ու նրա արդար դատաստանից: Այս կապակցությամբ մարգարեն ասում է. **«Շատերն էին ասում իմ մասին. «Սա փրկություն չունի իր Աստծուց»** (Սաղմ. Գ 3):

Իններորդ՝ բարի [գործելը] հետագայի վրա են թողնել տալիս՝ ասելով, թե երբ ծերանաս, կապաշխարես, իսկ երբ հիվանդանաս, կխոստովանես: Իսկ ով հույսով է մեղք գործում, անհույս կորչում է:

Տասներորդ՝ նախ վարժեցնում են մեղքերին՝ այն սովորություն դարձնելով, իսկ այդ դաստիարակությունը մակաստացական բնություն է դառնում, և [մարդիկ] այլևս չեն կարողանում սովորական դարձած մեղքերից ետ դառնալ, որովհետև սովորությունը բռնակալի պես վերահսկում է և միշտ մեղանչել տալիս գործողին, որի համար և ասում է. «Բարին ու չարը մեր մեջ միշտ պատերազմում են»: Ինչպես նաև Պողոսն է ասում. **«Ոչ թե անում եմ բարին, որը կամենում եմ, այլ գործում եմ չարը, որը չեմ կամենում»** (Հռոմ. է 19):

[17] Ենթակայել -Որևէ իրի վերաբերյալ գաղափար և ծանոթություն կազմել: Սա սովորաբար ածականով է հանդես գալիս, ինչպես, օրինակ՝ գույնի գաղափարը և համի ծանոթությունը գինու համար: Անենթակա է ասվում, երբ գաղափարը վեր է առնվում իրից և հանդես գալիս իբրև ինքն իրեն կայացած իր և նշանակվում գոյականով: Ինչպես, օրինակ՝ կարմրություն, քաղցրություն և այլն: Սրանք ճշմարիտ գոյականներ չեն, այլ անենթակա գաղափարների և ծանոթությունների անուններ:

25

Քսանհինգերորդ հարց. Ի՞նչ է նշանակում հետևյալ արտահայտությունը. «Եթե չար է, ապա սրանցից բացի չարությունից ուրիշ ոչինչ չի գոյանա»:

Պատասխան. Նախ ասում էր, թե երկու բարի կա: Առաջինը անեղական բարին է, որն Աստվածային բնությունն է, իսկ երկրորդը՝ եղական բարին, որ եղականների մեջ է գոյանում: Չարը սրանցից չէ:

Նախ՝ որովհետև Աստված գոյ է՝ անսկիզբ ու բարի, անեղական բարի և էությունների բարություն բաշխող: Իսկ չարը սրանցից ոչինչ չունի, որովհետև նա գոյ չէ և ո՛չ անսկիզբ է, ո՛չ բարի, ո՛չ անեղական բարի, ո՛չ էլ էությունների բարություն բաշխող, այլ համակ չարություն: Իսկ եղական բարու կապակցությամբ [ասենք] նախ, որ եղական բարին Աստված է ստեղծել, որը նաև էություն է, լինում է բնությամբ, բարի է և փառքի է տանում: Իսկ չարն այս չէ, այլ համակ չարություն է:

Դարձյալ, ինչպես վերը ցույց տրվեց, չարի և բարու տասը տեսակ զանազանություն կա, և չարը բարուն տասը կերպով է ներհակ: Ուստի ասում է. «Եթե չար է, ապա սրանցից բացի չարությունից ուրիշ ոչինչ չի գոյանա»:

Դարձյալ՝ օրինակով խոսենք. ինչպես խավարը մթին կերպարանքներից բացի ուրիշ տեսք ստանալ չի կարող, նույնպես էլ չարը չի կարող լինել ո՛չ անմահություն, ո՛չ անապականություն և ո՛չ էլ կարող է ունենալ բարու այլ հատկանիշներ, այլ միայն մահ է ու ապականություն:

26

Քսանվեցերորդ հարց. Ի՞նչ է նշանակում հետևյալը. «Ամեն ոք, ով իրավացիորեն փափագում է, հարմար ձևով ունենում է իր փափագածը, եթե հաճությամբ է բաղձում»:

Պատասխան. Նախ այն է ասում, թե ինչի՛ էլ որ ձգտի մարդը, բարու թե չարի, հարմար ձևով ունենում է իր փափագածը: Այսինքն՝ որին որ ցանկանում է, նրա հետ հարմարվում է իր բնությունը: Օրինակ՝ ինչպես օդը փոփոխվում է միմյանց հակառակ կողմերի միջև, այսինքն՝ մեկ դեպի լույսը և մեկ՝ դեպի խավարը, մեկ դեպի ջերմությունը և մեկ՝ դեպի ցուրտը: Նաև ջուրը, դեպի ո՛ր ծառը որ գնում է, այդ ծառի պտուղն է դառնում: Նույնպես և մարդը, իր անձնիշխան կամքով երբեմն դեպի բարին, իսկ երբեմն դեպի չարն է փոխվում:

Դարձյալ ասում է. «Ամեն ոք, ով իրավացիորեն փափագում է, հարմար ձևով ունենում է իր փափագածը, եթե հաճությամբ է բաղձում»: Այսինքն՝ իրավացին այն է, երբ բարուն է փափագում, որն աստվածային, անեղ բարին է, որը մեզ պատկերակից է արել իր բնությանը: Բարին Աստծուց է, որ բնությունը բարի է ստեղծել, և Նա բազում բարիքներ է խոստանում բարիներին: Դրա համար է «իրավացի փափագում» ասում, որ մեր նախատիպին ձգտենք, որի՝ բարու զորությունը սերմանված է մեր բնության մեջ: Եվ ով այսպես իրավացիորեն փափագի, իր փափագածը հարմար ձևով կունենա, այսինքն՝ որպեսզի մեր բարի բնությունը հոժարի բարուն, որովհետև այն բնությակից է բարուն, այսինքն՝ եղական բարուն, և նման է անեղական բարուն: Դրա համար է «իրավացի փափագում» ասում, երբ հաճությամբ է բաղձում: Այսինքն՝ բնությունը հաճությամբ է բարուն ցանկանում, քան չարին, իսկ կամքը՝ մարմնին, և հետևում է չարին, ոչ թե բնությանը:

Դարձյալ՝ հաճությամբ բաղձալ, այսինքն՝ բարին ցանկանալու դեպքում բարեսերի համար ամեն մի դժվարություն դյուրության կփոխվի, ինչպես որ կուսությունը, մարտիրոսությունը, ճգնությունը և ամեն տեսակ խստակրոն վարքը դյուրին է գործողի համար: Իսկ անիրավ փափագումն այն է, երբ մարդ չարին է փափագում և անցողիկը ցանկալի դարձնում, զազրելին՝ բաղձալի, իսկ ատելին՝ սիրելի:

Դարձյալ՝ անիրավ փափագում է, որովհետև չարն օտար է մեր բնությանը: Որովհետև Աստծու կողմից չի ստեղծվել, էությունն չէ և ներհակ է մեր բնությանը, նաև մահ ու ապականություն է բերում և անանցանելի տանջանքների մատնում փափագողին: Նրա համար է անիրավ, ով այս բոլոր չարերին է տենչում: Դրա համար և ասում է. «Ապա ուրեմն չարությունն ապականում է»:

Հոգին անիրավությանը դյուրությամբ և հեշտությամբ չի փափագում, այլ դժվարությամբ և ակամա, թեպետև հեշտասիրության ախտերից և հոգու [եկամուտ] մասերից բռնադատված՝ ձգտի անբան ու անիրավ փափագին (Ներսես Շնորհալի):

27

Քսաներեքերորդ հարց. *Ի՞նչ է նշանակում հետևյալ արտահայտությունը. «Եթե ապականում է, ինքն էլ է ապականվում»:*

Պատասխան. *Ինչպես ապականված նյութի մասնիկը երբ խառնվում է բնությամբ պարզ մեկ այլ նյութի, ապականում է այն և, այլոց ապականելով, ինքն էլ է ապականվում: Այսինքն՝ ինչպես հին խմորը նոր խմորվածին այլայլում է ու քայքայում և, ապականելով նրան, ինքն էլ հետն է ապականվում: Այդպես է նաև քացախը, որն ապականված է և ապականում է այն ամենը, ինչի որ խառնվում է, և ինքն էլ նրա հետ ապականվում է: Օրինակ՝ երբ քացախը լցնում են կրի վրա, քայքայում է նրա բնությունն ու ապականում չաղախը՝ ինքն էլ հետը ապականվելով:*

Նույնպես և չարը, որին մոտենում է, ապականում է, և վերջինիս կործանումով՝ ինքն էլ նրա հետ ապականվում է:

Թեպետև ասում է, թե չարությունը *ինչի՛* որ մոտենում է, ապականում է, սակայն երբ չի գտնում նյութ, որի վրա կարող է չարությամբ ներգործել, լուծարվում է ապականությամբ: Այս-

տեղ չարությունը լուծարվում է մասնակի, և այդ այն դեպքում, երբ մարդիկ հեռանում են նրանից և բարին գործում: Իսկ հանդերձյալում առհասարակ կլուծարվի, երբ պակասեն երկրից մեղավորները և չեն գտնվի այլևս ամբարիշտները:

Ինչպես հին ժամանակներում Աստված ջրհեղեղով ջնջեց մեղավորներին իրենց մեղքերով հանդերձ, նույնպես և երկրորդ անգամ կրակով կմաքրի չարությունը՝ չարերով հանդերձ: Կրակը կարող էր չլինել, եթե այրվող նյութեր չլինեին, նույնպես և չարությունը չէր լինի, եթե մեղսասեր անձինք չգտնվեին, որոնց մեջ չարը կարող է բնակվել ու ներգործել: Ըստ որում՝ մահկանացուների լուծարումով կվերանա նաև մահը և այլևս չի լինի: Այսպես և չարը կոչնչանա ապականությամբ, եթե ամենքը բարի լինեն (Ներսես Շնորհալի):

28

Քսանութերորդ հարց. *Ի՞նչ է նշանակում հետևյալ արտահայտությունը. «Եվ ապականվածը անեղ չէ»:*

Պատասխան. *Եթե ապականվելով փոփոխություն է կրում, ապա ինչպե՞ս անեղ կլինի:*

Դարձյալ՝ սատանան բազում փոփոխություններ կրեց և անեղ չի կոչվում:

Նախ՝ որ անէությունից փոփոխվեց:

Երկրորդ՝ բարուց չարի փոխվեց:

Երրորդ՝ իր չարությամբ ուրիշներին դեպի չարը փոխեց:

Չորրորդ՝ չարության պատճառով տանջանքների մեջ փոփոխություն է կրում:

Հինգերորդ՝ տանջվելով այլայլվում է իր էությունից:

Վեցերորդ՝ այլայլությամբ բնությունն ապականվում է:

Ով կրել է այս բոլոր փոփոխությունները, ինչպե՞ս անեղ կլինի: Դրա համար էլ ասում է. «Ապականվածն անեղ չէ»:

29

Քսանիններորդ հարց. Ի՞նչ է նշանակում հետևյալը. «Եթե չարությունն անեղ լիներ, ապա ըստ բնության առավել չարը կգոյանար»:

Պատասխան. Այսինքն՝ եթե չարությունն անեղ լիներ, այդ դեպքում նրանից առաջ եկած չարը գոյացություն կլիներ: Եվ երբ ցույց տրվեց, թե չարն անեղ չէ, ապա իրենից առաջ եկած ուրիշ չարերն էլ էություն չունեն, այլ չարը պատահմունք է և բարու պակասություն, ինչպես որ խավարը՝ լույսի:

Չարն անեղություն չէ, և ըստ բնության նրանից չար չի գոյանում: Այսինքն՝ սատանան անեղ չէ, և ոչ էլ չարը՝ բնություն, որ մնայուն լինի, այլ պատահմունք է, որ ենթակայի ապականությամբ կորչելու է:

30

Երեսուներորդ հարց. Ի՞նչ է նշանակում հետևյալ արտահայտությունը. «Ըստ բնության գործելով՝ ոչ ոք չի մեղանչում»:

Պատասխան. Այսինքն՝ եթե չարը մեկի մեջ բնությամբ լիներ, ապա չարագործները պատժի մեղադրությունից ազատ կլինեին: Որովհետև անհրաժեշտ կրքերը բնության պահանջներն են գործում և չեն մեղանչում, ինչպես, օրինակ՝ ուտելը, ըմպելն ու ննջելը բնական կրքեր են և մեղանչումներ չեն:

Դարձյալ՝ եթե չարը բնությամբ լիներ, ոչ ոք չէր կարող կույս կամ պարկեշտ լինել, որովհետև բնության կրքերին ոչ ոք չի կարող հաղթել: Բայց որովհետև բնությունը բարի է ու բարի Արարչից ստեղծված, իսկ չարը՝ եկամուտ, ուստի և օտարն ու ներմուծվածը դյուրին է բնությունից դուրս հանելը, ինչպես որ սրբերն արեցին:

31

Երեսունմեկերորդ հարց. Ի՞նչ է նշանակում հետևյալը. «Չարը մեղանչում է»:

Պատասխան. Ոչ ոք թող չկարծի, թե չարը բնությամբ է մեր մեջ, և այդ պատճառով ենթադրի, թե չար գործողը անմեղ է՝ ասելով, թե բնությունն է հարկադրում մեղանչել, իսկ գործողն անպարտ է: Այլ իմացի՛ր, որ բնությունը բարի ու անմեղ է ստեղծված, իսկ չարը մեղանչում է, որ օտար է մեր բնությանը և մեր մեջ՝ արկած: Ով մեղանչում է, բնությամբ չի մեղանչում, այլ բնությունից դուրս է մեղանչում: Ապա թե ոչ՝ ինչո՞ւ է Աստված՝ Արդարադատ Թագավորը, մեղավորին դատապարտում: Նա մեղավորին տանջանքների է մատնում, որովհետև աստվածադիր բնությանը հակառակ է գործել: Հետևաբար չարը մեր մեջ բնություն չէ, և բնությունը մեղք չի գործում, այլ չարն է մեղանչում:

32

Երեսուներկուերորդ հարց. Ի՞նչ է նշանակում հետևյալը. «Ով չի մեղանչում, բամբասանքի[18] ենթակա չէ»:

Պատասխան. Այսինքն՝ եթե չարը մեր մեջ բնությամբ լիներ, ապա չմեղանչելու դեպքում բամբասանքի ենթակա կլիներ, որովհետև բնության գործին հակառակվել էր: Այլ քանի որ բնությունն անմեղ է ու բարի և մեզ բարին է գործել տալիս, հետևաբար՝ ով չի մեղանչում, բամբասանքի ենթակա չէ: Այլ նա է բամբասանքի ենթակա, ով, հակառակ իր անմեղ բնությանը, չարն է գործում, ինչն իր բնությանն օտար է: Տե՛ս, որ անօրենները նույնպես գովում են բարեգործ մարդկանց, այսինքն՝ կույսերին, ճգնավորներին ու պարկեշտներին:

Եվ դարձյալ քաղաքական օրենքները պատուհասում են չա-

[18] Բամբասանք ասելով այստեղ ի նկատի ունի դատապարտություն, պարսավանք, հանդիմանություն, մեղադրանք:

րերին ու մահվան մատնում, որովհետև բարի բնությանը հակառակ են գործում: Դրա համար Արիստոտելն ասում է. «Գովելի են գեղեցիկները և պարսավելի՝ գարշելիները»: Հետևաբար և ասվում է. «Ով չի մեղանչում, բամբասանքի ենթակա չէ, այլ գովասանքի ու պատվի արժանի»:

33

Երեսուներեքերորդ հարց. Ի՞նչ է նշանակում հետևյալը. «Սատանան բամբասանքի ենթակա է»:

Պատասխան. Նախ՝ որովհետև Աստծուց բարի է ստեղծվել և հետո է չարացել:

Երկրորդ՝ իր բնությանը հակառակ է գործել:

Երրորդ՝ իր Արարչին է հակառակվել:

Չորրորդ՝ լույս է եղել, ապա խավար դարձել:

Հինգերորդ՝ հանգիստը թողել ու անանցանելի չարչարանքներն է ընտրել:

Վեցերորդ՝ ոչ թե մեկ ուրիշից է բռնադատվել չար լինել, այլ կամովին է չարն ընտրել:

Յոթերորդ՝ ոչ թե միայն ինքն է կորել, այլև ցանկանում է բոլորին ապականել:

Ութերորդ՝ բանական լինելով՝ այնքան է անբանացել, որքան անբան անասունները, և դեռ ավելի վատթար է եղել, որովհետև բոլոր անասուններն իրենց օգուտն են ընտրում, իսկ սա իր չարչարանքն ու կորուստն է ընտրել: Եվ սրանց համար է ասվում, որ մեղքով բռնված ոգիները միտքն էլ են կորցնում:

Իններորդ՝ որովհետև գիտե, թե որքան շատ ուրիշների չարի մեջ գցի, այնքան անչեջ կրակում իր չարչարանքները կավելացնի, սակայն ջանում է ամեն օր իր չարչարանքներն ավելացնել:

Տասներորդ՝ այս ամենն իմանալով՝ այդուհանդերձ չի զղջում ու չի ապաշխարում չարի համար:

Տասնմեկերորդ՝ Աստված այսքան ժամանակ թույլ տվեց նրան, որ թերևս զղջա, սակայն նրա փույթը չէ:

Տասներկուերորդ՝ այս բոլոր չարություններից հետո էլ Աստված դեռևս քաղցրությամբ էր խոսում նրանց հետ, սակայն չզղջացին: Սա հայտնի է Հոբի օրերին [Աստծու]՝ սատանային ասած [խոսքերից]. **«Որտեղի՞ց ես գալիս դու»** (Հոբ Ա 7): Եվ դարձյալ ասում է քաղցրությամբ. **«Ուշադրություն դարձրի՞ր իմ ծառա Հոբին»** (Հոբ Ա 8): Եվ դարձյալ ասում է. **«Տեսա՞ր արդյոք իմ ծառա Հոբին»** (Հոբ Բ 3): Եվ այս բոլոր բարությունները և քաղցրությունները տեսնելով՝ կրկին չարությունից չդարձան:

Տասներեքերորդ՝ տեսան, որ Աստված լսում էր իրենց, սակայն չաղաչեցին իրենց խև չարից իրենց ազատել: Հայտնի է, որ Աստված լսում էր նրանց:

Նախ՝ երբ Աստծուց խնդրեցին Հոբին փորձություն տալ, լսեց նրանց և Հոբին նրանց ձեռքը տվեց:

Եվ դարձյալ խնդրեցին Հոբին այլ փորձությունների մատնել, այսինքն՝ որդերի ու մարմնի թարախի, և սա նույնպես անսաց, թերևս այս մեկով նրանց համար փրկություն որսար, սակայն անդարձները չարից երես չդարձրին:

Այնուհետև լինում է երրորդ խնդրանքը ևս, որով դիմեցին Քրիստոսին, և Տերը լսեց նրանց:

Նախ՝ աղաչեցին Քրիստոսին, որ հրաման տա նրանց՝ խոզերի մեջ մտնել (Տե՛ս Մատթ. Ը 31): [Տերը] կատարեց նրանց խնդրանքը:

Երկրորդ՝ Քրիստոսին աղաչեցին՝ ասելով. **«Աղաչում ենք քեզ, Հիսո՛ւս, Բարձրյալի Որդի՛, տարաժամ մեզ մի տանջի՛ր»** (Տե՛ս Մատթ. Ը 29): Եվ նրանց խնդրանքը կատարեց:

Եվ ով նրանց այսքան աղաչանքները լսեց, դարձյալ կլսեր նրանց, եթե այլ մեծագույն խնդրանքներ ևս մատուցեին: Եվ դրա համար էլ ասում է. «Սատանան բամբասանքի ենթակա է», որովհետև այս բոլոր քաղցրությունը տեսնելով՝ չզղջացին: Դրա համար Տերն ասում է. **«Այս աշխարհի որդիներն ավելի իմաստուն են, քան լույսի որդիներն իրենց սերնդի մեջ»** (Տե՛ս Ղուկ. ԺԶ 8):

Եվ քանի որ շատ մեղավորներ ու մաքսավորներ դեպի Քրիստոս դարձան, իսկ նրանք այս բոլոր քաղցրությունները տեսան և չարից չհրաժարվեցին: Ուստի ասում է. «Բամբասանքի ենթակա է սատանան»:

Հարց. Ի՞նչ է նշանակում հետևյալը. «Ով անեղը ստորոգում[19] է, ճշմարտապես ինքն է չարը»:

Պատասխան. Ով երկու սկիզբ ընդունելով պնդի, թե երկուսն էլ անեղ են՝ մեկը Բարին Աստված, մյուսը՝ չար սատանան, ինչպես Մանիքոսն է ասում, ապա նա ճշմարտապես ինքն է չար, քանի որ այսպիսի չար հերետիկոսություն է խոսում:

Եվ դարձյալ՝ ով ասի՝ «Չարն առանց մեր մեղանչելու և մեղքեր գործելու է մեր բնության մեջ, իսկ մեղանչողները բնությունից հարկադրված են մեղանչում, որովհետև բնությունը մեղանչական է», այնպիսին չար է ըստ իր հոժար կամքի և ըստ մտքի կուրության, քանզի մեղքով բռնված հոգիների միտքը ևս կուրանում է: Դրա համար էլ ասում է. «Ով անեղն է ստորոգում, ճշմարտապես ինքն է չար»:

Բամբասանքի ենթակա է սատանան: Խոսքի վերջում հայտնի է դառնում նաև իմաստասերի մտքի տեսությունը, որի համար և ավեց այս ամենը: Չնայած սկզբում անեղաբար ճառեց, թե ամբողջ չարը ենթակա է տանջանքի և այլն, վերջում հայտնում է, որ խոսքը վերաբերում է ամբողջ չարի հորն ու նրա ծառաներին և նրանց, ովքեր չարին անեղ ասացին: Դրա համար էլ արդարացնում է խոսքը բանականների համար իր դատաստանով, թե նա, ով իր բնությանը հակառակ է գործում, մեղանչում է, և ով մեղանչում է, տանջվում է, և ով տանջվում է, ապականվում է:

[19] *Ստորոգումը պատշաճ է միայն եղական գոյերին, որոնք նյութից, տեսակից, գոյացությունից և պատահումներից են ժողովված: Իսկ անեղ և պարզ էությանը պատշաճում է միայն համեմատությունը (Գրիգոր Տաթևացի, Գիրք Հարցմանց):*

Եվ սրանց առաջին կրողը սատանան է, որն առաջին չարն է, որը և բամբասանքի և մեղքի տակ է: Ինչպես և վկայում է Աստվածային խոսքը՝ **«Սատանան մեղանչող է ի սկզբանե»** (Ա Հով. Գ 8): Նաև՝ **«Սատանան ի սկզբանե մարդասպան էր և ճշմարտության մեջ չմնաց...»** (Տե՛ս Հով. Ը 44):

Հայտնելով, թե ե՛րբ նա ստեղծվեց, ճշմարտության մեջ էր, որը և բարին է, իսկ հետո թողեց ճշմարիտ բարին ու սիրեց չարությունը և չար կամավորությամբ ապստամբեց Արարչի դեմ ու մարդկային բնության չարի պատճառը եղավ: Որից հետո ինքնահոժար կամքով փոխանակ բարու, որ ուներ Աստծուց, ընկալեց չարությունը, որը չուներ և չկամեցավ երբեք զղջմամբ հեռանալ չարից ու դառնալ առաջին բարուն, որը կորցրեց ապստամբությամբ: Սրանից հայտնի է, որ նա անեղ չէ, քանի որ անեղ բնությունը, որ է՝ Աստված, երբեք չի փոփոխվում, ինչպես [օրինակ] բանականների բարին: Իսկ սատանան, որը բարի էր, փոփոխվելով չար եղավ: Այդ պատճառով նա անեղ չէ, այլ եղական:

Եվ ի՞նչն է նրա անփոփոխելի չարության և մշտապես չար ունակության պատճառը: Դա առաջին [հերթին] ինքնահոժար կամքի խոտորումն է, ամբարտավանության ախտը և իր անձը ուղիղ ու անսխալական ընդունելը: Քանի որ բոլոր մեղքերը, որոնք ճանաչվում են մեղավորի կողմից, հանցանքից դյուրադառնալի են, իսկ ամբարտավանությունը դժվար դառնալի է, քանի որ անձը չի խոնարհվում իրեն հանցավոր համարելով, այլ միշտ արդար և ուղիղ է իրեն համարում, եթե անգամ թյուր լինի և սուտ: Եվ որովհետև սատանան ամբարտավանությամբ մեղանչեց, ըստ որում ոչ ինչպես մատաղատունկը, որը սատանայի որոգայթն ընկավ, նույն պատճառով էլ անզեղջ մնաց չարից, որով բռնվեց:

Երկրորդ պատճառը՝ որովհետև Աստված չնորհով մարդկային բնությանը երկու հարություն է տվել. մեկը՝ հոգով և մարմնով բնական մահվանից հետո, ըստ Իր անսուտ խոստման, պիտի կենդանանանք համընդհանուր հարության ժամանակ, մյուսը՝ հոգու

անբնական մահվան ժամանակ ապաշխարությամբ մեղքերից պիտի հառնենք:

Իսկ անմարմին բնության համար այդպես չէ՝ ըստ Աստծու արդար դատաստանի, քանի որ նրանք մարդկանց նման կարիքից դրդված չեն գործում և թշնամի ու պատրանքներ հորինող չունեն:

Այլև մենք այսքանից առավել Աստծուց հնարավորություն ունենք խոստովանությամբ և ապաշխարությամբ հոգու մեռելությունից կենդանանալու՝ օրհնյալ Աստծու փառքի համար: Հավիտյանս ամեն (Ներսես Շնորհալի):

Եվ այսքան պատճառների համար ասաց. «Ամբողջ չարը տանջանքի ենթակա է»: Որից՝ և մեզ փրկի մարդասերն Քրիստոս՝ դժոխքի դռներից ու տանջանքներից: Ավարտվեցին «Սահմանումների գրքից» քաղվածքներն ի փառս մեր Աստծու Հիսուս Քրիստոսի, որ օրհնյալ է հավիտյան:

Փառք Ամենասուրբ Երրորդությանը և մի Աստվածությանը՝ Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն: Ամեն:

Դավիթ Ահաղթի
Իմաստասիրական սահմանումները՝ «Ամենայն չար տանջելի»

Ամբողջ չարը ենթակա է տանջանքի. ոչ ոք առանց ապականվելու չի տանջվում: Անեղն ապականացու չէ, չարն ապականացու է: Չար է, ուրեմն անեղ չէ:

Ոչ ոք բնությամբ չար չէ, հետև աբար չարն արարկություն (գործունեություն) է: Չարագործությունն է ոչ ոքի գոյությանը չձեռնարկելը, ապա ուրեմն չարը գոյացություն չէ:

միմյանց ընդդիմացող բոլոր չարերը միմյանց ապականիչ են, հակառակ են, ուրեմն անապական չեն:

անեղն անփոփոխելի է, և փոփոխվող բարին չարից պարտվում է: Բարի է, ուրեմն անեղ չէ:

Անեղը որևէ մեկի ապականությունը ցանկացող չէ և ոչ ոքի ապականող չէ, իսկ չարն ապականություն ցանկացող է: Չար է, ուրեմն անեղ չէ:

Իսկ Աստվածային գրքերը տանջանքների են մատնում ոչ միայն այլ չարերին, այլ նույն իրեն՝ բանսարկուին:

Ասում են նաև, որ բոլոր տանջանքի մատնվածներն այլայլելի են: անեղը չի այլայլվում, ուրեմն չարից ոչինչ անեղ չէ:

Ովքեր բոլորովին ընդդիմանում են, ընդհանուր ոչինչ չունեն, ինչպես նա, ով ամենայն հարկավորությամբ մի գոյություն ունի, ուրիշ գոյություն չի ունենա:

Անեղ լինելով հանդերձ՝ նաև գոյացյալ բարություն է:

եթե չար է, ապա նրանից չարությունից բացի ուրիշ ոչինչ չի գոյանա:

Յուրաքանչյուր ոք, ով իրավացիորեն փափագում է, հարմար ձևով ունենում է իր փափագածը. եթե դյուրությամբ է բաղձում,

ապա ուրեմն ապականացու է չարութիւնը: Եվ եթե ապականում է, ապա ապականվում է և ինքը: Եվ ապականվածն անեղ չէ:

Եթե չարութիւնն անեղ լիներ, ապա ըստ բնութեան առավել չարը կգոյանար: Ըստ բնութեան գործելով՝ ոչ ոք չի մեղանչում: Չար է, ուրեմն մեղանչում է:

Ով չի մեղանչում, բամբասանքի ենթակա չէ: Բամբասանքի ենթակա է սատանան, ապա ուրեմն անեղ չէ:

ԱՌԱՔԵԼ ՍԻՒՆԵՑԻ

«Ամենայն չար տանջելի»

Նորին Տէր Առաքելի Սիւնեաց եպիսկոպոսի 'ի տեսութիւն բանին, որ ասէ. Ամենայն չար տանջելի:

Զի՞նչէ որ ասէ. «Ամենայն չար տանջելի»:

Պատասխան: 'Ի վերայ այսր բանի երեսուն և երեք ինչ խնդրելի է:

Նախ՝ թէ յի՞նչ պէտս Հարկ եղև փիլիսոփայս գրել զայս:

Երկրորդ՝ զի՞նչէ բարին և կամ զի՞նչէ չարն:

Երրորդ՝ թէ ուստիւ՞ սկզբմունք տցա, այսինքն՝ բարւոյ և չարի:

Չորրորդ՝ թէ վասնէ՞ր թոյլ ետ Աստուած գոլ չարին:

Հինգերորդ՝ զի՞նչէ որ ասէ. Ամենայն չար տանջելի:

Վեցերորդ՝ զի՞նչէ որ ասէ. Ո՛չ ոք տանջեալ անապական:

Եօթներորդ՝ զի՞նչէ որ ասէ. Ո՛չ ոք ապականեցու անեղ:

Ութերորդ՝ զի՞ ասէ. Է չար ապականացու:

Իններորդ՝ զի՞ ասէ. Չար ուրեմն ոչէ անեղ:

Տասներորդ՝ զի՞ ասէ. Ոչ ոք ըստ բնութեան չար:

Մեսասաներորդ՝ զի՞ ասէ. Չարարկութիւնէ ոչ ոք արկութիւն գոյացութիւն:

Երկոտասաներորդ՝ զի՞ ասէ. Ամենայն չար ընդ դիմակոքն միմեանց ապականիչք:

Երեքտասաներորդ՝ զի՞ ասէ. Ոչինչ անեղ փոփոխելի:

Չորեքտասաներորդ՝ զի՞ ասէ. Բարի ուրեմն ոչէ անեղ:

Հինգետասաներորդ՝ զի՞ ասէ. Անեղն ոչէ ցանկացող ապականութեան ուրուք և ոչ ապականիչ:

Վեչտասաներորդ՝ զի՞ ասէ. Չարն ցանկացողէ ապականութեան:

Եօթնեւտասաներորդ՝ զի՞ ասէ. Չար ուրեմն ոչէ անեղ:

Ութեւտասաներորդ՝ զի՞ ասէ. Իսկ Աստուածային գիրք տանջանաց մատնեն զչարան:

Իններեւտասաներորդ՝ զի՞ ասէ. Եւ ամենայն տանջանաց մատնեալն այլ այլելիէ:

Քսաներորդ՝ զի՞ ասէ. Ո՛չ ոք այլ այլի անեղ:

Քսաներորդ առաջնորդ՝ զի՞ ասէ. Ո՛չ ինչ ՝ի չարեացնէ անեղ:

Քսաներորդ երկրորդ՝ զի՞ ասէ. Որ բոլորովին ընդ դիմակքնեն՝ ոչ ունին հաւասարութիւն:

Քսաներորդ երրորդ՝ Որպէս զի ամենայն հարկաւորութեամբ, որ ՝ի միումն գոյացեալ, ՝ի միւսումն ոչ ևս գոյանայ:

Քսաներորդ չորրորդ՝ Եւ է գոյացեալ բարութիւն գոլով անեղն:

Քսաներորդ հինգերորդ՝ զի՞նչ է, որ ասէ. Զար ուրեմն ոչ ինչ գոյանայ յայսցանէ, բայց միայն չարութիւն:

Քսաներորդ վեցերորդ՝ որ ասէ. Ամենայն որ իրաւացի փափագէ ումեք յարմարեալ ունի զփափագումն. եթէ դիւրութեամբ բաղձանայցէ:

Քսաներորդ եօթներորդ՝ որ ասէ. Եթէ յապականացուցանէ ապականի և ինքն:

Քսաներորդ ութերորդ՝ որ ասէ, Թէ և ապականեալն ոչէ անեղ:

Քսաներորդ իններորդ՝ որ ասէ, Թէ անեղ իցէ չարութիւն, ըստ բնութեան գոյանայ չարագոյն:

Երեսուներորդ՝ որ ասէ. Ոչ ոք ըստ բնութեան մեղանչէ:

Երեսուներորդ առաջնորդ՝ որ ասէ. Զար ուրեմն մեղանչէ:

Երեսուներորդ երկրորդ՝ որ ասէ. Եւ որ ոչն մեղանչէ ոչէ ընդ բամբասանօք:

Երեսուներորդ երրորդ՝ որ ասէ. Եւ ընդ բամբասանօքէ սատանայ:

1

Եւ նախ՝ ասասցուք, թէ յի՞նչ պէտս հարկ եղև իմաստնոյն գրել զայսոսիկ, այսինքն՝ վասն երեք պատճառի:

Նախ ընդդէմ Պիհռոնացոցն գրեաց, որք զիմաստութիւն, որէ պարգևք Աստուածային ՝ի վերուստ իջեալ, ոչ ասացին:

Երկրորդ՝ ընդդէմ այնոցիկ, որք զչարն անեղութիւն և բնութիւն ունողացն ասացին, այսինքն՝ ընդդէմ Մանիքոսի, որ երկու սկզբմունս ասաց աշխարհի, այսինքն. մին բարի անեղ որէ

Աստուած և մի՛ւսն չար անեղ, որպէս թէ այլ ոմն չար աստուածիցէ. և ասէ՝ զոր ինչ բարի կան բարի Աստուածնէ արարեալ. այսինքն՝ զերկինս և զլոյս և զկեանս և զամենայն բարութիւնս աշխարհի: Իսկ չար Աստուածն զամենայն չարութիւնս արար. զմահ, և զհիւանդութիւն, և զչարչարանք՝ և զդժոխք և զապականութիւն: Այլև զհին օրէնքն չար Աստուածն ետ, զի. «Ակն ընդ ական և ատամն ընդ ատաման և արիւն ընդ արեան»: Իսկ Քրիստոս բարի այն է Որդի, որ բարի արար բնութիւնս: Եւ ասէր չարն բնութեամբ է յորոք և իցէ չարն այն բնաւորեալ:

Երրորդ՝ ընդդէմ այնոցիկ գրեաց որք ասացին թէ մի է Աստուած, բայց չար և բարի ՝ի նմանէ եղեն: Եւ սապէս ոմանք չար անեղութիւն ասացին, և ոմանք զչարն յանեղէն Աստուծոյ ասացին:

Եւ յաղագս այսոցիկ հարկեցաւ գրել զայս. զի մի մոլորեսցին մարդիկ յայս դժնակ խաբէութիւնս սատանայի, որ զչարն անեղէն Աստուծոյ ասացին:

2

Երկրորդ՝ վասն բարւոյ և անեղութեան Աստուծոյ, զի յամենայն էիցս միայն Աստուածային բնութիւննէ անեղական և անսկիզբն. և պատճառ ամենայն եղելոցս: Եւ ոչ կարէ երկու սկիզբն լինել, որպէս և կարակնին կէտն ՝ի միոյ սկսեալ առնէ զբոլորակն, այսպէս և ամենայն թուոյ սկիզբն միակէնէ: Այսպէս և ամենայն իր ՝ի միակ էակէնէ, և ոչ երկեակ: Այսպէս և մի է անսկիզբն ամենայն սկզբնաւորաց: Նա միայն է անեղ և անսկիզբն, որէ ինքն Աստուած, այլև բարի, և բնութեամբ բարի. այսինքն զի է բոլորովին բարի, և անփոփոխ բարի, և բարերար ամենայնի, ըստ սմին. «**Չիք ոք բարի, բայց միայն Աստուած**»: Իսկ թէ զինչէ չարն այսինքն զի ասէ ոմն ՝ի բանաւոր կենդանեաց՝ որ նախ բարի ստեղծաւ, ընդ հոմայ ցեղսն իւր, լոյս անուանեալ և արուսեակ:

3

Երրորդ թէ զի՞նչ եղև նորայ պատճառ չարութեան: Այսինքն, երեք իր պատճառ եղև նորա չարութեան:

Նախ՝ զանձ նիչխանութիւն ՝ի կիր արկեալ:

Երկրորդ՝ զի ապստամբեցաւ ընդդեմ յԱստուծոյ:

Երրորդ՝ զի հպարտութեան ախտիւն վարակեալ եղև և հակառակ կոչեցաւ Աստուծոյ. անկաւ յերկնից և սիրեաց չարութիւն:

Զի հեռանալովն յԱստուծոյ զդիմակն ընկալաւ վեց կերպիւ, այսինքն.

Ընդդէմ բարութեան Աստուծոյ չարացաւ:

Եւ ընդդէմ լուսոյն խաւարեցաւ:

Եւ ընդդէմ իմաստութեան յիմարացաւ:

Եւ ընդդէմ ճշմարտութեան ստութիւն եղև:

Եւ ընդդէմ կենաց մահ եղև:

Եւ ընդդէմ արարչութեանն ապականիչ եղև. և բազում այլ այսպիսիս ՝ի հակառակն փոխեցաւ: Եւ գտակ եղև չարեաց, և հայր չարութեան երկրածին բանաւորացաւ:

Այսքան վասն բարւոյ և վասն չարին:

Եվ թէ ո՞վէ անեղ անսկիզբն. և բնութեամբ բարին, այսինքն Աստուած, և թէ զի՞նչէ չարն, այսինքն սատանայ, որ յետոյ չարացաւ:

4

Իսկ չորրորդն. թէ վասն է՞ր թոյլ ետ Աստուած սատանայի: Եւ է աստ չորս հարցումն:

Նախ, զի գիտէր Աստուած, զի սատանայ չար լինելոց էր, վասն է՞ր ստեղծ զնա:

Երկրորդ՝ թէ վասն է՞ր ո՛չ արգել զանձնիչխանութիւնն սատանայի, զի այն եղև պատճառ չարութեան նորա:

Երրորդ՝ թէ վասն է՞ր ոչ դարձոյց զնա յոչ էութիւն, քան

թէ ներկ նմայ զայս ամենայն առնել:

Զորրորդ թէ յետոյ վասն էր ոչ արգել զնա յանձն իշխան կամացն, զի մի կարասցէ չար լինել:

Եւ նախ, թէ վասն է՞ր ստեղծ զնա որ այնպէս չարեաց սկիզբն լինելոցէ, այսինքն՝ զի գոյ յԱստուած բարութիւն, գոյ և գիտութիւն և թէպէտ գիտէր, որ նա չար լինելոցէր: Այլ գիտութիւնն զբարութիւնն Աստուծոյ ոչ կարաց արգելուլ որ ոչ ստեղծանէր զնա, զի Աստուած զամենայն արարածս վասն բարութեան իւրոյ ստեղծ, զի վայելեսցեն ՝ի բարիս իւր:

Եւ դարձեալ, զի երկոքեանն բարիքեն Աստուծոյ, այսինքն՝ բարութիւնն և գիտութիւնն. և երկու բարիքն ոչ հակառակեցան միմեանց. զի բարիքն ոչեն միմեանց ներհակ այլ օգնական միմեանց վասն որոյ գիտութիւնն Աստուծոյ ոչ հակառակեցաւ բարութեանն Աստուծոյ: Որպէս թէ արգելոյր զստեղծումն նորայ: Վասն որոյ բարի գիտութիւնն թոյլ ետ բարի կամացն Աստուծոյ առնել զբարութիւն:

Եւ դարձեալ, զի գիտութիւնն Աստուծոյ գիտէր, որ բարութիւնն Աստուծոյ զամենայն ոք ըստ բնութեան բարիէր ստեղծեալ: Իսկ թէ ոք արտաքոյ բնութեան իւրոյ կամաւ իւրով ՝ի չարն յօժարին, անբամբասելի է ստեղծողն բարի բնութեան, այսինքն՝ զի բնութիւնն առաջին է քան զկամքն: Վասն որոյ հարկէ, զի կամքն բնութեանն հնազանդի: Իսկ որ զայս մեծ հակառակութիւնս գործէ ընդ անձին իւրոյ, որ զբնութիւնն ծառայեցուցանէ կամացն, այնպիսոյն անմեղադրելի է Աստուած, որ զբարի բնութիւնն ետ նմա: Վասն որոյ գիտութիւնն Աստուծոյ ոչ արգելեաց զբարութիւնն Աստուծոյ, այլ թոյլ ետ ստեղծանել զնա և զնմանիս նորայ, որք են չարք ՝ի մարդկանէ:

Իսկ երկրորդ՝ թէ վասն է՞ր ոչ արգել Աստուած ՝ի նմանէ զանձն իշխան կամքն, զի այն եղև պատճառն կորստեան նորայ. զի թէ ոչ ունէր ազատ կամք, չէր կորուսեալ:

Այսի՛նքն՝ է նախ, զի Աստուած զամենայն բարութիւն ոչ խնայեաց ստեղծուածոց իւրոց. այլ բարութիւն և ազատականու-

թիւն. այսինքն՝ բարի ստեղծ զբնութիւն և ետ զանձն իշխան կամքն ազատականք: Եւ Աստուած ոչէ հակառակ բարւոյ, որ արգելոյր զայս երկուս բարութիւնս յիւր ստեղծուածոյն: Վասն որոյ բարի բնութիւն, և անձն իշխան կամք ետ նմա:

Դարձեալ՝ բարի արար զբնութիւնն. զի բնութիւնն վարդապետէ նմա բարի լինել: Իսկ անձն իշխան կամք ետ. զի անձն իշխան կամօք հնազանդի բարի ստեղծողին և պարգևատուին իւրոյ: Զի առաւել վարձատրեսցի: Զի որոյ ոչ կամայ ծառայեսցէ, անվարձատրելի է: Վասն այն ետ նմա բարի բնութիւն և անձն իշխան կամք:

Երրորդ՝ թէ յետոյ վասն է՞ր ոչ արգել զնա յանձն իշխան կամացն. զի մի կարասցէ չար լինել: Այսինքն, զի զոր ինչ բարի տայ Աստուած ստեղծուածոցն, այլ ոչ կամի խլել զայն ի նմանէ: Եթէ հարկ էր խլել յառաջնագոյն, վասն է՞ր տայր, մի՞թէ ոչ գիտէր, որ այնպէս լինելոց էր: Այլ վասն յառաջ ասացեալ պատճառացն ետ զայս ամենայն. և վասն երկրորդի ասացեալ պատճառացս ոչ խլեաց զանձն իշխան կամքն ի նմանէ, զի թէ զայս ամենայն բարութիւնս և զազատութիւնս չար եղև նմա, եթէ անբարի լինէր և անազատ, զորպիսի՞ չարիս ոչ կրէր նա: Վասն որոյ ասէր Տէրն. **«Եթէ լոյսդ որ ի քեզ է խաւարէ, ի՛սկ խաւարն որչափ և»:**

Իսկ չորրորդ՝ թէ յետ այս ամենայն չարեացս զոր արար սատանայ, վասն է՞ր ոչ դարձոյց զնա յոչ էութիւն, այսինքն՝ զի Աստուածն էացուցիչէ և ոչ ապականիչ: Այլև յոչ գոյից ի գոյութիւն ածեալէ. և ոչ թէ ի գոյութենէ յոչ գոյութիւն դարձուցնող. զի արարիչէ և ոչ քակիչ: Վասն որոյ զի ինչ իւր բնութեանն. և բարի բնութեանն, և բարի կամացն գործէ, զայն առնէ Աստուած և ոչ զհակառակն:

Իսկ հինգերորդ՝ թէ վասն է՞ր թոյլ ետ նմայ Աստուած փորձել զմարդիկ, այսինքն՝ զի սատանայ լինի պատճառ ընտրելոցն ընտիր լինելոյ: Զի թէ ոչէր մարտուցեալ ընդ նախավկային, ոչ էր տեսեալ նա զերկինս բացեալ և զՈրդի ընդ աջմէ Հօր նստեալ:

Եւ թէ ոչէր մարտեալ ընդ Լուսաւորչին մերոյ, ոչ էր եղեալ լուսաւորիչ աշխարհի: Կամ տեսեալ զԱստուածութիւնն իջեալ յէջմիածինն:

Եւ թէ ոչէր մարտեալ ընդ Ադամայ, ոչէր Աստուած ի մեր բնութենէս ծնեալ մարդկային մարմնով յԱստուածական փառն վերածեալ:

Վասն որոյ ասէ մարգարէն. **«Մի՛ սպանաներ զնոսա, զի մի՛ մոռասցին զժողովուրդս քո, այլ ցրուեա զնոսա զօրութեամբ քով»:** Իսկ այլ խորութիւնք բանիցս Աստուածային խորոց դատաստանինէ գիտելի, զի հաստատեաց օր մի, որ տանջելոցէ զնա, և զհետևողս նորա անանցական տանջանօք: Վասն որոյ աղաչէին զնա. **«Զի մի յառաջ քան զժամանակն տանջեր զմեզ»:** Եւ տանջելոց է նա ամենայն կամարարօքն իւրովք: Վասն որոյ ասէ թէ ամենայն չար տանջելի:

5

Հինգերորդ հարցումն. Զի՞նչէ որ ասէ. Ամենայն չար տանջելի:

Արդ, Աստուած միայն է բնութեամբ բարի, ըստ այնմ չիք ոք բարի բայց միայն Աստուած: Իսկ արարեալք ի նմանէ բանականաց սեռք այլազգաբար ունին զբարին այսինքն՝ զի Աստուած բոլորովին և հանրական բարի է, իսկ եղեալքս մասնական բարի:

Երկրորդ՝ զի Աստուած բնութեամբ ունի զբարին, իսկ եղականք՝ ոչ բնութեամբ. այլ ստացմամբ ունին զբարին. զի բնութեամբ բարին նա է, որ անյեղասկէս ունի զբարին և ոչ յումեքէ ստացեալ իսկ մեք ոչ բնութեամբ ի մէնջ. այլ ստացմամբ յԱստուծոյ: Վասն որոյ ասէ Սիրաք. **«Դու որ առեալդես զամենայն, զի պարծիս իբրև զչառեալ»:** Եւ ամենայն որ առեալ է ոչէ բնութեամբ, այլ ի տուողէ ստացեալ:

Երրորդ՝ զի Աստուած անփոփոխելի ունի զբարին այլ մեք կամաւորութեամբ. զի թե կամիմք պահեմք. և թէ ոչ փոխիմք յայլ

բան: Եւ վասն այն եդ զբարին և եթող 'ի կամս մեր. զի կամելով զբարին վարձատրելի լիցիմք: Վասն որոյ որ կամաւորութեամբ ընդ բարիսն խառնեսցի պակեսցի և հաղորդի յչկական բարին: Իսկ որ կամօք իւրովք չարին հետևեսցի, ընդ նմա ընկալցի զտանջանսն յԱստուծոյ:

Վասն որոյ ասէ՝ ամենայն չար տանջելի:

6

Վեցերորդ հարցումն. Զի՞նչէ, որ ասէ. Ոչ ոք տանջեալ անապական:

Պատասխան՝ այսինքն, զի տանջանքն այլ այլէ յիւրմէ բնութենէն և ապականէ:

Դարձեալ, զի որ անապականէ բնութեամբ, ոչ տանջի և ոչ այլ այլի և ոչ ապականի այն որ անապական մնայ 'ի չարէն:

Դարձեալ՝ ոչ ոք տանջի և անապական մնա:

7

Եօթներորդ հարցումն. Զի՞նչէ որ ասէ. Ոչ ոք ապականեցաւ անեղ:

Պատասխան՝ այսինքն, Զի անեղական բնութիւնն ոչ կարէ յեղումն ընդունել կամ այլ այլիլ կամ ապականիլ, զի բնութեամբ բարին Աստուած վասն առաւել բարութեանն, անկարելիւ փոփոխումն ընդունել 'ի հակառակն կոյս որէ չարութիւնն և զի ոչ ընդունի չար յինքեան: Վասն որոյ այն և ոչ տանջի և ո՛չ ապականի, և որ ոչ ապականի, ոչէ եղական:

Դարձեալ՝ ոչ ոք ապականացու անեղ՝ ընդդէմ սատանայի ասէ, զի որ զապականութեան զյեղումն կրէ, յայտէ թէ յեղեղուկ բնութիւնէ զի որ նախ յոչ էից եղև. սոյնպէս և կարէ յայլ իր փոփոխիլ: Ապա ուրեմն որ այլայլի և ապականի, ոչէ անեղ: Զի թէ անեղէր ոչ այլայլէր և ոչ ապականէր: Ապա ուրեմն սատանայ որ այլայլի և ապականի, ոչէ անեղ:

8

Ութներորդ հարցումն. Զի՞նչէ որ ասէ. Է չար ապականացու:

Պատասխան՝ Այսպէս պարտ է ասել թէ չարն ապականացու է: Եւ ոչէ պարտ ասել. Է չար ապականեցաւ: Այսինքն՝ չարն ոչէ բնութեամբ և ոչէ գոյացական զի ոչէ ստեղծուած արարչէն այլ ապականեցու, այսինքն՝ պատճառ ապականութեան ստեղծական բարուց խառնելով ընդ նմա որպէս հիւանդութիւն ընդ առողջութեան:

9

Իններորդ հարցումն. Զի՞նչէ որ ասէ. Զար ուրեմն ոչէ անեղ:

Պատասխան՝ նախ ոչէ անեղ զի ոչէ բնութեամբ:

Երկրորդ՝ ոչէ անեղ, զի ոչ ունի զբարին Աստուածային նման որ անեղնէ:

Երրորդ՝ ոչէ անեղ, զի նախ բարի էր, յետոյ յեղաշրջեցաւ և եղև չար:

Չորրորդ՝ զի նախ յոչէից եղական եղև. և դարձեալ 'ի բարի գոլոյն չար եղև. և դարձեալ այլայլելի 'ի չարչարանն: Եւ դարձեալ ապականութիւն կրէ 'ի չարչարանացն: Արդ որում այս ամենայն եղելութիւնս եղև յանձն իւր. զիարդ լինի անեղ, վասն որոյ ասէ. Զար ուրեմն ոչէ անեղ:

Դարձեալ՝ չարն ոչէ անեղ այսինքն՝ զի առանց գործելոյ ոչ գոյանայ չար: Այլ նախ յղանայ մտօք. և երկրորդ՝ հաճին կամօք. և երրորդ՝ յօժարին սրտիւ. և չորրորդ՝ գործին մարմնով. և հինգերորդ՝ այլ այլէ զգործողն: Եւ այս ամենայն եղելութիւն եղև չարին:

Զիա՞րդ լոյէ անեղ, այլ բազմապատիկ եղական: Եւ ոչ միով իւիք այլ 'ի զանազան տեղիս եղելութիւն ստացաւ: Իսկ որ ըստ այսքան կերպիս ոչ եղանի անեղ և ան է և անգոյ մնայ այն որ ոչէ և ոչ ևս երևի տեղի նորա:

10

Տանջողդ հարցումն. Զի՞նչէ որ ասէ. Ոչ ոք ըստ բնութեան չար:

Պատասխան՝ այսինքն, զի բնութեամբ ամենայն յԱստուծոյ է ստեղծեալ. և ստեղծեալքն յԱստուծոյ բարութեան, որպէս վկայէ, թէ ետես Աստուած և ահա բարի են յոյժ: Ապա ուրեմն ոչ ոք է ըստ բնութեան չար:

Դարձեալ՝ զի նախ է բնութիւնն. և երկրորդէ կամքն. զի կամքն բնութեան հնազանդէ և ոչ թէ բնութիւն կամացն: Եւ ամենայն որ կամացն հնազանդի ոչէ բնական այլ եկամուտ: Արդ բնութիւնն բարի ստեղծաւ և կամքն երկրորդէ յետ բնութեանն. և եկամուտ չարին երրորդէ նմա. որ է յետ կամացն: Եւ տես զի միջնորդաւ հեռիէ չարն ի բնութենէն, զի կամքն ի մէջ երկոցունցնէ: Ապա ուրեմն ոչ ոք ըստ բնութեան չար և վասն այն պատժի չարագործն զի եթող կամքն զյարակիցն իւր զբարի ստեղծեալ բնութիւնն և հետևեցաւ օտար եկամուտ չարին:

Հարց: Կամքս բնութեանն հետևող և ոչ բնութիւնն կամացն, և յայտ անտիէ, զի քաղցն և ծարաւն և քունն, որ կիրք բնութեանէ կամքն ոչ կարէ խափանել, այլ հետևի բնութեանն: Արդ եթէ բնութիւնն հարկ առնէ ի վերայ կամացն. և հնազանդեցուցանէ իւրն, ապա որպէ՞ս կարէ կամքն եկամուտ չարին հետևիլ, որ ոչէ բնութիւն, այլ պատահումն:

Պատասխան: Արդ կամքն ի մէջ երկուց բնութեանց է կացեալ, զի մի բնութիւնն այսէ, որ յԱստուծոյ է ստեղծեալ բարի բնութիւն, և երկրորդ՝ այնէ բնութիւն, զոր կամքն է ծնեալ ի ձեռն հաւանական գործոցն, որպէս ասէ խմաստասէրն, թէ «Կրթութիւն ի բազում ժամանակաց բնութիւն մակստացական լինի: Իսկ կամքն այն բնութենէ է սիրող, ըստ որում կրթեցաւ յերկար ժամանակս և սովորեցաւ ընդ նմա»: Եւ որպէս ամենայն ծնող սիրէ ծնեալն յինքենէ, սոյնպէս և կամքն թողեալ զծնօղն իւր զբարի բնութիւնն և սիրէ զծնեալն յինքենէ զմակստացական բնութիւն և օտարացեալ յառաջին բնութենէն կապեալ է սիրով ընդ երկրորդ բնութեանն:

Եւ դարձեալ միւս ևս բնութիւն սովորութիւն չարաց, որ իբրև բնութեամբ հարկէ ի վերայ կամացն: Եւ այս երկու վերջին բնութիւնքս գերեալեն զկամքն յառաջին բնութենէ, որպէս գերիչք գերեն զզաւակն ի ծնողաց իւրոց՝ վասն որոյ յերկուցն յաղթեալ ոչ կարէ հետևիլ առաջնոյն: Վասն որոյ ասէ Պօղոս. **«Տեսանեմ այլ օրէնք զինեալ յանդամն մարմնոյս հակառակ օրինացն Աստուծոյ»:**

Եւ դարձեալ, զի թէպէտ և ջանայ կամքն հետևիլ բարի բնութեանն, ոչ կարէ, զի կրթեալ է ընդ չարին. վասն որոյ ասէ Պօղոս. **«Ո՛չ թէ զոր կամիմ զբարին, զայն գործեմ, այլ ուստի փախչիմ ի չարէն, զնոյն կրեմ»:** Իսկ որ ապաւինի ի չնորհօք Սուրբ Հոգւոյն և յօժարութեամբ ջանայ հակառակ կալ չարին, այնպիսին յաղթէ իւր գերողացն: Վասն որոյ ասէ Պօղոս. **«Ես ինքնին մտօք իմովք ծառայեմ օրինացն Աստուծոյ և մարմնով իմով օրինացն մեղաց: Այլ օրէնք Հոգւոյն կենացն ազատեցին զիս յօրինացն մեղաց և մահու»:** Որպէս յայտ է, զի բազում պոռնիկք և մաքսաւորք և աւազակք դարձան ի մեղաց: Զի ամենայն որ ջանայ հակառակիլ չարին՝ փախստական լինի չարն ի նմանէ: Վասն որոյ ասէ Յակոբոս. **«Կացէք հակառակ չարախօսին և լիցի փախստական առ ի ձէնջ»:** Եւ մակստացական բնութիւնն, որ ծնաւ ի կամաց, ջանիւ հնարի կորուսանել զնա զայն չար զաւակն: Վասն որոյ ասէ մարգարէն. **«Երանի որ կալաւ զմանկունս քո և եհար զքարի»:** Եւ այսպէս բազում աշխատութեամբ ջանայ զերծանել ի գերողացն զինքն:

Հարցում՝ և թէ ոչ ոք ասէ բնութեամբ չար, բայց զի՞է զի մասունք հոգւոյս, որ ի մեզ բնութեամբէ, այսինքն՝ բան ցասումն և ցանկութիւն և զամենայն կողմանք սորա չարեն և ամենայն չար նոքօք լինին ի մեզ: Ապա զիա՞րդ ասէ. Ոչ ոք ըստ բնութեան չար, զի ընդ բարի բնութեան են և նոքա ի մեզ:

Պատասխան՝ նախ զի հոգի եռամասնեայ է և ոչ թէ իննմասնեայ. զի այն վեցն կողմանքեն մասանց հոգւոյն վերին և ներքին, և նոքա են եկամուտն, որ արտաքոյ բնութեանն յայս կոյս և յայն կոյս պատեալեն զնա: Եւ տես, զի նոքա ոչեն մերում բնութենէս. զի խոհեմութեան վերին ծայրն խորամանկութիւննէ,

որէ անզգամութիւն և այն սատանային է, իսկ ներքինն տգիտութենէ և այն անբանիցն է:

Այսպէս և ցասումնն՝ վերին ծայրին յանդգնութիւննէ, որէ գազանացն և ներքինն երկչոտութիւննէ, որէ չնչին անասնոցն:

Այսպէս ցանկականին վերին ծայրն ժլատնէ, որէ ագահութիւնն և այն մկաննէ որ շատ ժողովէ: Իսկ ներքին ծայրն շռայլութիւնն, որէ անառակ վարքն, որպէս շանց և պիղծ կենդանեաց, և յայտէ, զի նոքա ոչէն բնական մարդոյս. այլ եկամուտ և օտար:

Դարձեալ՝ զի կամքն բնութեան ծառայէ, և ոչ բնութիւնն կամացն, որպէս յայտէ, զի բարկութեանն բոց չիջանի յերկիւղէ և ցանկութեանն բոց չիջանի յամօթոյ: Եւ տէս զի բարկութիւնն և ցանկութիւնն անբանիցնէ, և ոչ մերում բնութեանս, զի թէ բնութեամբէ ցանկութիւն մեղացն 'ի մեզ, ոչ կարէին սուրբքն յաղթել բնութեանն գործոյն և մաքուր լինել կամ յաղթել բարկութեանն և հեզ լինել, այլ զոր ինչ ճգնաւորք և սուրբքն թողին զյաւելորդսն, այն ոչէր բնութեանս, այլ հետևանք կամացն, և եկամուտէր. զի թէ ցանկութիւնն բնութեամբէր, ոչ կարէին կուսութեամբ կեալ: Այսպէս և այլ կիրք եկամուտ է, որ ինչ ավելորդն է:

Դարձեալ՝ զի կամեցան և յաղթեցին կրիցն: Տէս զի ոչէն ապստամբ 'ի կամացն հնազանդութենէ, այլ ծառայեն անձն իշխան կամացն: Եւ յայտէ, եղև զի կամքն բնութեան ծառայէ, և նոքա կամացն ծառայեն: Ապա ուրեմն ոչ են բնութեամբ 'ի մեզ չարախտքն, որպէս ցուցաւ:

Դարձեալ՝ թէ բնութեամբէր չարն 'ի մարդն, յայնժամ Աստուած ոչ տանջէր զմեղաւորն, այլ զի բնութիւնն անմեղէ, նա հակառակ Աստուածադիր բնութեան գործէ, վասն որոյ պատժի յԱստուծոյ: Այսքան առ այս:

11

Մեսասաներորդ հարց. Զի՞նչէ. Զարարկութիւնէ ոչ ոք արկութիւն գոյացութիւնէ:

Պատասխան՝ Զար ոչէ բնութիւն, այլ արկութիւն, այսինքն՝ արկումն 'ի բնութիւնս, որպէս յանօթ արկեալ իրս ինչ, օտար է և ոչ յանօթոյն բնութիւնէ, սոյնպէս և չարութիւն, թէպէտ և մտանէ յոք բնակիլ՝ ոչէ 'ի նորին բնութենէ. և յայտ անտի է, զի յորժամ կամի արտաքսէ, վասն որոյ ասէ. Ոչ ոք արկութիւն գոյացութիւն է:

12

Երկուտասաներորդ հարցումն. Զի՞նչէ որ ասէ. Ամենայն ընդդիմակքն միմեանց ապականիչք:

Պատասխանի: Այսինքն՝ որպէս հիւանդութիւն և ողջութիւն, մահ և կեանք, չա՛ր և բարի՛, ապականութիւն և անապականութիւն, լոյս և խաւար, ջերմ և ցուրտ, խոնաւ և չոր և այլն: Արդ 'ի գալ միւսոյն հարկ լինի հակառակին արտաքս ելանել լուծանիլ յապականութիւն: Թէ բարին մտանէ՝ զչարն հանէ: Իսկ թէ չարն մտանէ զբարին հանէ: Վասն որոյ ասէ Տէրն. **«Ոչ կարէք երկուց տերանց ծառայել»** և այլն:

13

Երեքտասաներորդ հարց. Զի՞նչէ որ ասէ. Ոչինչ է անեղ փոփոխելի:

Պատասխան: Յէից ոչ ինչ բնութիւն է, որ անեղ իցէ, բայց միայն Աստուած: Եւ զի անեղէ, վասն որոյ և անփոփոխելի է, զի ոչէ որպէս ստեղծական բնութիւն արարածոց, որ յոչ էից փոփոխեալ եկին 'ի լինելութիւն այլ նա՛ անեղ բնութիւնէ, վասն որոյ ոչէ գործ բնութեան նորա փոփոխական լինել, այլ որպէս էրն, նոյնպէս և եղիցի:Վասն որոյ ասէ Պօղոս. **«Յիսուս Քրիստոս երեկ և այսօր, նո՛յն և յաւիտեան»:** Զի նոյն անեղական բնութիւնն էր մարդ եղեալ և մնաց Աստուած բնութեամբ, զի Բանն մարմին եղև:

14

Զորեքտասաներորդ հարց. Զի՞նչէ որ ասէ. Բարի ուրեմն ոչէ անեղ:

Պատասխան: Նախ վասն չարինն ասաց թէ չարն ոչէ անեղ, և ոչ անապական: Եւ ոչ բնութիւն առանձինն և ոչ արարած Աստուծոյ, այլ 'ի կամս ազատութեան մերոյէ էացուցանելով զնա 'ի մեզ, կամ յոչգոյութիւն փոփոխել, զայն և վասն բարոյն ասէ, թէ ոչէ անեղ բարին: Զի ահա Աստուած, որ բարիէ, նոյն և անեղ, և զի անեղէ նոյն և բարիէ անփոփոխելի:

Պատասխան: Զայս ոչ վասն Աստուածային բարւոյն ասէ, որ բնութեամբէ և անփոփոխելի, այլ վասն այն բարոյն ասէ որ առ եղական բնութիւնս ներգործի բարին, որէ արարկութիւն և փոփխական, յորմէ ասաց պարտիլ 'ի չարէն: Զի որպէս մեք եղականքեմք և փոփխականք, սոյնպէս և բարին մեր եղական և փոփոխական, սոյնպէս և չարն որպէս 'ի վերոյ ցուցաւ, զի թէ բնութեամբ էր մարդ 'ի բարին, կամ 'ի չարն, այլ ոչ կարէր փոփոխել: Եւ վասն որոյ այս եղական բարոյս ասաց. Թէ բարի ուրեմն ոչէ անեղ:

Դարձեալ՝ բարի ոչէ անեղ, այլ եղանելով, այսինքն նախ իմանամք զբարին, որ ծնանի 'ի միտս, և ապա կամօք յօժարիմք և տենչմամբ ցանկամք և բանիւ խօսիմք և գործով կատարիմք: Եւ այս ամենայն եղելութիւն եղև 'ի մեզ բարոյն: Վասն որոյ ասէ. Բարի ուրեմն ոչէ անեղ:

Դարձեալ՝ և անդրադարձի ևս, զի որ ոչ եղանի ընդ այսքան կերպիս, և ոչ գայ 'ի կատարումն գործոյն, նա ոչէ բարի:

15

Հնգետասաներորդ հարց. Զի՞նչէ որ ասէ. Անեղն ոչէ ցանկացող ապականութեան ուրուք և ոչ ապականիչ:

Պատասխան, այսինքն զի որ անեղէ նոյն և բարիէ, և որ բարիէ բնութեամբ, նոյն և անապականէ: Իսկ անապականն

բարին ոչ ինքն ապականէ զոք. և ոչ ցանկա ընդ ապականութեան ուրուք: Այլև զամենեսեան կամի բարի լինել. որպէս զինքն և կեալ: Վասն որոյ ասէ Պօղոս. «Կամի զի ամենեքեան կեցցեն և 'ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն»:

16

Վեչտասաներորդ հարց. Զի՞նչէ որ ասէ. Իսկ չարն ցանկացող է ապականութեան:

Պատասխան: Այսինքն որպէս բարին սիրող գոլով բարեաց կամի ոչ միայն զինքն, այլև զամենեսեան լինել բարի ըստ նմանութեան իւրոյ. որպէս ասէ Պօղոս. **«Նմանողք ինձ եղերուք որպէս և ես Քրիստոսի»:** Սոյնպէս և չարն նախ զինքն ապականեաց չարութեամբ և փափագի, զի որ չափ և ձեռնհաս լինի ներգործէ զչարութիւն նախ սատանա և ապա չարասէրքն 'ի մարդկանէ:

17

Եօթնևտասաներորդ հարց. Զի՞նչէ որ ասէ. Թէ չար ուրեմն ոչէ անեղ:

Պատասխան՝ այսինքն զի չարն եղելութեամբ և գործով եղանի, և ուր զչարն ոչ կամին և ոչ գործեն ոչ եղանի: Ապա կամեցեալ չարն և գործեալն ոչէ անեղ, այլ եղելութիւն է առ 'ի գործելն:

Դարձեալ՝ զի ասէ. Զար ուրեմն ոչէ անեղ. այսինքն՝ զի ոչ բնութեամբէ յոք՝ այլ եկամուտ: Եւ յայտ ասէ զի չարն ոչ կարէ բռնադատել զոք յակամայ ոչ լինել բարի. նոյնպէս և բարին ոչ հարկ առնէ ումեք ոչ լինել չար, այլ նախայօժար կամք հոգւոյն 'ի մէջ երկաքանչիւրոցն, զի յորս չարժի թէ 'ի բարին, թէ 'ի չարն յայն ձգէ: Եւ զայս ասէ թէ չար ուրեմն ոչէ անեղ, այսինքն՝ ոչէ բնութիւն, և ոչէ ըստ ինքեանն և ոչէ բնութեամբ յոք այլ եկամուտէ:

18

Ութեւտասաներորդ հարց. Զի՞նչ է, որ ասէ. Իսկ Աստուածային գիրք տանջանաց մատնեն ոչ միայն զայլ չարսն. այլեւ զնոյն ինքն զբանարկուն:

Պատասխանի թէ վասնէ՞ր մատնէ Աստուած տանջանաց զիւր ստեղծուածն: Եւ այս վասն բազում պատճառաց: Նախ զի ասաց թէ ոչ ոք ըստ բնութեան չար. զի բնութեամբ բարի ստեղծան 'ի բարի արարչէն: Եւ բնութիւնն ոչէ չար որ հարկ առնէ 'ի մեղանչելն: Եւ վասն այս պատժի յանցաւորն:

Նախ զի բնութիւնն բարի է:

Երկրորդ՝ զի կամքն բնութեաննէ ծնունդ՝ և ո՛չ բնութիւնն կամացն:

Երրորդ՝ զի կամքն բնութեանն հնազանդի և ծառայէ, և ոչ թէ բնութիւնն կամացն հնազանդի:

Չորրորդ՝ զի կամքն բնութեաննէ սնընդակից և ոչէ օտար 'ի նմանէ:

Հինգերորդ՝ զի կամքն 'ի նոյն անձին բնութենէնէ, և ոչ արտաքոյ անձինն:

Վեցերորդ՝ զի չարն օտարէ 'ի բնութենէն, և եկամուտ:

Եւթերորդ՝ զի կամքն զիւր ծնօղ և զսնընդակից բնութիւնն թողու և ընդ օտար չարին սէր կապէ:

Ութերորդ՝ զի զբարին որ Աստուծոյ է ստեղծեալ թողու և չարն որ ոչէ ստեղծեալ Աստուծոյ նմա հետևի:

Իններորդ՝ զի բարին, որ էութիւն է որպէս լոյս թողու և չարն, որ պատահումն է որպէս խաւար նմա ցանկայ:

Տասներորդ՝ զի նախատիպ բարւոյն Աստուածէ, և չարն, որում սատանայ նախատիպէ, այնմ ցանկայ:

Մետասաներորդ՝ զի բարւոյն նախատիպն անեղէ և անփոփոխ, իսկ չարին նախատիպն սատանայէ որ փոխեցաւ 'ի բարւոյն 'ի չարն զայն սիրէ:

Երկոտասաներորդ՝ զի յէական բարոյն ոչէ օտար բնութիւնս այլ

ըստ պատկերի և ըստ նմանութեան անճառ բարոյնէ ստեղծեալ բնութիւնս: Եւ զայն թողու և օտարին և չարին ցանկայ կամքն:

Երեքտասաներորդ՝ զի էական բարին կամակիցէ հաղորդս առնել զմեզ բարոյն և ոչ թէ հակառակ՝ զի կամի զամենայն մարդ զի կեցցեն և 'ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն: Եւ որ զայն թողու և իւր հակառակ թշնամոյն հետևի յիրաւի պատժի:

Չորեքտասաներորդ՝ զի բարին օգնականէ բնութեանս, իսկ չարն հակառակ, և որ նմա հետևի՝ պատժի:

Հնգետասաներորդ՝ զի բարին պէտպէս պարգևք խոստանայ մեզ, աստ և 'ի հանդերձեալն: Իսկ որք զնա ատեն յիրաւի պատժին և զրկին 'ի բարեաց:

Վեչտասաներորդ՝ զի չարեացն պատիժ խոստանայ Աստուածային գիրք աստ և 'ի հանդերձեալն. և որ ոչ լսէ և որ ոչ դառնայ 'ի չարեաց, յիրաւի պատժի աստ և անդ:

Եւթնևտասաներորդ՝ զի բարեաց գործոցքն օրինակեն մեզ, որ պարգևս առին յԱստուծոյ, որպէս Ենովք և Եղիայ, Նոյ, Աբրահամ, Մովսէս և այլ ամենայն սուրբք, որք պէտպէս հրաշս գործեցին, և որ այնմ ոչ ցանկայ պատժելոց է:

Ութևտասաներորդ՝ զի գործողք չարին որ պատուհասեցան օրինակեն մեզ: Որպէս սատանեայ և Ադամ և Կայեն և որք ջրհեղեղեաւն կորեան, և սոդոմայեցիքն որք հրով այրեցան: Իսկ որ զայն տեսեալ ոչ դառնայ 'ի չարէն, արժանիէ նոցա պատժոցն:

Իննևտասաներորդ՝ զի և զգալապէս տեսանեն, որ վասն չարեաց պատուհաս լինի. մահտարաժամ, և սով և չարժ, և սրածութիւն, և գերութիւն, և մորեխ և թրթուր, և գայլ և գազան և այլ այսպիսիք, և ոչ ատեն զչարն: Վասն որոյ յիրաւի պատժին:

Քսաներորդ՝ զի ինք անեղական բարին Աստուած եկն յաշխարհս, և նմանակից մեզ եղև, զի մեք նմանեսցուք նմայ: Եւ արեամբ և մահուամբ ազատեաց զմեզ յառաջին չարեացն և 'ի պատժոցն, և դժոխոցն և 'ի մահուանէ: Իսկ որ զայս ամենայն գիտացեալ և դարձեալ հետևող լինի չարոցն յիրաւի պատժի, այլև պարտական անմահ մահուանն Աստուծոյ. որ վասն մեր մեռաւ 'ի

խաչին և անպարտ արեանն, զոր եհեղ վասն մեր ՝ի խաչին: Եւ զի կամաւ և յօժարութեամբ զչարն սիրեցին, որ այսքան օտարէ ՝ի բնութենէս, և զբարին ատեցին որ այսքան մերձ և բնութենակիցէ մեզ: Վասն որոյ յիրաւի, զոր ասէ թէ ամենայն Աստուածային գիրք պատժոց մատնեն զգործող չարին:

Հարց: Զի՞նչէ չարն:

Պատասխան: Զարն նախ զի ոչէ անեղ այլ ՝ի գործելն եղանի, որպէս զհետ յուրուք վերայ, որ յընթանալն գոյանայ:

Երկրորդ՝ զի և ոչէ էութիւն առանձին արտաքոյ եղականացս:

Երրորդ՝ զի և ոչէ էութիւն նման եղելոցս յԱստուծոյ, զի ոչէ իր և գոյութիւն այլ պատահումն, որ պատահին գործել զնա: Այլև չարն պակասութիւն բարւոյէ, որպէս խաւարն պակասութիւն լուսոյէ, այլև ապականիչ և չարչարող և այլ այլօղէ ունողին զնա:

Հարց: Զի՞նչ է թէ և ամենայն աստուածային գիրք տանջանաց մատնեն զչարն: Եւ յորում տեղւոջ ասեն գիրք թէ տանջելոցեն չարքն:

Պատասխան: Ցայտէ ՝ի բազում բանիցս: Նախ զի ասէ Տէրն թէ. **«Զչարն չարեաւ կորուսցէ»:**

Երկրորդ՝ զի ասէ. **«Ամենայն ծառ, որ ոչ բերէ պտուղ բարի հատանի և ՝ի հուր արկանի և այրի»:**

Երրորդ՝ զի ասէ Մկրտիչն. **«Զի արդ փախնուցուք ՝ի բարկութենէ գեհենոյն»:**

Զորրորդ՝ Եսայի ասէ՝ **«Ո՞ պատմեաց ձեզ թէ հուր բորբոքեալ կայ»:** Եւ դարձեալ ասէ. **«Որդն նոցա ոչ մեռանիցի, և հուրն ոչ չիջանի»:**

Հինգերորդ՝ Դաւիթ ասէ՝ **«Որպէս հալի մոմ առաջի հրոյ այնպէս կորիցին մեղաւորքն յերեսացն Աստուծոյ»:**

Վեցերորդ՝ Տէրն ասէ՝ **«Որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, պարտական լիցի գեհեան հրոյն»:**

Եօթերորդ՝ զի ասէ. **«Կապեցէք զդորա զձեռս և զոտս, և հանէք զդա ՝ի խաւարն արտաքին անդ եղիցի լալ և կրճել ատամանց»:**

Ութերորդ՝ զի ասէ Պօղոս՝ **«Եթէ ոք կամակար մտօք յանցանիցէ յետ ընդունելութեան գիտութեանն, այնուհետև ոչ ևս է պիտոյ վասն մեղաց պատարագ, այլ ահեղ ակնկալութիւն դատաստանին և նախանձ հրոյ, որ ուտիցէ զհակառակորդսն իւր»:**

Իններորդ՝ զի Եսայի ասէ թէ **անկցին ՝ի սուր նորա ամենայն երկիր և ՝ի հուր նորա ամենայն մարմին:**

Տասներորդ՝ զի և ինքն Տէրն ասէ. **«Երթայք յինէն ՝ի հուրն յաւիտենից որ պատրաստեալէ սատանայի և հրեշտակաց նորայ»:**

Մետասաներորդ՝ զի և ինքն սատանայ գիտէր որ տանջելոցէր, վասն որոյ ասէր. **«Մի յառաջ քան զժամանակն տանջեր զմեզ»:** Եւ այլ բազում բանս խօսին գիրք վասն տանջանացն:

Հարց: Ուստի՞ գիտէ սատանայ, թէ տանջելոցէ յաւիտեան:

Պատասխան՝ նախ կշռելով զչարութիւն իւր ընդ արդար իրաւանցն Աստուծոյ գիտէ, զի ոչէ ներելոց նմայ:

Երկրորդ՝ զի յորժամ հակառակեցաւ Աստուծոյ գիտէ զվնաս անձին իւրոյ, և կշռէ ՝ի միտս իւր զարժան պատիժն:

Երրորդ՝ զի յորժամ ՝ի բարւոյն ՝ի չարն փոխեցաւ, գիտէ որ չարն առ ինքնէ և չարչարելոցէ զնա:

Զորրորդ՝ զի որպէս բարին Աստուած ՝ի հանգիստ փառացնէ. սապէս և նա ՝ի դիմակէն իմացաւ, թէ որքա՞ն բարին ՝ի հանգիստնէ, նոյնքան չարն որ հակառակնէ բարւոյն՝ չարչարելոցէ յաւիտեան:

Հինգերորդ՝ զի փորձիւ տեսաւ որպէս հիւանդն որքան ծանրանայ գիտէ թէ ՝ի մահն մերձանայ: Այսպէս և նա ետես, զի նախ ՝ի բարւոյն մերկացաւ և յերկնից անկաւ և ամենայն չար պատեաց զնա և ամենայն դառնութիւն և տրտմութիւն տիրեաց նմա և իմացաւ թէ այն սկիզբն ՝ի մեծ կատարումն կու տանի զնա, այսինքն՝ յանանց տանջանսն:

Վեցերորդ՝ զի և սրատես մտօք իմանայ զլինելոցն իւր:

Եօթերորդ՝ զի յորժամ զԱդամ խաբեաց և զբնութիւնս յամենայն չարիս էարկ և զԱստուած ՝ի խաչ եբեր, գիտէ որ այն ամենայն չէ մնալոց նմա յարդար իրաւանցն յԱստուծոյ:

Ութերորդ՝ զի յամենայն օր ՝ի ժամ չնորհաբաշխութեան Աստուծոյ հրեշտակացն և նոքա դևքն ձգտին զառ ՝ի վեր մինչև

յաստղալից երկինն զի առցեն զլոյս չնորհին ընդ այլ հրեշտակացն. որպէս սովորէին նախքան զանկումն առնուլ յայնմ չնորհէն, սոյնպէս և այժմ ձկտին զառ ի վեր, այլ փոխան լուսոյ զարժանն ի իւրեանց զբարկութիւնն Աստուծոյ առնուն: Զի զլոյս չնորհին հրեշտակք առնուն, իսկ զայրեցողութիւն տապոյ բոցոյն դևքն: Վասն որոյ ասէ մարգարէն. **«Արկցես ի վերայ նոցա զբարկութիւն քո»:** Եւ թէ. **«Արկցես ի վերայ նոցա զկայծակունս հրոյ կործանեսցես զնոսա ի տառապանացն ոչ կարասցեն կեալ»:** Եւ որպէս թիթեղն անյագ ընթանայ ի բոցն և այրեցեալ անկանի և դարձեալ երթայ ցանկութեամբ լուսոյն: Այս օրինակ նոցա և միշտ գործէ նոցա այս, և բնութիւնն չարժէ յայն զի յամենայն օր պատժեսցին:

Դարձեալ՝ արդար իրաւունքն Աստուծոյ չարժէ զնոսա յայն, զի յամենայն օր պատժեսցին, և տուժեսցին ի կայծականց բարկութեան Աստուծոյ, և որպէս հրեշտակացն ազդումն ուրախութեան լինի, և գիտութիւն հանդերձելոցն, այսպէս և բարկութիւն Աստուծոյ տայ զազդումն ըստ արժանեացն, զոր կրելոցեն նոքա ի հանդերձեալն զտանջանսն յաւիտենական:

Տասներորդ՝ զի զգալապէս ի Քրիստոսէ լսեցին նոքա որ ասաց. **«Երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալէ սատանայի և հրեշտակացն նորա»:** Եւ վասն այսքան պատճառիս գիտեն նոքա զի տանջելոցեն: Վասն որոյ ասէին մի յառաջ քան զժամանակն տանջեր զմեզ:

19

Իններեւտասաներորդ հարց. Զի՞նչէ որ ասէ. Ասեն և ամենայն տանջանաց մատնեալն այլ այլելիէ: Վասն որոյ ասէ թէ ամենայն տանջանաց մատնեալն այլայլելի է:

Պատասխան. Այսինքն՝ գիրք ասեն զայս. թէ ամենայն որ տանջանաց մատնի այլ այլի յիւրմէ բնութենէն: Եւ յայսմ բանէ յայտնիէ թէ չարն ոչէ անեղ, այլ եղական, և փոփխական. վասն զի տանջի, և վասն տանջանացն այլայլի:

20

Քսաներորդ հարց. Զի՞նչէ որ ասէ. Ոչ ոք այլ այլելի անեղ:

Պատասխան: Զի որ տանջանօքն այլայլի յիւրմէ բնութենէն, զիա՞րդ իցէ անեղ: Եւ յայտ է, զի չարն սատանայ ոչէ անեղ, զի բազում յեղեղմունք կրեաց նա:

Նախ՝ զի յոչէից յէութիւն եկն:

Երկրորդ՝ զի բարի ստեղծաւ յԱստուծոյ և յետոյ ի չարն յեղեցաւ:

Երրորդ՝ զի այժմ ի չարչարման կայ ի չար խորհրդոց իւրոց: Վասն որոյ ասէ Եսայի. **«Ոչ գոյ խաղաղութիւն ամբարչտաց, ասէ Տէր»,** և յայտէ, զի դևքն ամբարիշտք: Եւ դարձեալ. **«Անօրէնք իբրև զծովս ծփեսցին և հանգիստ մի գտցեն»,** և նոքաեն առաջին անօրէնքն:

Իսկ չորրորդն, զի չարչարանքն տանջելոցէ զնոսա:

Հինգերորդ՝ զի տանջանքն այլ այլելոցէ զնոսա ի մէջ անչէջ բոցոյն: Եւ յորս այս ամենայն յեղեղմունք լինի, զիա՞րդ կարիցէ լինել անեղ:

Իսկ որ ասէ. ոչ ոք այլ այլի անեղ, այսինքն՝ Աստուած, զի անեղէ և ոչ այլ այլի:

Նախ՝ զի ոչէ եղեալ յումեքէ, այլ անեղ էութիւնէ:

Երկրորդ՝ զի անեղէ և ոչ կարէ այլ այլիլ. այլ մնայ յիւր էական բնութենէն անփոփոխելի:

21

Քսաներորդ և առաջին հարց. Զի՞նչէ որ ասէ. Ոչ ինչ ի չարեացն անեղ:

Պատասխան: Այս յայտ է յամենայն ուստեք զի որ այլ այլի բնութիւնն, ոչ ունի զանեղութիւնն, իսկ որ բազմաւորակի դնէ, թէ ոչ ինչէ ի չարացն անեղ, այսինքն՝ նախ զի չար ինքն անեղ ոչէ:

Երկրորդ՝ զի բնութիւն ոչէ:

Երրորդ՝ զի ի բնութենէ ոչէ:

Զորրորդ՝ ըստ ինքեան առանձին էութիւն ոչէ:

Հինգերորդ՝ զի ամենայն մասունք չարեացն գործելովն եղանին, վասն որոյ ասէ. ոչ ինչ 'ի չարեացն է անեղ:

Դարձեալ՝ ոչ ինչ 'ի չարեացն անեղ, այսինքն՝ զի բազում եղելութիւն առնէ չարն, յորս գործով գոյանայ, այսինքն՝ ապականութիւն և մահ և դատապարտութիւն և զամօթն յահեղ ատենին և զտանջանքն յաւիտենից և զայլայլելն 'ի մէջ հրոյ բոցոյն և զանանց փոշիմանութիւնն, զլալ աչացն և կրճել ատամանցն. զայս ամենայն յեղեղմունքս առնէ չարն, յորս գոյանայ գործով: Վասն որոյ ասէ ոչ ինչէ 'ի չարեացն անեղ: Արդ որ մի անգամ եղացուցանէ զչարն յինքեան. յետ այսորիկ չարն զայս ամենայն եղելութիւնս գործէ ընդ նմա, զի նա որ զչարն ծնաւ յետոյ չարն զամենայն թոռունքս ծնանին նմա տոհմականաւ:

22

Քսաներորդ և երկրորդ հարց. Զի՞նչ է, որ ասէ. Որ բոլորովին ընդդիմակքնեն, ոչ ունին հաւասար:

Պատասխան: Այսինքն՝ զի են որ մասամբ ինչ հակառակին միմեանց և մասամբ ինչ հաւասարին, որպէս տարերք և եղանակք: Եւ են որ ամենայն հարկիւ հակառակեն միմեանց որպէս լոյս և խաւար, մահ և կեանք, չար և բարի:

Դարձեալ՝ զի բնութիւնք ստեղծուածոց բարիեն 'ի բարի արարչէն ստեղծեալ, իսկ կամքն չար և հակառակ նմին, այսինքն՝ 'ի միում անձին բնութիւնն բարի և կամքն չար ընդդիմակք են միմեանց:

23

Քսաներրորդ հարց. Զի՞նչ որ ասէ. Քանզի ամենայն հարկաւորութեամբ որ միումն գոյացեալ միւսումն ոչ գոյանայ:

Պատասխան. Այսինքն ոչ 'ի մասնաւոր հարկէ, այլ ամենայն հարկաւորութեամբ, զի որ լոյսէ գոյացեալ, ոչ կարէ փոխիլ և

խաւար լինել: Սոյնպէս և ոչ խաւարն լոյս, և ոչ մահն կեանք, կամ կեանքն մահ, և ոչ չարն բարի, կամ բարին չար, սոյնպէս և ոչ եղականն անեղ կարէ լինել և ոչ անեղն եղական:

Իսկ անեղն Աստուած թէպէտ մարդ եղև՝ նոյն էութիւննէր մարմինն, և նոյն բնութիւննէր մարդացեալն որ անեղ Աստուածութիւննէր, զի եղև մարդ և մնաց Աստուած որպէս ասէր. **«Շօշափեցէք և տեսէք, զի ես նոյնեմ»:**

24

Քսաներորդ և չորրորդ հարց. Զի՞նչէ որ ասէ. Եւ է գոյացեալ բարութիւն գոլով անեղն: Եւ զի՞նչէ զի նախ ասաց վասն բարւոյն, թէ է անեղ, իսկ այժմ ասէ. թէ բարութիւնն գոյացեալ է անեղն:

Պատասխան. ոչ թէ մի և նոյն բարութիւննէ գոյացեալ և է անեղ. այլ այսէ, զի կրկին ցուցանէ զկերպարանս բարոյն, այսինքն՝ զմինն անեղական բարի, որէ անեղ բնութիւնն Աստուծոյ՝ միշտ և անփոփոխելի, իսկ զմիւսն եղական բարի, որ առ եղականս գոյանայ՝ որէ արարկութեամբ և փոփոխական, զոր և պարտեալ ասէ 'ի չարէն:

Դարձեալ՝ ասէ. Է՛ գոյացեալ բարութիւն գոլով անեղն. այսինքն՝ զանեղանելին լինելութիւն ասէ որ անեղն Աստուած մարդ եղև:

Հարց. Զի՞նչէ զանազանութիւն եղական բարւոյն և եղական չարին, որ 'ի մէնջ եղանի:

Պատասխան. Զանազանին 'ի միմեանց եղական բարին և եղական չարն: Նախ զի բարին յԱստուծոյ է ստեղծեալ, ըստ այնմ, թէ. **«Ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք 'ի վերուստեն իջեալ առ 'ի Հօրէն լուսոյ, որում չիք փոփոխումն կամ չրջելոյ ստուեր»:**

Երկրորդ՝ զի բարին էութիւն է:

Երրորդ՝ զի բարին 'ի բնութեան մերումէ:

Զորրորդ՝ զի բարին օգնականէ բնութեան մերում:

Հինգերորդ՝ զի բարին բազում փառաց արժանացուցանէ զմեզ:

Վեցերորդ՝ զի եղական բարին միջնորդ լինի ընդ մեզ և ընդ անեղական բարին և հաղորդէ զբանական բնութիւնս անեղական բարւոյն:

Եւթներորդ՝ զի հոմանուն եղական բարին անեղական բարոյն:

Ութերորդ՝ զի զայս բարիս որպէս նիւթ լինի, իսկ անեղական բարին զարդարիչ և տեսակաւորիչ նմա, որպէս սեռն տեսակաց:

Իններորդ՝ սա ենթակա լինի և նա ստորոգի:

Տասներորդ՝ սա ծանօթ և ասպընջական, իսկ նա եկաւորեալ առ նա, ըստ այնմ, թէ՝ **«Ոք զպատուիրանս իմ պահեսցէ, ես և Հայր իմ առ նա եկեսցուք և օթևանս առ նմա արասցուք»:** Իսկ չարն դիմակէ սորին:

Նախ՝ զի ոչէ գոյացեալ յԱստուծոյ:

Երկրորդ՝ զի ոչ ունի էութիւն:

Երրորդ՝ զի ոչ լինի ՚ի բնութենէ, այլ ՚ի կամացն, որ երկրորդ է բնութեան:

Չորրորդ՝ զի ներհակ և ապականիչէ բնութեան:

Հինգերորդ՝ զի չարն բազում պատուհմունս բերէ ունողին:

Վեցերորդ՝ զի չարն միջնորդութեամբ ընդ սատանայի կապակցէ զունողն և ընդ նմա դասակցէ:

Եօթներորդ՝ զի չարն հոմանուն սատանայի:

Ութերորդ՝ զի չարն նիւթ լինի սատանայի, և նա որպէս տեսակաւորիչ և էացուցիչ նմա:

Իններորդ՝ զի չարն ենթակայ լինի և սատանայ ստորոգեալ ՚ի վերայ գործողին:

Տասներորդ՝ զի չարն անօթ և ասպընջական լինի, և սատանայ՝ բնակիչ նորին, ըստ այնմ, զի ասէ. **«Ցորժամ այսն չար ելանէ ՚ի մարդոյն, չրջի և ոչ գտանէ հանգիստ, ասէ՝ դարձայց ՚ի տուն իմ, ուստի ելի. գայ գտանէ զնա մաքրեալ և յարդարեալ և երթայ առնու ընդ իւր եօթն այլ այսս չարագոյն քան զինքն և երթեալ բնակէ անդ, և լինի մարդոյն այնորիկ յետինն չար քան զառաջինն»:**

Հարց. Զի՞նչէ որ ասէ. Միշտ պատրեազմին ընդ մեզ բարին և չարն, որպէս ջերմութիւն և ցրտութիւն:

Պատասխան. Այսինքն, զի բարին էացեալէ ընդ բնութեան մերում, իսկ չարն հետևի կամացն: Եվ որպէս այլ է բնութիւնն, և այլէ կամքն, սոյնպէս և բարին և չարն ենթակայիւքն կռուին ընդ միմեանս, որպէս զինուորքն երիվարօքն:

Երկրորդ՝ զի բնութիւնն միատեսակ բարի ունի, իսկ կամքն զանազան չարի հետևի և հաւանի նոցին:

Երրորդ՝ զի երբեմն բնութիւնն բարեաւն յաղթէ ՚ի վերայ անձինն և երբեմն կամքն յաղթէ անձինն:

Չորրորդ՝ զի չարն ՚ի վերայ բնութեանն ոչ կարէ ներգործել, զի բնութիւնն ոչ այլ այլի ՚ի նոյն գոլոյն, իսկ չարն զկամքն երեք իրօք յաղթէ:

Նախ զի որպէս չարն ոչէ բնութիւն, սոյնպէս և կամքն ոչէ բնութիւն, այլ հետևող բնութեան:

Երկրորդ՝ զի որպէս չարն այլ այլէ ՚ի բարոյն, սոյնպէս և կամքն ունի այլ այլութիւն:

Երրորդ՝ զի կամքն հաւանականէ, վասն որոյ չարն հնարի հաւանեցուցանել զնա արկածից իւրոց և սոյնպէս միաբանեալ չարն ընդ կամացն՝ պատերազմի ընդ բարի բնութիւն:

Հինգերորդ՝ չարն ՚ի ձեռն զգայարանացս պատրէ զանձն և կռուի ընդ բարւոյն, այսինքն զի զգալի բարութիւնս աստէն և այժմէն իսկ բարեաց փոխարէնքն՝ ոչ աստեն և ոչ այժմ, այլ ՚ի հանդերձեալն լինի և յերկինս և զգայարանօքն զայս տեսանէ, որ աստէ և այժմ և զայն ոչ տեսանէ: Վասն որոյ այսմ առաւել հաւատայ զոր տեսանէ:

Վեցերորդ՝ զի չարն ընդ հարկաւոր կիրսն խառնելով զաւելորդութիւն յաղթէ մարդոյն: Վասն որոյ ասէ մարգարէն. **«Փրկեա զիս ՚ի մերձաւորաց իմոց, զի կարեօք հասին ՚ի վերայ իմ»:** Այսինքն, զոր ինչ կարիքէ բնութեանս նոքօք մարտնչին ընդ մեզ մերձաւոր դևքն:

Եօթերորդ՝ զի երբեմն զքաղցրութիւնն Աստուծոյ տան մտա-

ծել և զներողութիւնն և զմեղսն փոքրացուցանեն յաչս գործողին, ասելով թէ այդ փոքր յանցանքդ, զի ա՞րդ յիշուին առ քաղցրութիւնն Աստուծոյ:

Ութերորդ՝ զի երբեմն զբարկութիւնն Աստուծոյ յիշել տան և զփոքր յանցանքն ծանր ցուցանեն մարդոյն, ասելով ընդ միտս, թէ զիա՞րդ լինի քեզ ազատել ի բարկութենէն Աստուծոյ և յարդար իրաւանցն նորայ, վասն որոյ ասէ մարգարէն. **«Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ չիք փրկութիւն նորայ առ Աստուած իւր»:**

Իններորդ՝ զի զբարին ի հանդերձեալն տան ձգել, թէ յորժամ ծերանաս՝ ապաշխարես, և յորժամ հիւանդանաս՝ խոստովանիս, և որ յուսով մեղանչէ, անյոյս կորնչի:

Տասներորդ՝ զի նախ սովորութեամբ կրթեն ի մեղն և այն կրթութիւնն բնութիւն մակաստացական դառնայ, և այլ ոչ կարեն ի սովորական մեղացն դառնալ, զի սովորութիւնն վերակացու լինի որպէս բռնաւոր և միշտ մեղանչել տայ գործողին զինքն: Վասն որոյ ասէ. «Միշտ պատերազմին ընդ մեզ բարին և չարն»: Վասն որոյ ասէ Պօղոս. **«Ոչ թէ զոր կամիմ զբարին զայն գործեմ, այլ ուստի փախչիմ ի չարէն զայն կրեմ»:**

25

Քսանևհինգերորդ հարց. Զի՞նչէ որ ասէ. Զար ուրեմն ոչ ինչ գոյանայ յայսցանէ, բայց միայն չարութիւն:

Պատասխան. Զի նախ կրկին ասաց զբարին, այսինքն նախ զանեղական բարին, որէ Աստուածային բնութիւնն: Երկրորդ՝ զեղական բարին, որ առ եղականս գոյանայ, իսկ չարն յայսցանէ ոչ ունի:

Նախ զի Աստուած գոյէ և անսկիզբն և բարի և անեղական բարի և բաշխող բարութեանց էիցս, իսկ չարն յայսցանէ ոչինչ ունի, զի չարն ոչէ գոյ և ոչ անսկիզբն և ոչ բարի և ոչ անեղական բարի և ոչ բաշխող բարութեանց էիցս, այլ միայն չարութիւնէ: Իսկ ընդդէմ եղական բարոյն: Նախ զի բարին յԱստուծոյ է ստեղծեալ և էութիւն է, և ի բնութեան ունի զգղն և բարի-

է և փառաց հաստատանէ, իսկ չարն ուրեմն ոչ գոյ յայսցանէ, բայց միայն չարութիւն:

Դարձեալ որպէս ի վերոյ ցուցաւ տաս ազգ զանազանութիւն բարւոյ և չարի, և այն տաս կերպիւն ներհակէ չարն բարոյն, վասն որոյ ասէ. Զար ուրեմն ոչ ինչ գոյ յայսցանէ, բայց միայն չարութիւն:

Դարձեալ օրինակաւ, զի որպէս խաւարն ոչ այլ ինչ կարէ ձևանալ, բայց միայն մթին կերպարանս, սոյնպէս և չարն ոչ անմահութիւն և ոչ անապականութիւն կարէ լինել, և ոչ զոր այլ բարեաց մասունքն ունին, բայց միայն մահ և ապականութիւն:

26

Քսանվեցերորդ հարց. Զի՞նչ է, որ ասէ. Ամենայն որ իրաւացի փափագէ ումեք, յարմարեալ ունի զփափագումն, եթէ դիւրաբանութեամբ բաղձայցէ:

Պատասխան. Նախ զայն ասէ, թէ զի՞նչ իրաց փափագէ մարդ, թէ բարոյ թէ չարի յարմարեալ ունի զփափագումն, այսինքն, որոց և ցանկայ յարմարի բնութիւնն ընդ ցանկալիսն: Զոր օրինակ օդն փոփոխի ի հակառակսն, այսինքն՝ ի լոյս և ի խաւար, ի ջերմ և ի ցուրտ: Եվ որպէս ջուրն յո՞ր ծառ որ երթայ ի նոյն պտուղն փոխի, սոյնպէս և մարդն երբեմն ի բարին և երբեմն ի չարն փոփոխի անձն իշխան կամօք:

Դարձեալ ասէ. ամենայն որ իրաւացի փափագէ, յարմարեալ ունի զփափագումն, այսինքն իրաւացին այնէ, յորժամ բարոյն փափագէ, որէ Աստուածայինն, որէ անեղական բարին. և զմեզ պատկերակից արար բարութեան իւրում: Եվ բարին յԱստուծոյ և զբնութիւնս բարիէ ստեղծեալ: Եվ բազում բարութիւնս խոստանայ բարեացն: Վասն որոյ այսէ իրաւացի փափագումն. որ նախատպին մերոյ ցանկամք որոյ զզօրութիւն բարոյն տնկեալէ ի բնութիւնս մեր, և որ այսպէս իրաւացի փափագէ ումեք, յայնժամ յարմարեալ ունի զփափաքումն, այսինքն՝ զի բարի բնութիւնս յօժարի ի բարին, զի բնութենակիցէ բարոյն, այսինքն՝ եղական բարւոյն և

նմանէ անեղական բարոյն: Վասն որոյ ասէ իրաւացի փափագումն, թէ դիւրութեամբ բաղձայցէ: Այսինքն՝ զի բնութիւնս դիւրաւ ցանկայ բարոյն քան չարին բայց կամք մարմնոյսէ՝ որ հետևի չարին՝ և ոչ բնութիւնն:

Դարձեալ դիւրաբանութեամբ բաղձայցէ, այսինքն զի վասն ցանկալոյ բարոյն ամենայն դժուարինք ՝ի դիւրինս փոխին բարէ-սիրին, որպէս կուսութիւն և, մարտիրոսութիւն, և ճգնութիւն և ամենայն խստակրօն վարք դիւրին թուի գործողին: Իսկ անիրաւ փափագումն յորժամ մարդ չարին փափագի, որք զփախչելին փափագելի առնէն և զգազրելին բաղձալի, և զատելին սիրելի:

Դարձեալ անիրաւ փափագումն, զի չարն օտար է ՝ի մեր բնութենէս:

Դարձեալ զի ոչէ ստեղծուած յԱստուծոյ և ոչէ էութիւն և ներհակէ բնութեանս մեր, և մահ և ապականութիւն բերէ, և յանանց տանջանսն մատնէ զունողն, վասն որոյ անիրաւէ, որ այս ամենայն չարեացս փափագէ: Վասն որոյ ասէ ապա ուրեմն յապականացուցանէ չարութիւն:

27

Քսանևեօթներորդ հարց. Զի՞նչէ որ ասէ. Եւ թէ յապականացուցանէ, ապականի և ինքն:

Պատասխան. Որպէս ապականեալ մասն ինչ նիւթոյ՝ յորժամ խառնի յայն ինչ նիւթ, որ պարզէ ըստ բնութեան, ապականէ զնոսին, և ընդ ապականելն զայլսն ապականի և ինքն ընդ նոսին: Այսինքն՝ որպէս հին խմոր, որ զնոր խմորեալն այլ այլէ և ծորէ և ապականէ, և ապականի ինքն ընդ նմայ, և որպէս քացախն որ ապականեալէ ապականէ յորս խառնի, և ապականի և ինքն ընդ նմին: Զի յորժամ զքացախն ՝ի վերայ կրին ածեն քակէ զնա յիւր բնութենէն և ապականէ զչինուածն. և ապականի և ինքն ընդ նմին: Սոյնպէս և չարն յորս մերձի, ապականէ և ապականի ինքն ընդ նմին ՝ի կորնչել ենթակային:

28

Քսանութերորդ հարց. Զի՞նչէ որ ասէ. Թէ և ապականեալն ոչէ անեղ:

Պատասխան. Զի որ ընդ ապականիլն յեղեղմունք կրէ. զիա՞րդ իցէ անեղ:

Դարձեալ զի սատանայ բազում եղելութիւն կրեաց, և ոչ ասի անեղ:

Նախ զի ոչ էից փոփոխեցաւ:

Երկրորդ՝ զի ՝ի բարոյն փոփոխեցաւ ՝ի չարն:

Երրորդ՝ զի չարութեամբն իւրով փոխեաց զայլսն ՝ի չարն:

Զորրորդ՝ զի վասն չարութեան փոփոխի ՝ի տանջանս:

Հինգերորդ՝ զի տաջանօքն այլ այլի յիւր էութենէն:

Վեցերորդ՝ զի այլայլութեամբն ապականի բնութիւնն: Եւ որ զայս ամենայն յեղեղմունս կրեաց, զիա՞րդ իցէ անեղ: Վասն որոյ ասէ ապականեալն ո՛չէ անեղ:

29

Քսանիններորդ հարց. Զի՞նչէ որ ասէ. Եւ եթէ անեղ իցէ ըստ բնութեան, նմա գոյանայ չարագոյն:

Պատասխան. Այսինքն՝ թէ անեղէր, չարութիւնն յայնժամ գոյացութիւն լինէր յառաջ եկեալն ՝ի նմանէ չարն: Եւ յորժամ ցուցաւ թէ չարն ոչէ անեղ, ապա և այլ չարն ՝ի նմանէ յառաջ եկեալ, ոչ ունի էութիւն, այլ պատահումնէ չարն, և պակասութիւն բարւոյ, որպէս խաւարն պակասութիւն լուսոյէ: Այլ ոչ անեղութիւնէ չարն, և ոչ ըստ բնութեան նորա գոյանայ չար գոլն:

Այսինքն՝ զի ոչ սատանայ անեղէ, և ոչ չարն բնութիւն, որ մնացական լինի, այլ որպէս պատահումնէ, որ կորնչի յապականիլ ենթակային:

30

Երեսուներորդ հարց. Զի՞նչէ որ ասէ. Ոչ ոք ըստ բնութեան գործելով մեղանչէ:

Պատասխան. Այսինքն՝ թէ չարն բնութեամբէր յոք, ոչ լինէին ընդ մեղադրութեան պատժօք ունողքն չարին: Այլ զոր բնութիւնն պահանջէ և գործէ զհարկաւորական կիրսն ոչ մեղանչէ, որպէս ուտելն, և ըմպելն, և ննջելն բնութեան կիրք է և ոչ մեղանչումն:

Դարձեալ թէ բնութեամբ էր չարն, ոչ ոք կարէր կուսան լինել. կամ պարկեշտ. զի բնութեան կրից ոչ ոք կարէ յաղթել: Այլ զի բնութիւնս բարիէ՝ ի բարի արարչէն ստեղծեալ, իսկ չարն եկամուտ, վասն որոյ զօտարն՝ ի բնութենէն և զեկամուտն դիւրինէ հանել, որպէս արարին սուրբքն:

31

Երեսունևառաջներորդ հարց. Զի՞նչէ որ ասէ. Զար ուրեմն մեղանչէ:

Պատասխան. Մի ոք կարծիցէ թէ չարն բնութեամբ է՝ ի մեզ. և վասն այն կարծէ անպարտէ զգործողն՝ ասելով բնութեան հարկն տայ մեզ մեղանչել. և գործողն անպարտէ: Այլ ծանիցէ, զի բնութիւնս անմեղէ, և բարի ստեղծեալ: Այլ չարն մեղանչէ, որ օտարէ՝ ի բնութենէս և արկածէ՝ ի մեզ. և որ մեղանչէ ոչ ըստ բնութեան, այլ արտաքոյ բնութեան: Ապա թէ ոչ, վասն է՞ր դատապարտէ Աստուած զմեղաւորն, արդարադատ թագաւորն: Այլ վասն տանջանաց մատնէ զմեղաւորն, զի հակառակ Աստուածադիր բնութեան գործեաց: Ապա յայտէ, թէ չարն ոչէ բնութիւն՝ ի մեզ. և բնութիւնն ոչ մեղանչէ, այլ չարն մեղանչէ:

32

Երեսուներորդևերկրորդ հարց. Զի՞նչէ որ ասէ. Եւ որ ոչն մեղանչէ, ոչէ ընդ բամբասանօք:

Պատասխանի. Այսինքն թէ չարն բնութեամբ էր՝ ի մեզ յայն ժամ որ ոչ մեղանչէր բամբասելոյ լինէր: Թէ հակառակէ բնութեան գործոյն, այլ զի բնութիւնս անմեղէ և բարի, և զբարին տայ գործել մեզ: Վասն որոյ որ ոչն մեղանչէ, ոչէ ընդ բամբասանօք: Այլ այնէ բանբասանօք, որ հակառակ անմեղ բնութեանն իւրոյ գործէ զչարն, որ օտարէ իւրոյ բնութեան: Եւ տես զի և անօրէնք զբարեգործ մարդն գովեն, այսինքն՝ զկուսանան և զճգնաւորսն և զպարկեշտսն:

Եւ դարձեալ զի՝ ի քաղաքական օրէնս պատուհասեն զչարսն և մահու մատնեն, զի հակառակ գործեն բարի բնութեանս: Վասն որոյ ասէ Արիստոտէլ, թէ գովելի են գեղեցիկքն, և պարսաւելի են գարշելիքն: Վասն որոյ ասէ՝ որ ոչն մեղանչէ, ոչէ ընդ բամբասանօք, այլև գովուեաց և պատուոյ են արժանի:

33

Երեսուներորդերրորդ հարց. Զի՞նչէ որ ասէ. Եւ ընդ բանբասանօքէ սատանայ:

Պատասխանի. Այսինքն նախ զի բարի ստեղծաւ յԱստուծոյ և յատոյ չարացաւ:

Երկրորդ՝ զի զհակառակն բնութեան իւրոյ գործեցաւ:

Երրորդ՝ զի հակառակ արարչին իւրոյ եղև:

Չորրորդ՝ զի լոյս էր խաւար եղև:

Հինգերորդ՝ զի զհանգիստն ետ և զանանց չարչարանն ընտրեաց:

Վեցերորդ՝ զի ոչ թէ յայլմէ բռնադատեցաւ չար լինել, այլ կամաւ զչարն ընտրեաց:

Եօթերորդ՝ զի ոչ թէ միայն ինքն կորեաւ, այլ ցանկայ զամենայն ոք ապականել:

Ութերորդ՝ բանական գոլով այնքան անբանեցաւ, որքան զանբան անասունս այլ վատթար դտաւ, զի ամենայն անասունք զօգուտն իւրեանց ընտրեն, իսկ նա զչարչարանս և զկորուստն իւր ընտրեաց: Եվ վասն նոցա ասեն, թէ ոգիք ըմբռնեալք՝ ի մեղս

'ի մտաց և ականին:

Իններորդ՝ զի գիտէ, թէ որքան զայլս 'ի չարիս արկանէ, նոյնքան թուով և իւր չարչարանքն յաւելու յանչէջ հուրն, այլ ջանայ յամենայն օր յաւելուլ 'ի չարչարանս իւր:

Տասներորդ՝ զի զայս ամենայն գիտելով անզեղջէ և անփոչիման 'ի չարէն:

Մեհասաներորդ՝ զի զայսքան ժամանակս թոյլ ետ Աստուած նմա՝ մի թէ զղջացցի, և չէ փոյթ նմայ:

Երկուտասաներորդ՝ զի զայս ամենայն չարիս արարեալ դեռևս քաղցրութեամբ խօսէր ընդ նոսա, և ոչ զղջացան, որպէս յայտ է զի ասէր առ Յոբաւ ընդ սատանայ. **«Եւ դու ուստի գաս»:** Եւ դարձեալ ասէր քաղցրութեամբ. **«Մի՞թէ հայեցար 'ի ծառայն իմ Յոբ»:** Եւ դարձեալ ասէր. **«Տէսէ՞ր զծառայն իմ Յոբ»:** Եւ զայս ամենայն բարութիւն և զքաղցրութիւնս տեսեալ անդարձ մնաց 'ի չարէն իւրմէ:

Երեքտասաներորդ՝ զի տեսին, որ Աստուած լսող լինէր նոցա և ոչ աղաչեցին ազատել զինքեանս 'ի չարեաց իւրեանց: Եվ յայտ է զի լսէր նոցա Աստուած:

Նախ զի յորժամ խնդրեցին յԱստուծոյ տալ զՅոբ 'ի փորձութիւն, լուաւ նոցա և ետ 'ի ձեռս նոցա:

Եւ դարձեալ խնդրէցին այլ նոր փորձութիւնք տալ Յոբայ, այսինքն՝ որդունք և թարախ մարմնոյն, սոյնպէս և լուաւ նոցա, միթէ այն միովն որսայցէ զնոսա 'ի փրկութիւն, և ոչ դարձան անդարձքն 'ի չարիս:

Դարձեալ լինի երրորդ խնդիրք, զի 'ի Քրիստոսէ խնդրեցին, և լուաւ նոցա: Նախ զի աղաչեցին, թէ հրաման տուր մեզ մտանել 'ի խոզքն, և կատարեաց զխնդիրքն:

Երկրորդ՝ զի աղաչեցին զՔրիստոս ասելով. **«Աղաչեմք զքեզ, Յիսուս, Որդի բարձրելոյ, մի յառաջ քան զժամանակն տանջեր զմեզ»:** Եւ կատարեաց զխնդիրն նոցա: Եւ որ այսքան աղաչանաց լսեաց նոցա և թէ այլ իմն մեծագոյն խնդիրս էին խնդրեալ՝ և լսէր նոցա: Եվ յորժամ զայն ամենայն քաղցրութիւնն տեսեալ անզեղջ մնացին, վասն որոյ ասէ. «Ընդ բամբասանօք է սատանայ»:

Յաղագս որոյ ասէր Տէրն. «Որդիք աչխարհիս այսորիկ իմաստնագոյնքեն յազգս իւրեանց քան զորդիս լուսոյ»: Զի բազում մեղաւորք և մաքսաւորք դարձան առ Քրիստոս: Իսկ նոքա որ զայս ամենայն քաղցրութիւնս տեսին և անդարձ մնացին 'ի չարն, վասն որոյ ասէ՝ և ընդ բամբասանօք է սատանայ:

Հարց. Զի՞նչէ որ ասէ. Ով ոք անեղ ստորոգի ճշմարտապէս և ինքն է չար:

Պատասխան. Որ զերկուս սկզբմունքն ասիցէ, եթէ երկու են անեղ՝ մեկ բարին Աստուած և մեկ չարն սատանայ, որպէս Մանիքոս ասաց. նայ ճշմարտապէս ինքնէ չար, որ զայսպիսի չար հերձուածս խօսի:

Եւ դարձեալ որ ասէ. թէ չարն առանց մեր մեղանչելոյ զնա գործելով գոյ չարն 'ի բնութիւնս մեր: Եվ որք մեղանչեն, 'ի բնութեանն հարկէն մեղանչեն, զի բնութիւնս մեղանչականէ: Այնպիսին ինքն է չար ըստ ախորժակաց կամաց իւրոց և ըստ կուրութեան մտաց իւրոց. զի ոգիք ըմբռնեալք 'ի մեղս 'ի մտաց և անկանին: Վասն որոյ ասէ. «Ով ոք անեղ ստորոգէ ճշմարտապէս և ինքն է չար»:

Եւ վասն այսքան պատճառաց ասաց, թէ ամենայն չար տանջելի:

Որոց և զմեզ փրկեսցէ մարդասերն Քրիստոս ի դառն դժոխոց և տանջանաց. ամեն:

Կատարեցաւ քաղուածոյս Սահմանացս գրոցս 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Աւրհնելոյն յաւիտեանս ամէն. եղիցի՛, եղիցի՛:

Փառք ամենասուրբ Երրորդութեանն և միոյ Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

Դավիթ անհաղթ կամ Դավիթ Ներգինացի: Կոչվել է նաև Դավիթ եռամեծ և Անհաղթ Փիլիսոփա: Եղել է Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի առակերտը:

Ենթադրվում է, որ ծնվել է 590 թ. և վախճանվել է 660 թ., Տարոնի գավառի Ներգին գյուղում: Ըստ ավանդության՝ Մովսես Խորենացու քրոջ որդին է և աշակերտը:

Մեր մեծագույն թարգմանիչներից մեկն է: Թարգմանել է իմաստասիրական մի ամբողջ մատենաշար: Ուսանել է Ալեքսանդրիայում: Հելենական ուսմամբ գերազանցել է բոլորին: Իր իմաստասիրությամբ և աստվածասիրությամբ անխտիր փալել է թե՛ հայերի և թե՛ հույների մեջ: Հավասարապես գրել է և՛ հայերեն և՛ հունարեն:

Իր կենդանության օրոք ենթարկվել է հալածանքների, իսկ մահվանից հետո անարգել են նրա հիշատակը և նույնիսկ գերեզմանը:

Վերջին չրջանի որոշ գիտնականների կողմից կասկածի տակ է առնվել նրա հայ և նույնիսկ քրիստոնյա լինելը:

Ներսես Դ Շնորհալի [Կլայեցի] 1102-1173 թ.: Կաթողիկոս Ամենայն Հայոց՝ 1166-1173 թթ.:

Սերում է Պահլավունիների իշխանական տոհմից: Այս ընտանիքից յոթ կաթողիկոսներ են սերել: Դաստիարակությունն ստացել է Տավրոս լեռնելում գտնվող Կարմիր վանքում, Ստեփանոս Մանուկ վարդապետի մոտ:

Նրա եղբայրը՝ Գրիգոր Գ Պահլավունին, 20 տարեկանում կաթողիկոս է օծվել:

18 տարեկանում քահանա է ձեռնադրվում ու իր եղբոր օգնականն ու գործակիցը դառնում: Ապա 30 տարեկանում դարձել է Մամեստայի եպիսկոպոս, բայց մշտապես մնացել է Ծովքի հայրապետանոցում, ապա Հռոմկլայում, ուր հետագայում, 1149 թ., փոխադրվել է կաթողիկոսարանը: Ծերունազարդ Գրիգոր կաթողիկոսն իր ձեռքով կաթողիկոս է օծել 64-ամյա Ներսես եպիսկոպոսին:

Զբաղվել է Հայ և Հույն Եկեղեցիների վիճահարույց հարցերով, որի համար բազմաթիվ ժողովներ է գումարել և երկար թղթակցություններ ունեցել Հունաց կայսեր ու նրա ներկայացուցիչների հետ: Ներսես կաթողիկոսի մահով, 1173 թ., դադարել են այս քննարկումները:

Հեղինակ է բազմաթիվ հոգևոր գրքերի: Հայ եկեղեցու ամենանշանավոր ու սիրելի դեմքերից է: Դասել է Հայ եկեղեցու սրբերի չարքը: Մինչև Հայոց Մեծ Եղեռնը նրա գերեզմանն ուխտատեղի է եղել անգամ օտարների համար:

Առաքել Սյունեցի, քեռորդի և աշակերտ Գրիգոր Տաթևացու, վարդապետ և ապա արքեպիսկոպոս Սյունաց աշխարհի, վանահայր Տաթևի վանքի: Ստացել է նաև Որոտնեցի մականունը:

ԺԵ դարի նշանավոր մատենագիր և տաղասաց: Հիշատակվում է միջնադարի հայ դպրության ամենաականավոր ու երախտաշատ ուսուցիչների չարքում:

1422 թ. հեռացել է Տաթևի վանքի վանահայրությունից ու Սյունաց Աթոռից և անգեղակոթում զբաղվել մատենագրությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5
Նախերգանք Դավիթ Անհաղթի Սահմանումների գրքի մասին 8
Ներսես Հայոց Կաթողիկոսի խոսքը 9
Առաքել Սյունյաց եպիսկոպոսի խոսքի տեսությունը 11
Ի՞նչը հարկադրեց փիլիսոփային գրել այս 13
Ի՞նչ է բարին, կամ ի՞նչ է չարը 15
Ո՞րն է չարության պատճառը 16
Ինչո՞ւ Աստված թույլ տվեց, որ չարը լինի 18
Ամբողջ չարը տանջանքի ենթակա է 21
Ոչ մի տանջված անապական չէ 22
Անեղն ապականելի չէ 23
Չարն ապականելի է 23
Չարն անեղ չէ 24
Ոչ ոք բնությամբ չար չէ 24
Չարագործություն է ոչ ոքի գոյության չձեռնարկելը 28
Միմյանց դիմակայող բոլոր չարերը միմյանց ապականիչ են 29
Անեղ ոչինչ փոփոխելի չէ 30
Բարին անեղ չէ 30
Անեղը որևէ մեկի ապականությունը ցանկացող չէ 31
Չարն անեղ չէ 33
Աստվածաշունչը տանջանքների է մատնում չարերին 33
Տանջանքների ամեն մատնված այլայլելի է..... 39
Անեղ ոչ ոքի չի այլայլվում 39
Չարից ոչինչ անեղ չէ 40
Ովքեր բոլորովին ընդդիմանում են 41
Ինչ որ մեկի մեջ գոյացել է, մյուսի մեջ չի գոյանում 41
Անեղ լինելով՝ բարությունը գոյացյալ է 42
Եթե չար են, ապա սրանից ոչինչ չի գոյանա՝ բացի չարությունից 47
Ամեն ոք, իրավացիորեն փափագում է 48
Եթե ապականում է, ապա ինքն էլ է ապականվում 49
Ապականվածն էլ անեղ չէ 50
Եթե չարությունն անեղ լիներ 51
Բնությամբ ոչ ոք չի մեղանչում 51
Չարը մեղանչում է 52
Ով չի մեղանչում, բամբասանքի ենթակա չէ 53
Սատանան բամբասանքի ենթակա է 53
Դավիթ Անհաղթի Իմաստասիրական սահմանումները 58
«Ամենայն չար տանջելի» -ի գրաբար բնագիրը 60
Դավիթ Անհաղթ 92
Ներսես Շնորհալի 91
Առաքել Սյունեցի 92

Թարգմանությունը և ընդհանուր խմբագրությունը՝
Արամ Դիլանյանի
Խմբագիր՝ *Գրիգոր Դարբինյան*
Սրբագրիչ՝ *Վոլոդյա Աբրահամյան*

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի Հրատարակչություն

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ՏՊԱՐԱՆ

- -

- -